

ՊԵՏՐՈՍ ՄՈՎՍԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆ

ԱՂԹԱՄԱՐԻ ԹԱԳԱԻՈՐԸ



ՍՄԲԱՏ ԱՐԾՐՈՒՆԻ
ՍԵՖԵԴԻՆԵԱՆ

9(47.928)

78-79

h2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԵՏՐՈՍ ՍՈՎՍԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆ

ԱՂԹԱՄԱՐԻ ԹԱԳԱԻՈՐԸ՝

ՍՄԲԱՏ ԱՐԾՐՈՒՆԻ – ՄԵՖԵԴԻՆԵԱՆ
(1465-1471)

ՀԱՅՈՑ ՎԵՐՋԻՆ ԱՐՔԱՅ

ՄԵՍՐՈՊ ԱՐԶ. ԱՇԵԱՆ



ARCH. MESROB ASHJIAN

ՄԱՏԵՆԱԾԱՐ

BOOK SERIES

222

222

ԵՐԵՒԱՆ

Հեղինակային հրատարակություն

2022



Թովմասեան Պետրոս Մովսէսի

Թ 794

Աղթամարի Թագաւորը՝ Սմբատ Արծրունի-Սեֆեդիւնեան / Պ. Մ. Թովմասեան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, 2022.-

142 էջ:

Առ այսօր՝ մեր պատմութեան մէջ բազմաթիւ են չմէկնաբանուած էջերը. այդ էջերէն մէկն է Արեւմտեան Հայաստանի՝ Վանայ լիճի Աղթամար կղզիին մէջ 1465թ. տեղի ունեցած պատմաքաղաքական զարգացումները, երբ Սմբատ Արծրունի-Սեֆեդիւնեան օծուեցաւ թագաւոր: Այդպիսով, հիմնուեցաւ հայկական կարճատեւ թագաւորութիւն մը, եւ Սմբատ Արծրունին եղաւ Հայոց վերջին արքան...:

Այսօր, Աղթամար կղզի այցելելով, մեր կարկառուն պատմիչ Առաքել Դավրիժեցիի կոչած «Աստուածաբնակ Աղթամար կղզի», հայ անհատը պիտի յիշէ, որ կղզին՝ իր Ս. Խաչ հռչակերտ եկեղեցիով եղած է, ոչ միայն երկար դարեր շարունակ կաթողիկոսական արքոքի մը նստատեղին, այլեւ փոքրիկ մայրաքաղաքը հայկական կարճատեւ՝ եօթ տարիներու տեւողութեամբ թագաւորութեան: Պատմաքաղաքական այս փորձը ունեցաւ իր զգալի արձագանգները իրարայաջորդ հայ ազատագրական շարժումներուն վրայ:

Անգամ մը եւս, Հայոց Պատմութեան բազմաթիւ խոպան դաշտերէն մէկուն մէջ քալելով կը փորձենք չբացուած եւ չլուսաբանուած կարեւոր էջ մը բանալ եւ հրամցնել մեր սիրելի ազգակիցներուն. մանաւանդ որ ներկայիս նման ուսումնասիրութիւն մը չունինք, ինչ որ մեծ խթան հանդիսացաւ այս աշխատանքը կատարելու:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(52)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

Ինչպէս միշտ, նախ եւ առաջ շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսքս կ'ուղղեմ Աստուծոյ՝ իր ընծայած բարիքներուն, առիթներուն եւ շնորհքին: Առաջնորդուելով Յիսուս Քրիստոսի հետեւեալ խօսքով, «Վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ'առնէ, եւ ով որ կը փնտռէ կը գտնէ, եւ ով որ դուռը կը զարնէ՝ պիտի բացուի անոր»։ խօսք մը, որ հանդիսացաւ կեանքիս եւ գործերուս հիմքը, եւ որուն վրայ հիմնուեցայ միշտ:

Երախտագիտութեան խօսքս ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի տնօրէն ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանին, որ իր աջակցութիւնը ցուցաբերեց այս գիրքի հրատարակութեան, ինչպէս եւ Մեսրոպ Մաշտոցի անուան ազգային մատենադարանի տնօրէն Վահան Տէր-Ղեւոնդեանին: Երախտագիտութեան խօսքս պատմաբան Վրէժ Վարդանեանին, որ իր խորհուրդներով շատ օգտակար եղաւ այս աշխատանքին:

Շնորհակալութեան խօսքս նաեւ կեանքիս սիրելի ընկերուհիիս՝ հրաշալի տիկնոջս՝ Հրաչուհի Թովմասեանին (դոկտ. Հրաչուհի Պողոսեան), իր մշտական քաջալերանքին...:

Պետրոս Մովսէս Թովմասեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբան.....	7
----------------	---

Ա. ԳԼՈՒԽ ՆԱԽԱՍՈՒՏՔ

1. Աղթամար Կղզին.....	9
2. Աղթամարը Ռշտունիներու Կեդրոն.....	12
3. Արծրունիները.....	14
4. Արծրունեաց Հարստութեան Հիմնադրութիւնը 908թ.....	17
5. Աղթամարը Կաթողիկոսանիստ Քաղաք.....	22
6. Խեղենիկեան Իշխանութիւնը Եւ Աղթամարի Կաթողիկոսական Աթոռի Հիմնադրութիւնը 1113թ.....	25
7. Կարա-Կոյունլուներու Պատմաշրջանը.....	30
8. Հայոց Հայրապետական Աթոռի Հաստատումը Ս. Էջմիածինի Մէջ 1441թ.	33

Բ. ԳԼՈՒԽ ՍՄԲԱՏ ԱՐԾՐՈՒՆԻ-ՍԵՖԵՂԻՆԵԱՆ ԱՂԹԱՄԱՐԻ ԹԱԳԱՒՈՐ

9. Հայկական Պետականութեան Հիմնադրման Գաղափարն ու Հիմքերը.....	37
10. Ջաքարիա Գ. Դիւանագիտական եւ Քաղաքական Յաջողակ Գործիչ.....	40
11. Ջաքարիա Գ. Ամենայն Հայոց Կաթողիկոս.....	44
12. Ջաքարիա Գ. Եւ Ջահանշահ Բարեկամներ.....	48
13. Կաթողիկոսական Աթոռներու Միացումը Նախաքայլ Ապագայ Ծրագիրներու.....	50
14. Ջաքարիա Գ-ի Դիրքի Հզօրացումը.....	52
15. Ջաքարիա Գ. Էջմիածինէն կը հեռանայ Աղթամար.....	54
16. 1463-1464 Թուականներու Բանակցութիւնները եւ Ջաքարիա Գ-ի Անակնկալ Մահը.....	59
17. Ստեփանոս Դ. Տղայ (1464-1489) Կաթողիկոսի Ջանքերը.....	63
Յուցակ Թիւ 1 Սմբատ Թագաւորի Ծնողքը.....	64
18. Սմբատ Արծրունի Սեֆեղիւնեանի Թագաւորական Օծումը.....	65
19. Իշխանութենէն Կաթողիկոսութիւն, եւ Կաթողիկոսութենէն Թագաւորութիւն	69

20. Ջահանշահի Դիրքը Թագաւորական Օծումէն.....	74
21. Ներքին Մրցակցութեան Դերը Թագաւորական Օծման Մէջ.....	76
22. Արտաքին Իրավիճակը Թագաւորութեան Հիմնադրման Ժամանակաշրջանին.....	79
23. Աղթամարի Թագաւորութեան Տարածքը.....	81
Յուցակ Թիւ 2 Աղթամարի Տարածքը	83
24. Սմբատ Արծրունի Թագաւորը Ձեռագիրներու Մէջ.....	87
25. Աղթամարի Թագաւորութիւնը Սմբատ Արծրունիի Օրով.....	90
26. Ջահանշահի Սպանութիւնը 1467թ., Եւ Կարա-Կոյունլուներու Պետութեան Փլուզումը.....	94
27. Վերջին Յիշատակութիւնները Սմբատ Արծրունի Սեֆեղիւնեան Թագաւորի Մասին.....	97
28. Հիմնադրուած Թագաւորութեան Արժէքը.....	100
29. Վասպուրականը Հայ Ազատագրութեան Գաղափարախօսութեան Հնոց.....	103

Գ. ԳԼՈՒԽ ԱՂԹԱՄԱՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ

30. Սմբատ Արծրունի Սեֆեղիւնեան Թագաւորի Սերունդը.....	107
Յուցակ Թիւ 3 Սմբատ Թագաւորի Ընտանիքը.....	107
31. Ներսէս Եպիսկոպոսի 1472 թ. Գրուած Ձեռագիրը.....	109
Պատկեր Թիւ 1 Սմբատ Թագաւորի օծումը.....	110
32. Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջի Վերադարձը Ս. Էջմիածին 1476թ.....	111
33. Վասպուրականը Եւ Աղթամարը Ստեփանոս Դ-ի Տարիներուն՝ Աղթամարի Թագաւորութեան Անկումէն Ետք.....	114
34. Աղթամարը՝ Թուրքմէն (Կարա Եւ Ակ)-Կոյունլուներու Պատմաշրջաններուն.....	115
35. Աղթամար Կղզին Ապաստարան Իսմայիլ Սեֆեան Շահին.....	117
36. Աղթամարի Թագաւորութեան Արձագանգները	119
Եզրակացում	123
Ցանկ Օգտագործուած Գրականութեան.....	126
Անձնանուններ եւ Ցատուկ Անուններ.....	130
Տեղանուններ.....	134
Ցեղեր, Ժողովուրդներ.....	137

Գծացուցակ Թիւ 1 – Թագաւորութիւնները եւ Պետութիւնները
Յիշեալ Ժամանակաշրջանին
Գծացուցակ Թիւ 2 – Ժամանակակից Կարեւոր Դէմքեր
Գծացուցակ Թիւ 3 – Պատամական Կարեւոր Թուականները
Գծացուցակ Թիւ 4 – Սմբատ Արծրունի Թագաւորի
Գահակալութեան Եօթ Տարիները
Քարտէս-Ռշտունիք

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Դարերուն ընթացքին Աղթամար կղզին եղաւ Հայ ինքնու-
թիւնը պահող եւ պաշտպանող կարեւոր բերդ մը, իր կրօնական,
մշակութային եւ պատմաքաղաքական դարաւոր պատմութեամբ:

Այս գիրքը կը ներկայացնէ Աղթամար կղզին մէջ հիմ-
նադրուած հայկական կարճատեւ թագաւորութեան մը պատմու-
թիւնը, եւ Հայոց վերջին արքայ՝ Սմբատ Արծրունի-Սեֆեդիւնեանի
պատմութիւնը, որուն անունն ու կենսագրութիւնը անյայտ է հայ
ազգի զաւակներուն մեծամասնութեան համար:

Աւելի ճիշդ կը գտնեմ ստեղծուած թագաւորութիւնը կոչել
“Աղթամարի Արծրունեաց Թագաւորութիւն”, այդպէս, պատմա-
կանօրէն շեշտած կ’ըլլանք Վանայ լիճի Աղթամար կղզին դերը
մեր պատմութեան մէջ. եւ հիմնուած թագաւորութիւնը զանազա-
նելով 10-րդ դարու Վասպուրականի Արծրունեաց թագաւորութե-
նէն: Աղթամարի թագաւորութեան հիմնադրման ճարտարապետը
Զաքարիա Գ. կը ներկայանայ հերթականօրէն, որպէս Աղթամարի
կաթողիկոսութեան 11-րդ կաթողիկոսը: Մեր կարծիքով ան կը
հանդիսանայ միջին դարերուն՝ Հայ ազատագրական շարժման
ռահվիրան: Անուն մը, որ հանրահռչակ չէ ինչպէս՝ Իսրայէլ Օրին
եւ Յովսէփ Էմինը, հակառակ անոր, որ ան նոյն երազանքով
յիշեալ երկուքէն դարեր առաջ ապրած ու գործած է:

Դժբախտաբար մեր ժողովուրդի զաւակներէն շատերը
տեղեակ չեն, որ Վանայ լիճը ներկայիս ունի 4 կղզիներ. անոնցմէ
հանրածանօթը միայն Աղթամարն է: Մեր կարծիքով, հիմնական
պատճառը այն է, որ մեր մշակութային գործունէութեան մէջ, շատ
քիչ յիշատակութիւններ կան Վանայ լիճի միւս 3 կղզիներու մա-
սին, Լիմ, Կտուց եւ Առտէր. հակառակ այն իրականութեան, որ
յիշեալ երեք կղզիներուն մէջ հիմնուած են հայկական վանքեր,
որոնք իրենց գործունէութեամբ կարեւոր դեր ունեցած են տա-
րածքաշրջանի հայութեան ազգային եւ մշակութային պատմու-
թեան մէջ: Մեր ազգի զաւակներու անտեղեակութիւնը այս
ճշմարտութեան՝ մեր ազգային մտաւոր գործունէութեան մեծ
բացթողումներէն մէկն է:

Այս ուսումնասիրությունը պիտի նպաստե քննաբար լուսաբանելու մեզի հետաքրքրող Արեւմտեան Հայաստանի՝ Աղթամար կղզիին պատմամշակութային եւ պատմաքաղաքական դերը հայ ազգի պատմութեան մէջ:

Այս գիրքին նպատակներէն մէկն է, հայ անհատին տեղեկացնել, յիշեցնել, թէ Աղթամար կղզին, ուր մեր օրերուն գրօսաշրջիկները՝ հայ կամ օտար, կ'այցելեն անոր Ս. Խաչ եկեղեցին տեսնելու, եւ հիանալու հայ ճարտարապետութեան այդ գլուխ գործոցով, որ մօտաւորապէս ութ դարեր շարունակ 1113-1896թ. եղած է հայկական կաթողիկոսական աթոռի մը կեդրոնը: Աւելին, անոնք պիտի յիշեն, որ Աղթամար կղզին, իր անցեալի հայկական փոքր Արմէնիկ յիշուած քաղաքով, եղած է մայրաքաղաքը հայկական փոքրիկ եւ կարճատեւ թագաւորութեան մը, որ իր կարճատեւ գոյութեամբ այդ մութ դարերուն օրինակ եղաւ երեք դար ետք իրարայաջորդ հայ ազատագրական շարժումներուն:

Այս գիրքը կը բաղկանայ երեք «Գլուխ»-ներէ, որոնք ժամանակագրականօրէն իրարու կը յաջորդեն:

Գլուխները բաժնուած են «Բաժին»-ներու. իւրաքանչիւրը ունի իր վերնագիրը, որ հաստատուած է կարեւոր հարցի մը կամ դէպքի մը վրայ: Բաժինները կ'ընդգրկեն «Ցուցակ»-ներ, որոնք պատրաստուած են մեր կողմէ կարեւոր տեղեկութիւնները աւելի ըմբռնելի եւ մատչելի դարձնելու նպատակով: Մէջբերումները քաղուած են տարբեր սկզբաղբիւրներէ, ձեռագիրներէ եւ ուսումնասիրութիւններէ, որոնց ցանկը յիշուած է գիրքի վերջաւորութեան:

Այս գիրքին մէջ եւս, ի գործ դրինք մեր բուն մասնագիտական կոչումը եւ երկրաչափական գիտելիքներու պաշարը շօշափուած նիւթերը աւելի յստակ, հետաքրքիր եւ մատչելի կերպով ներկայացնելու համար: Պատարասեցինք գունաւոր գծացուցակներ, որոնք զետեղուած են գիրքի վերջաւորութեան. որ կ'արժեւորեն մեր ուսումնասիրութիւնը:

2020 եւ 2021 տարիներուն՝ Քորոնա ժահրի սաստկացման դժուար օրերուն. մանրակրկիտ ուսումնասիրութեամբ եւ կեդրոնացած աշխատանքէ ետք, սոյն գիրքը սիրելի ընթերցողին կը հրամցուի...:

Ա. ԳԼՈՒԽ

ՆԱԽԱՍՈՒՏՔ

Այս Գլուխը շատ անհրաժեշտ կը տեսնենք յարգելի ընթերցողին պատրաստելու մեր բուն նիւթի պատմաշրջանին մօտենալու համար:

1. Աղթամար Կղզին

Աղթամարը Վանայ լիճի ներկայի չորս կղզիներէն երկրորդ մեծ կղզին է Լիմ կղզիէն ետք: Աղթամարի մակերեսն է 0.7 քառ. քմ. (0.27 քառ. մղոն), երկարութիւնը 0.7 քմ. (0.43 մղոն) եւ լայնքը 0.6 քմ. (0.37 մղոն): Կը գտնուի Լիճի ափէն 3-3.5 քմ. հեռաւորութեան վրայ: Աղթամարի ափերու ընդհանուր երկարութիւնը 4.0 քմ. (2.4 մղոն) է: Կղզին ծովի մակերեսէն 1662-1912 մ. բարձրութեան վրայ է: Արեւելեան մասերը 80 մ. բարձր են լիճէն, ամենաբարձր կէտը ծովի մակերեսէն 1912 մ. (6273 ոտք) է: Յիշուած բոլոր տեղեկութիւնները Աղթամար կղզիի վերջին դարու տուեալներն են:

Աղթամար կղզիի տարածութիւնը ներկայիս աւելի փոքր է, որովհետեւ Վանայ լիճի ջուրի մակերեսը բարձրացման մէջ է, այդպէս եղած է դարերուն ընթացքին: Ջուրի մակերեսի տուեալներէն զիտենք, որ 2 մ. բարձրացած է վերջին 64 տարիներու ընթացքին:

Աղթամարի հարաւային եւ հարաւ-արեւմտեան ափերը ժայռոտ են, երբեմն՝ զառիթափ, լիճի մակարդակէն 200-250 մ. բարձրութեամբ: Կղզիին արեւելեան մասերը կը ցածրանան ու կը դառնան տափարակ հարթութիւն: Կղզին ծածկուած է թութերով եւ նշենիներով. ներկայիս ան գուրկ է քաղցրահամ ջուրի աղբիւրներէ:

Աղթամար կղզիին վրայ գտնուած հնութիւնները կը վկայեն, որ կղզին բնակեցուած էր նոյնիսկ Հայոց պատմութեան

Ուրարտական պատմաշրջանին առաջ, «Աղթամար կղզին, շնորհիւ իր բարենպաստ աշխարհագրական դիրքի, հնագոյն ժամանակներից արդէն ծառայել էր որպէս յուսալի ապաստարան, եւ այն ամրոց էր արդէն անյիշելի ժամանակներից: Այդ են վկայում կղզու հիւսիս-արեւմտեան մասում պահպանուած կիկլոպեան որմածքի մնացորդները, հսկայ ժայռաբեկորներից շարուած անշաղախ պատերի հատուածները, որոնք անվերապահօրէն թուագրում են նախաուրարտական շրջանով»:¹

Աղթամար կղզին իր առանձնայատուկ ներկայութիւնը ունեցած է Ուրարտուի պատմութեան ընթացքին. համաձայն տեղեկութիւններուն, Ուրարտուի պատմաշրջանին ամրոց մը գոյութիւն ունեցած է կղզիին վրայ:

Ընդհանուր կարծիք կայ, որ Աղթամար կղզիի անուանումը ծագած է հին հայկական հեքիաթի հերոսուհի Թամարի անունէն. ըստ որուն կղզիի անունը առնչուած է ներկայ «Աղթամար» անուան արտասանութեան հետ, որ կղզիին անունը կը կապէ «Ա իս Թամար» արտայայտութեան հետ, որուն մասին Ամենայն Հայոց Բանաստեղծ Յովհաննէս Թումանեան գրած է իր նշանաւոր «Աղթամար» Բանաստեղծութիւնը: Լիճի ալիքներուն մէջ խեղդող տղան չհասաւ իր սիրած աղջկան՝ Թամարին, եւ իր շուրթերուն սառեցան Ա իս-Թամար բառերը:

Ըստ Մարտիրոս Գալուքճեանի Աղթամար կղզիի անունը առնչութիւն ունի Ուրարտուի արքաներէն Լուտիբբիի հետ. ան կը յիշէ, թէ Ուրարտուի արքաները ունեցած են իրենց անունը կրող բնակավայրեր, օրինակ Արգիշտին՝ Արգիշտիխինիլին, Մենուան՝ Մենուախինիլին, Սարգուրին՝ Սարգուրիխուդան, Ռուսան՝ Ռուսախինիլին եւ այլն: Ան իր միտքը այսպէս կը բացատրէ. ինչպէս գիտենք հայերէնի մէջ հին ժամանակներուն Լ-ն փոխուած է Ղ-ի. օրինակ՝ Ալեքսանդր-Աղեքսանդր, Լազար-Ղազար եւ այլն: Նմա-

¹ Ստեփան Մնացականեան, Աղթամար, էջ 22:

նապէս Բ-ն փոխուած է Մ-ի. օրինակ՝ Նեբրովթ-Նեմրութ, Սինխարիբ-Սենեքերիմ, Բուրադու-Մուրադ եւ այլն:²

Այսպէս ըստ Մարտիրոս Գալուքճեանի «Լու-տիբբի» դարձած է «Աղ-տիբբի», ապա «Աղ-թաբար», եւ վերջապէս «Աղ-թամար»:

Ան անհաւանական չի համարեր, որ Լուտիբբին՝ Ուրարտուի երկրորդ արքան (844-835 Ք.Ա.), Աղթամար կղզիի մէջ իր անունով կառուցած ըլլայ բնակավայր-ամրոց. ու կ'աւելցնէ, «Գուցէ Աղթամարի տաճարը յետագայում կառուցուած է հենց Լուտիբբիի կառուցած մեհեանի հիմքի վրայ կամ տեղում: Հաւանական է, որ Գագիկ Արծրունիի շինարարութիւնների համար կարող են օգտագործած լինել ուրարտական շինութիւնների աւերակների պատրաստի քարերը»:³ Ինչպէս գիտենք բազմաթիւ հայկական եկեղեցիներ կառուցուած են նախաքրիստոնէական մեհեաններու վրայ:

Մեր պրպտումներուն մէջ հանդիպեցանք նաեւ հետեւեալ տեղեկութեան, «Հնագոյն ժամանակներում Աղթամար կղզին կոչւում էր Այիդու»:⁴ Դժբախտաբար որեւէ այլ բացատրութեան չհանդիպեցանք այս անուանակոչութեան իմաստին կամ ծագման մասին:

Անցեալ դարուն՝ Հայոց ցեղասպանութիւնը իրագործելէ ետք, եղեռնագործ թրքական իշխանութիւնները անցան իրենց գրաւուած հազարաւոր հայկական քաղաքներուն եւ գիւղերուն անուններու թրքացման, իրենց իրագործած ոճրագործութիւնը ծածկելու՝ հրէշային գործին. երբ հերթը հասաւ Աղթամար կղզիին անոնք թրքերէն «Ազ» եւ «Դամար» բառերէն օգտուեցան եւ Աղթամարը փոխեցին Ազդամարի, «Akdamar», որ թրքերէնով կը նշանակէ սպիտակ երակ:

² Մարտիրոս Գալուքճեան, Ուսումնասիրութիւններ Հայոց Հնագոյն Պատմութեան, էջ 119, 120:

³ Մարտիրոս Գալուքճեան, նոյնը, 120:

⁴ Յակոբեան Թ. Խ., Մելիք-Բախշեան Ստ. Տ., Բարսեղեան Հ. Խ., Հայաստանի եւ Հարակից Շրջանների Տեղանունների Բառարան, հ. 1 էջ 230:

Այստեղ, մենք կը տեսնենք Աստուծոյ գործօնը, երբ պատահեցաւ թրքերէն կոչումը, որ շատ չի տարբերեցաւ բուն հայկական կոչումէն. կը հաւատանք, որ Աղթամար կղզին իր սրբութիւնը ունէր, մանաւանդ, որ ան իր մէջ ընդգրկեց կաթողիկոսական աթոռը, որ գոյատեւեց երկար ժամանակ 1113-1895թ.: Յիշենք նաեւ, որ Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը եւս 927թ. տեղափոխուեցաւ Աղթամար, ու մնաց այնտեղ մինչեւ Կարս տեղափոխուիլը 948թ.:

Այս առնչութեամբ Տիրոջ գործօնը կը տեսնենք նաեւ այն ժամանակ, երբ 1951թ., կրկին անգամ եղեռնագործութիւնը շարունակող թրքական իշխանութիւնները, որոշեցին պայթեցնել Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, բայց ան հրաշքով փրկուեցաւ...:

Եւս Տիրոջ գործօնը կարելի է տեսնել, երբ թրքական իշխանութիւնները 2005թ. որոշեցին նորոգել Ս. Խաչը, ապա 29 Մարտ 2007թ., զայն որպէս թանգարան հրամցուցին մարդկութեան. աւելին 11 Սեպտ. 2011թ. ստիպուեցան արտօնել, որ տեղի ունենար հայկական Ս. պատարագ «Տօն Վերացման Սրբոյ Խաչին» օրը:

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ հետ կրկնող այս «բախտաւորութիւնները» կարելի չէ բացատրել, այլ կերպ, եթէ ոչ Տիրոջ գործօնը:

2. Աղթամարը Ռշտունիներու Կեդրոն

Ռշտունիները հայոց պատմութեան մէջ շատ հին ժամանակներէն գոյութիւն ունեցող նախարարական կարեւոր տուններէն մէկն էին. կը համագործակցէին իրենց հարեւան Արծրունիներուն հետ:

Ռշտունիներու ժառանգական հայրենիքն էր Վասպուրականի Ռշտունիք գաւառը, եւ աւելի ուշ Տոսպ գաւառը Վան քաղաքով: Այս գաւառին մասին մեջբերենք Թ. Խ. Յակոբեանէն հետեւեալը, «Ռշտունիք կամ Ըորշտունիք: Ռշտունիք անունը Ուրարտու անուան հայկական ձեւն է: Այս լեռնային գեղատեսիլ գաւառը տարածուում էր Վանայ լճի հարաւային առափնեայ շրջաններում նրա եւ Հայկական Տաւրոսի ջրբաժան բարձրութիւնների միջեւ: Ռշտունիքի մէջ էր մտնում Աղթամար կղզին,

որը գտնուում է լճի հարաւային ափի մօտ: Երկրի մի զգալի մասը պատած է սաղարթաւոր անտառներով: Ունի բերրի հող եւ նպաստաւոր կլիմայական պայմաններ գիւղատնտեսութեան, յատկապէս այգեգործութեան զարգացման համար»:⁵ Ռշտունիք անունը Ուրարտու (Ուրաշտու) անուան մէկ ձեւն է: Այս գաւառին մէջ կը գտնուէին Նարեկ գիւղը եւ հոչակաւոր Նարեկայ վանքը:

Ռշտունիներու ծագման մասին կարծիքներէն մէկն այն է, որ այս տոհմը ծագած է Ուրարտուի Ռուշաս (Ռուսա) (735-713 Ք.Ա.) թագաւորէն:⁶

Մովսէս Խորենացին խօսելով Մեծն Տիգրան արքայի մասին՝ գրած է Ռշտունեաց նախարարութեան նահապետ Բարգաւիւրանի մասին, «Ապա Տիգրանը Ռշտունեաց նախարարութեան նահապետ Բարգաւիւրանին սպարապետ նշանակելով հայոց եւ պարսից զօրքերին՝ ուղարկում է հռոմայեցիների զօրքերի դէմ եւ հրաման է տալիս՝ Ասորիքի ու Պաղեստինի բնակիչներին հաշտութեան բերել եւ խաղաղեցնել»:⁷ Այսպէս, յստակ է, որ Ռշտունիները Ք. Ա. առաջին դարուն կարեւոր դեր ունեցած են մեր պատմութեան մէջ:

Ըստ պատմահայր Մովսէս Խորենացիի Աղթամարը 4-րդ դարուն եղած է Ռշտունի նախարարներու ամրոցը: Տիրան Արշակունիի (338-350) ժամանակ, Աղթամարի մէջ բերդ կար, որ Ռշտունիներու ամրոցն էր, եւ ըստ Մովսէս Խորենացիի ամուր բերդ էր: Տիրան թագաւորը զայն գրաւեց, եւ պատժեց Ռշտունիներու Զորա նահապետին, «Տիրանն այս տեսնելով, խիստ զարհուրում է եւ Հայր կոչուած մարդպետին ուղարկում է Զորայի մօտ, երդում նրան իր մօտ է կանչում: Նրա զօրքը տեսնելով, որ բոլոր նախարարները լուռ են մնացել, մեր ազգին յատուկ անհամբերութեամբ ցրուեցին, իւրաքանչիւրը գնաց իր տունը: Զորան մենակ մնալով ակամայից գալիս է թագաւորի մօտ: Նրան բռնելով՝ թա-

⁵ Թ. Խ. Յակոբեան, Հայաստանի Պատմական Աշխարհագրութիւն, էջ 180, 181:

⁶ Վահան Վ. Ինզլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի Մէջ, էջ 166:

⁷ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, 2 Գիրք, ԺԹ:

գաւորը գրաւում է նրանց ամուր բերդ Աղթամարը եւ բոլորին կոտորում սպառում է...»⁸

Ռշտունիները երկար ժամանակ վարած են Հայաստանի հարաւային զօրաբանակի սպարապետութիւնը: Ռշտունիներու վերջին կարեւոր մեծ դէմքը եղաւ Թէոդորոս Ռշտունին՝ 7-րդ դարուն, որ օգտուեցաւ քաղաքական պատեհ առիթէն՝ երբ Սասանեանները կենաց մահու պատերազմ կը մղէին Արաբներուն դէմ, իսկ Բիւզանդացիները Սուրիան կորսնցնելով զբաղուած էին իրենց ուժերը հաւաքելով՝ շարունակելու պայքարը այս նոր աշխարհակալ նուաճողներուն դէմ: Թէոդորոս Ռշտունին 639թ. Հայաստանի արեւմտեան (բիւզանդական) մասը միացուց Հայաստանի արեւելեան (սասանեան) մասին: Այսպէս Հայաստանի առաջին բաժանումէն ետք 387թ. Սասանեաններու եւ Բիւզանդացիներու միջեւ, տեղի ունեցաւ Հայաստանի վերամիացումը 252 տարի ետք, 639թ.: Միացեալ Հայաստանը գրեթէ անկախ էր, մայրաքաղաք ունենալով Դուին քաղաքը. իսկ Թէոդորոս Ռշտունիի կեդրոնատեղին էր Վանայ լիճի Աղթամար կղզին: Թէոդորոս Ռշտունին Աղթամար կղզին դարձուց իր յենակետը Արաբներուն դէմ իր մղած պայքարի ժամանակ: Տասնեակ տարիէ աւելի Արաբներուն դէմ պատերազմելէ ետք՝ Թէոդորոս Ռշտունին դիւանագիտական հմտութեամբ՝ յաջողեցաւ Արաբներուն հետ նպաստաւոր հաշտութեան պայմանագիր մը կնքել:

Արաբական տիրապետութեան յաջորդ երկու դարերուն ընթացքին՝ Ռշտունիները տկարացան, ի հետեւանք իրենց մղած մշտական պատերազմներուն, եւ գերադասեցին համագործակցիլ Արծրունիներուն հետ, անոնց զիջելով իրենց հողերը:

3. Արծրունիները

Արծրունիները հայոց պատմութեան մէջ շատ հին ժամանակներէն գոյութիւն ունեցող նախարարական կարեւոր տուններէն էին. անոնց հետ առնչուած է այս գիրքին հիմնական նիւթը,

⁸ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, 3 Գիրք, ԺԵ:

երբ 1465թ. Աղթամարի մէջ Սմբատ Արծրունի-Սեֆեդինեանը թագաւոր օծուեցաւ:

Ըստ Մարտիրոս Գալուքճեանի Արծրունի անուան ծագումը Ուրարտական է, «Վանայ լիճից արեւելք ընկած շրջանի հայկական նախարարութեան **Արծրունի** անունը գալիս է ուրարտական արձանագրութիւնների մէջ յիշուած **Արծունիունի** անուանաձեւից, որը եղել է Արճակ լիճի հարաւային ծայրի մօտ գտնուած մի քաղաքի (ու նրա շուրջ ապրած մի նայիրեան ցեղի) անունը: Ուրարտական արձանագրութիւնների լեզուով **ծուէ** (**ծուինի**) նշանակում է «լիճ»: (Հաւանաբար սրա հետ է կապուած հայ **ծով** բառը), որով **Արծունի-ունի** նշանակում էր «Ար-լճեցի-ներ» եւ կամ «Ար-լի-երկիր»: Կարելի է մտածել, թէ այս քաղաքը կոչուած է եղել **Արճակ լիճ** անունով: Հետեւաբար հնարաւոր է ենթադրել, թէ **Արճակ** եզրը առաջացել է **Ար-ծուէ** (Ար-լիճ) անուան վրայ ալ մասնիկի աւելցումով, այսինքն «**Ար-ծուէ-ակ**», **Արճակ**, **Արճակ**»⁹

Եթէ այդպէս է, ապա Թիմար գաւառի հայութիւնը կարելի է նկատել ծագումով Արծրունիներ. հետեւաբար ցեղասպանութիւնը վերապրած՝ հօրս Մովսէս Թովմասեանի ծննդավայրը Արճակ լիճէն մօտաւորապէս 10 կմ դէպի հիւսիս արեւմուտք գտնուող Փիրկարիք գիւղը Արծրունիներու մայր օրրանի տարածքներէն մէկն էր:

Արծրունիներու զինանշանին մէջ կարելի է տեսնել երկու արծիւները, որոնք կը խորհրդանշեն զօրութիւնը:

Արծրունիներու անուան ծագումը Մովսէս Խորենացին առնչուած կը տեսնէ թոչուներու արքայ արծիւներուն հետ, «Իսկ Արծրունիներն իմ զիտցածովս ոչ թէ Արծրունի են, այլ Արծիւունի, որոնք նրա (թագաւորի) առջեւ արծիւներ էին կրում: Ես զանց եմ անում առասպելական դատարկաբանութիւնները, որ պատմում են Հաղամակերտում¹⁰, իբր թէ երեխայի քնելու հակառակուելիս են եղել անձրեւն ու արեւը, եւ թոչուներ հովանի է եղել թալկացած

⁹ Մարտիրոս Գալուքճեան, Ուսումնասիրութիւններ Հայոց Հնագոյն Պատմութեան, էջ 217:

¹⁰ Հաղամերտ - Վասպուրականի Աղբակ գաւառին մէջ քաղաք մըն է, որ ըստ Մովսէս Խորենացիի Արծրունիներու բնօրրանն էր:

պատանուն»¹¹ Այս պատմությունը առնչուած է Հայ ժողովուրդի հետեւեալ աւանդութեան հետ, «Երբ Արծրունեաց տոհմի մանուկ նախահայրը քնած էր բաց օդում, մի արծիւ թռեւրը լայն բաց արած պաշտպանում էր նրան անձրեւից ու արեւից: Դրա համար էլ նրա տոհմը կոչւում է Արծրունիների տոհմ»:¹²

Արծրունիները, որոնք տէրն էին Վասպուրական նահանգին, որ հայկական խոշորագոյն եւ հարուստ նահանգն էր եւ ունէր հսկայական ներուժ, Արաբական խալիֆայութեան տիրապետութեան պատմաշրջանին յաջողեցան պահպանել իրենց գոյութիւնն ու ինքնիշխանութիւնը: Արծրունիները, Բագրատունիներու, Մամիկոնեաններու եւ միւս նախարարական տոներուն հետ յաջողեցան Հայաստանը ուժեղ պահել. եւ աւելին Աբբասեան խալիֆայութեան դէմ ազատագրական բուռն պայքար մղելով Խալիֆայութեան ստիպեցին ճանչնալ Բագրատունեաց թագաւորութեան անկախութիւնը 885թ.: Այդպիսով, հայ ժողովուրդը թօթափեց երկու դար տեւող արաբական խալիֆայութեան տիրապետութեան ծանր լուծը եւ վերականգնեց իր պետական անկախութիւնը:¹³

Արշակունեաց հարստութեան անկումէն 428թ., չորս ու կէս դար ետք 885թ., հիմնուեցաւ Բագրատունեաց հարստութիւնը, որուն հիմնադրութենէն հազիւ թէ երկու տասնեակ ետք՝ 908թ., (23 տարի) Վասպուրական գաւառը անջատուեցաւ, որպէս առանձին հայկական հարստութիւն. որ բացասական քաղաքական զարգացում մըն էր մեր պատմութեան մէջ. մէկ ազգ երկու թագաւորութիւն...:

¹¹ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, 2 Գիրք, Է:

¹² Արամ Ղանալանեան, Աւանդապատում, էջ 395:

¹³ Պետրոս Մ. Թովմասեան, Աբբասեան Խալիֆայութեան Վերջին Պատմաշրջանը եւ Հայութիւնը, էջ 42, 43:

4. Արծրունեաց Հարստութեան Հիմնադրութիւնը 908թ.

Վասպուրականը իր աշխարհագրական դիրքով Հայաստանի հարաւը գտնուելով, աւելի մօտիկ էր մահմետական աշխարհին եւ անոր հզօր պետութեան Աբբասեան խալիֆայութեան. բնականաբար վերջինիս ազդեցութիւնը շատ աւելի ուժգին էր Վասպուրականի հայութեան վրայ: Այս պատմաքաղաքական իրավիճակին ազդեցութիւնը կարելի է աւելի յստակ տեսնել, երբ Բագրատունեաց հարստութեան հիմնադրութենէն 885թ. հազիւ երկու տասնեակ տարի ետք, 908թ. Վասպուրականը անջատուեցաւ Բագրատունեաց թագաւորութենէն եւ հիմնեց իր առանձին Արծրունեաց թագաւորութիւնը:

Քաղաքական ներքին եւ արտաքին դրդապատճառներով, Արծրունիները անջատուեցան Բագրատունեաց թագաւորութենէն եւ հիմնեցին հայկական անկախ թագաւորութիւն մը, որուն հիմնադիրն էր Գագիկ Արծրունին: Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը ժամանակակից եղաւ Բագրատունեաց թագաւորութեան, եւ տեւեց մէկ դարէն աւելին (908-1021) տես Գծացուցակ թիւ 1 գիրքին վերջաւորութեան:

Այս պատմահանգրուանին, հայկական երկու թագաւորութիւններու (Բագրատունեաց եւ Արծրունեաց) գոյութիւնը, որպէս նոյն ազգի՝ բայց իրարմէ անջատ պետութիւններ, որոշ չափով նման է մեր ներկայ օրերու Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու գոյութեան. միեւնոյն ազգի՝ բայց անջատ առանձին երկու պետութիւններ...: Առաջին երկուքի պարագային պատմական բացասական զարգացում էր, իսկ երկրորդի պարագային պատմական դրական զարգացում մը, որուն տրամաբանական վերջը Արցախի միացումն է Հայաստանին:

Պէտք է շեշտել, որ Արծրունեաց թագաւորութեան հիմնադրութիւնը բացասական էջ մըն էր հայ ժողովուրդի պատմութեան մէջ. թէեւ երկու հայկական հարստութիւններու գոյութիւնը միաժամանակ յառաջացուց մրցակցութեան մթնոլորտը բոլոր բնագաւառներուն մէջ, որ որոշ չափով զարկ տուաւ հարաւային Հայաստանի զարգացման՝ մշակութային եւ շինարարական ա-

պարեզներուն մէջ: Այս մեզի կը յիշեցնէ, ժողովրդային տարած-
ուած խօսքը, «Չկայ չարիք առանց բարիք»ի:

Այս բացասական զարգացումը, հայ ազգի միասնական
պետութեան բաժանումը՝ վատ օրինակ դարձաւ, ու ճամբայ բա-
ցաւ Բագրատունեաց հարստութեան մէջ նոր ճեղքերու եւ բաժա-
նումներու. ի վերջոյ Բագրատունեաց հարստութիւնը, որ կը ներ-
կայացնէր Հայոց միասնական հարստութիւնը բաժանուեցաւ վեց
փոքրիկ թագաւորութիւններու, 908թ. Վասպուրականի Արծը-
րունեաց թ., 962թ. Կարսի թ., 970թ. Փառիսոսի թ., 979թ. Լոռիի թ.,
եւ 987թ. Սիւնիքի թ.: Ի հարկէ, այս ամբողջը հայ ազգի ղեկավար
դասի քաղաքական անհասունութեան եւ եսասիրութեան ար-
դիւնքն էր...:

Արծրունեաց թագաւորութեան հիմնադիր՝ Գագիկ Արծրու-
նին (908-943թ.) տես Գծացուցակ թիւ 2 գիրքին վերջաւորութեան,
շինարարական բազմաթիւ կարեւոր գործեր կատարեց, որոնցմէ
էին Ոստան քաղաքի եւ Վանի միջնաբերդի նորոգութիւնները.
Վարազայ լեռէն քարաշէն ստորգետնեայ ջրմուղ կառուցեց դէպի
Վան քաղաքը. ինչպէս նաեւ բազմաթիւ գործեր Վանայ լիճի Ադ-
թամար կղզիին մէջ, ուր 915-921 տարիներուն կառուցեց հռչակա-
ւոր Ս. Խաչ եկեղեցին: Այդ եկեղեցին Ս. Հռիփսիմէի վանքի նման՝
խաչաձեւ գմբէթաւոր է, դուրսէն ամբողջութեամբ զարդարուած ու
քանդակուած է: Արտաքին պատերէն մէկուն վրայ քանդակուած է
Գագիկ Արծրունիի պատկերը: Ադթամարի շինարարութիւններէն
կանգուն մնացած է միայն Ս. Խաչ եկեղեցին, որուն չափերն են, 17
մ. երկարութիւն, 14 մ. լայնութիւն եւ 24 մ. բարձրութիւն: Ադթա-
մարի Ս. Խաչ եկեղեցին կառուցուած է 7-րդ դարուն Աղբակ գա-
ւառի Արծրունեաց տոհմային դամբարանի՝ Զօրադիր եկեղեցիի
ձեւով, խաչաձեւ կառոյցներով Հռիփսիմէատիպ:

Ադթամարի մէջ շինարարական աշխատանքներու ժամա-
նակ հիմնական դժուարութիւնը որակեալ քարերու չգոյութիւնն
էր. ստիպուած էին Ադթամարի կառուցման համար դուրսէն քա-
րեր բերելու: Թովմա Արծրունին անդրադարձած է Ադթամարի Ս.
Խաչ եկեղեցւոյ մէջ գործածուած քարերու հայթայթման պատմու-
թեան, որ կատարուած է Գագիկ Արծրունիի հրամանով, «Աստ-

րեւտանի մատոյցներում տեսաւ Աղձնիքի իշխանական տան մի
ամրոց՝ Կոտում անունով գիւղում, որը սեփականել էր Զուարիկ
կոչուած ցեղը: Սրան իսպառ ջնջեց, կորցրեց, հիմքից տապալեց
ամրոցի շինութիւնը, նրա քարերը, բարձեց (նաւերը) եւ բերեց ծո-
վի վրայով, տուեց սուրբ եկեղեցու շինութեան համար»:¹⁴ Կոտում
գիւղը կը գտնուէր Վանայ լիճի հարաւ-արեւմտեան ափամերձ
շրջանին մէջ. իսկ Զուարիկ ցեղը, Հայաստանի մէջ հաստատուած
արաբական ցեղերէն էր, որոնք գաղթելով Հայաստան գրաւած
էին Աղձնիք նահանգի տարածքներէն մաս մը: Այդ ամրոցը քան-
դելով ու Զուարիկ կոչուած ցեղը բնաջնջելով՝ Գագիկ Արծրունի
արաբական այդ ցեղին վտանգէն ու տիրապետութենէն փրկեց
հայկական այդ տարածքը:

Ադթամարի Ս. Խաչ եկեղեցին կը նկատուի հայոց ճարտա-
րապետութեան եօթը հրաշալիքներէն երրորդը, որ բարեբախտա-
բար հրաշքներով կը մնայ մինչեւ մեր օրերը: Եօթը հրաշալիքներն
են-

1-Զուարթնոց եկեղեցին

2-Անիի Կաթողիկէ եկեղեցին

3-Ադթամարի Ս. Խաչ եկեղեցին

4-Գառնիի Տաճարը

5-Հաղբատի վանքը

6-Գեղարդի վանքը

7-Գանձասարի վանքը

Ադթամար կղզին, Ս. Խաչ եկեղեցիի կառուցումէն առաջ
ունեցած է իր զգալի դերը. սակայն Ս. Խաչի կառուցումէն ետք
Ադթամարն ու Ս. Խաչը ձուլուեցան իրար հետ ու եղան մէկ կա-
ռոյց, այնպէս որ անոնք իրարմէ անբաժան են, ինչպէս Հայաս-
տանն ու Սփիւռքը: Ադթամարը եթէ չ'ունենար իր հողին վրայ Ս.
Խաչը չէր ունենար իր այն դերը, որ ունի այսօր մեր պատմութեան
մէջ: Նոյնպէս, Ս. Խաչը եթէ չկառուցուէր Ադթամարի մէջ, չէր ըլ-
լար այն Ս. Խաչը, որ եղաւ եւ է այսօր:

¹⁴ Թովմա Արծրունի Եւ Անանուն, Պատմութիւն Արծրունեաց Տան, էջ 300:

Անդրադարձանք 2-րդ բաժինին մէջ, թէ ինչպէս Թեոդորոս Ռշտունին 7-րդ դարուն, Աղթամար կղզին ըրաւ իր յենակէտը իր մղած պայքարի ժամանակ արաբներուն դէմ: Այսպէս, երեք դար ետք Գագիկ Արծրունին օգտուելով այդ անցեալի յաջող փորձառութենէն Աղթամար կղզին մէջ կարելոր ծրագիրներ մշակեց, որոնց մասին Թովմա Արծրունի պատմիչը յիշած է, «Նա գրօսնէլիս խորագիտութեամբ դիտեց եւ գտաւ, որ այն կարող է լինել աշխարհի ապաստանը թշնամիներից եւ հրոսախմբերից, ձեռնարկեց այնտեղ հիմք դնել ահեղ ու զարմանալի որելէ բան»:¹⁵

Շատ հաւանական է, որ Թեոդորոս Ռշտունիի ժամանակուայ Աղթամար քաղաքի կառուցումներէն մաս մը, լաւ վիճակի մէջ էին Գագիկ Արծրունիի ժամանակ՝ երկու դար ետք: Այս հարցի մասին մէջբերենք Ստեփան Մնացականեանէն, «Դժբախտաբար, այդ շրջանի կառուցուածքներից ոչինչ չի հասել մեզ, թէեւ չի կարելի կասկածել, որ այնտեղ եղած ամրութիւնները շատ աւելի բարւոք դրութեան մէջ էին X դարում, եւ նրանց առկայութիւնն էլ հաւանաբար միտք էր յղացել այնտեղ տեղաւորել Վասպուրականի մայրաքաղաքը»:¹⁶

Գագիկ Արծրունին Աղթամարը վերածեց անառիկ բերդաքաղաքի եւ զայն դարձուց իր գահանիստ քաղաքը: Ան ռազմական հեռատեսութեամբ տեղեակ էր, որ Աղթամարը գտնուելով ափէն ոչ շատ հեռու, Վանայ լիճի ջուրերով լաւ պաշտպանուած ամրոց էր, բոլոր թշնամիներու յարձակումներէն: Վանայ լիճի ջուրերը կը համարուէին Աղթամար քաղաքի բնութեան ընծայած անառիկ պարիսպները:

Բնականաբար Աղթամար քաղաքը, որ այդ ժամանակ տարածութեամբ շատ աւելի խոշոր էր, քան այսօր, պէտք էր որ ունենար իր նաւահանգիստը: Աղթամարի նաւահանգիստի մասին Թովմա Արծրունի յիշած է, «Հրաման տուեց բազմաթիւ արհեստաւորների եւ անթիւ մարդկանց՝ կտրել ծանր ու դժուարակիր վէմ քարեր եւ ցգել ծովի անհնարին խոր յատակը: Այսպէս մեծն

արքան մի առ ժամանակ ջանքեր թափեց եւ անսպասելիօրէն կանգնեցուեց, ծովից հինգ կանգուն բարձրութեամբ, քարայրատակ ամբարտակ, որը մտքի աչքերով, ինչպէս ցամաքի վրայ, հաստատուն կերպով դրեց մեծ քարերի շարքով»:¹⁷

Գագիկ Արծրունին զօրացուց Աղթամար քաղաքը, բացի բնութեան պարիսպէն, ան իր բերած մեծ քարերուն վրայ կառուցեց մարդակերտ պարիսպ մը, «Նրա վրայ շուրջանակի, լարածութեամբ կառուցեց պարիսպը մօտ հինգ ասպարէզ»¹⁸ տարածութեամբ: Եւ պարիսպն էր հրաշակերտ, ահեղակերպ՝ զարդարուած էր բարձրաբերձ, լայնանիստ բուրգերով ու բարձր աշտարակներով եւ ունէր իր մէջ անկիւնաւոր, խորանանման, տախտակաձեւ հանգստանալու գահոյքներ, որտեղ միշտ զուարճանում էր արքան իր որդիների եւ ազատակոյտ զօրքերի հետ: Բսկ պարսպի ծայրերը նա տարաւ քարանձաւի դժուարամած կիրճերը եւ սերտ միացրեց իրար: Ծովի խորայրատակ հիմքերի բերանին նա դրեց ահաւորատես, հաստահեղոյս, բեւեռապինդ դռներ: Այսպիսով ծովի մի մասն առնելով կղզու կողմը, նա հրաշալիք գործեց եւ ստեղծեց խաղաղ ու անբոյթ նաւահանգիստնաւերի խմբի համար»:¹⁹ Աղթամարի տարածքին մէջ, լիճէն մաս մը վերածեց ցամաքի, եւ կառուցեց արհեստական նաւահանգիստ. այսպէս Գագիկ Արծրունին ընդարձակեց իր գահանիստ փոքր քաղաքի տարածութիւնը:

Քաղաքին մէջ եկեղեցւոյ, թագաւորական պալատին եւ նաւահանգիստին կողքին, կառուցուեցան իշխանական դղեակներ, պարտէզներ, այգիներ, փողոցներ, զբօսատեղեր, բացօթեայ թատրոն, շտեմարաններ, համբարանոցներ, զինանոցներ եւ այլն: Յիշեցնենք, որ այդ ժամանակ Վանայ լիճի ջուրի մակարդակը շատ աւելի ցած էր, հետեւաբար Աղթամար կղզին տարածութիւնը աւելի խոշոր էր բաղդատմամբ մեր օրերուն:

¹⁵ Թովմա Արծրունի Եւ Անանուն, Պատմութիւն Արծրունեաց Տան, էջ 296, 297:

¹⁶ Ստեփան Մնացականեան, Աղթամար, էջ 22:

¹⁷ Թովմա Արծրունի Եւ Անանուն, Պատմութիւն Արծրունեաց Տան, էջ 296, 297:

¹⁸ Ասպարէզ – Շուրջ 230 մ. տարածութիւն:

¹⁹ Թովմա Արծրունի Եւ Անանուն, Պատմութիւն Արծրունեաց Տան, էջ 296, 297:

Ներկայիս, այդ թուականին 11 դար ետք, այդ բոլորը չկան, կայ միայն հրաշքով պահպանուած Ս. Խաչ եկեղեցին. իսկ պարիսպը եւ նաւահանգիստը ջուրի տակ ընկղմած են, Վանայ լիճի ջուրի մակարդակի բարձրացման հետեւանքով:

Սկիզբը՝ Արծրունիներու իշխանապետութիւնը, ապա թագաւորութիւնը, որ հիմնուեցաւ 908թ. իր աշխարհագրական դիրքով Հիւսիսային Հայաստանը կը կապէր Միջագետքի ու Պարսկաստանի հետ. այդ տարածքներով կ'անցնէին միջազգային տարանցիկ առեւտրական հարաւային ճանապարհները: Այդ նպաստեց Արծրունեաց իշխանութեան եւ ապա թագաւորութեան տնտեսական զարգացման եւ վերելքին: Այսպէս, Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը կարելոր դեր ունեցաւ Հայաստանի հարաւային տարածքներուն մէջ ապրող հայութեան քաղաքական, տնտեսական, մշակութային եւ հոգեւոր կեանքի զարգացման մէջ:

Հետեւաբար 1021թ.ին, երբ Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը արձանագրեց իր անկումը, տես Գծացուցակ թիւ 1 գիրքին վերջաւորութեան. իր պատմութիւնը վառ մնաց Արծրունի վերնախաւին մօտ դարեր շարունակ, եւ հանգեցաւ Աղթամարի թագաւորութեան հիմնադրման չորս ու կէս դար ետք, 1465թ. եւ Սմբատ Արծրունիի գահակալութեան, որուն մասին մանրամասն պիտի անդրադառնանք յաջորդ գլուխին մէջ:

5. Աղթամարը Կաթողիկոսանիստ Քաղաք

Աշոտ Երկաթէն ետք, Բագրատունեաց գահին բարձրացաւ իր եղբայրը՝ Աբաս Ա. (928-953), որուն օրօք Բագրատունի եւ Արծրունի թագաւորներու միջեւ մերձեցումը աւելի խորացաւ: Աբաս Ա-ի թագադրութեան ժամանակ, երբ Վասպուրականի մէջ Գագիկ Արծրունին՝ Աբաս Ա-ի թագադրութիւնը կատարեց: Այս հանգամանքը կը վկայէ, որ Գագիկ Արծրունին կ'ընդունէր Բագրատունիներու գերիշխանութիւնը, ինչպէս որ Արշակունեաց թագաւորութեան ժամանակ՝ 8 դարեր առաջ Բագրատունեաց նա-

խարարները թագադրելով Արշակունեաց հայ թագաւորները՝ կ'ընդունէին անոնց գերակայութիւնը:

Աղթամարի մէջ կաթողիկոսական աթոռ հիմնուելէն 1113թ. մօտ երկու դար առաջ՝ Գագիկ Արծրունի թագաւորի ժամանակ, առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ Ամենայն Հայոց Աթոռի տեղափոխումը Աղթամար կղզի, «Եւ իսկապէս 927 թ. Աղթամար է տեղափոխուում կաթողիկոսը, որը եւ մնում է այնտեղ մինչեւ Գագիկ արքայի մահը 943 թ.: Կաթողիկոսը Վասպուրական տեղափոխուելով մեծապէս ամրապնդում է Գագիկի դիրքերը: Նա ընդունել էր Բագրատունիների գերիշխանութիւնը, եւ պահպանելով հնաւանդ աւանդոյթները, Աշոտ Երկաթ բագրատունու մահից յետոյ նրա եղբոր՝ Աբաս Բագրատունու գլխին թագ է դնում ինքը՝ Գագիկ Արծրունին, իսկ ծիսակատարութիւնը կազմակերպում Աղթամարի նորակառոյց շքեղ տաճարում»:²⁰

Ամենայն Հայոց կաթողիկոս Յովհաննէս Ե. Դրասխանակերտցի (898-929), մնաց Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ մինչեւ իր մահը 929թ.: Ապա իրեն յաջորդեցին Ստեփանոս Բ. Ռշտունի (929-930), Թեոդորոս Ա. Ռշտունի (930-941) եւ Եղիշէ Ա. Ռշտունի (941-946): Աղթամարի Ամենայն Հայոց կաթողիկոսներու գահակալութեան այս պատմաշրջանը կը կոչուի Աղթամարի դարաշրջան, որ տեւեց քսան տարի (927-947):

Այս կարելի է նկատել որպէս Արծրունիներու առաջին փորձը Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին դարձնելու կաթողիկոսանիստ կեդրոն: Պէտք է նշել, Գագիկ Ա. Արծրունին Ս. Խաչ եկեղեցին կառուցեց մեծ ծախսերով, իր շքեղութեամբ եւ այլ յարմարութիւններով Կաթողիկոսական կեդրոն դառնալու. գուցէ իր հեռաւոր նպատակներէն մէկն էր, որ ան դառնար Արծրունեաց թագաւորութեան կրօնական կեդրոնը, եւ աւելին Դուինէն Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը տեղափոխէր Աղթամար. բայց նման տեղեկութիւն հասած չէ մեզի:

Արշակունեաց հարստութեան անկումէն 4.5 դար ետք հիմնուեցաւ Բագրատունեաց հարստութիւնը: Այսպէս, երբ Արծրու-

²⁰. Ստեփան Մնացականեան, Աղթամար, էջ 7:

նինքնը անջատուելով Բագրատունեաց հարստութենէն Գագիկ Ա. Արծրունիի օրով հիմնեցին Արծրունեաց թագաւորութիւնը, անոնք ծայրայեղ հոգատարութեամբ կառուցեցին Աղթամար քաղաքը, զայն դարձնելու մայրաքաղաք, «Արշակունեաց հարստութեան միւս իրաւական ժառանգորդն էր Արծրունեաց նախարարական տունը: Արծրունիները հիմնադրեցին Աղթամար քաղաքը, երազելով տեսնել այն որպէս ապագայ հայոց թագաւորութեան մայրաքաղաք, կաթողիկոսանիստ կենտրոն, եւ Գագիկ արքան չվարանեց պալատական եկեղեցու պատին քանդակել տալ ամբողջ հասակով կանգնած իր ֆիգուրը՝ Արշակունեաց աւանդական թելաւոր թագը գլխին»:²¹ Այդ քանդակով Գագիկ Արծրունին կը շէշտէր, որ ոչ միայն Բագրատունիները՝ այլ Արծրունիները եւս Արշակունիներու յաջորդներն էին, որ մրցակցութեան եւ ներքին պայքարի մէկ արտայայտութիւնն էր...:

Մեր պատմութիւնը, միւս ազգերու պատմութեան պէս հարուստ է նախարարական տուններու ներքին պայքարով եւ մրցակցութեամբ, որոնք մեծապէս մասամբ բացասական դեր ունեցած են մեր անցեալի պատմութեան մէջ. կարելորդ այն է, որ մեր ներկայ եւ գալիք սերունդները այդ անյաջողութիւններէն դասեր քաղեն, ինչպէս յիշած է Բաֆֆի (1835-1888), «Պատմութիւնը մի վարդապետարան է, մի դասարան, որի մէջ ապագայի սերունդը կրթոււմ է, զգուշանալով իւր նախորդների սխալներից եւ հետեւելով նրանց լաւ գործերի օրինակին»:

Գագիկ Ա. Արծրունի եւ իր յաջորդները երկրորդ կաթողիկոսական աթոռ մը հիմնելու քայլին չգացին: Այդ տեղի ունեցաւ Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան անկումէն 1.5 դար ետք, Վասպուրականի Խեղենիկեան իշխանութեան օրով, 1113թ. տես Գծացուցակ թիւ 3 գիրքին վերջաւորութեան:

²¹ Նոյնը, էջ 42:

6. Խեղենիկեան Իշխանութիւնը Եւ Աղթամարի Կաթողիկոսական Աթոռի Հիմնադրութիւնը 1113թ.

ԺԱ. դարու սկիզբին, Արծրունեաց թագաւորութիւնը ի վիճակի չէր կոուելու մէկէ աւելի ճակատներու վրայ. թուրք սելջուկներու արշաւանքները մէկ կողմէն, բիւզանդացիներու նուաճողական ձգտումները միւս կողմէն, Աբբասեան Խալիֆայութեան ու մահմետական ամիրայութիւններու ոչ բարեկամական դիրքը. այս բոլորը արտաքին աշխարհը կը դարձնէին անտանելի ու խեղդամահ կ'ընէին Արծրունեաց թագաւորութիւնը: Իսկ միակ արտաքին օգնութիւնը, որ հաւանական էր, Բագրատունեաց մայր թագաւորութիւնն էր՝ (Անիի թագաւորութիւնը), որ սակայն այս հանգրուանին ռազմականօրէն տկարացած էր. յիշեցնենք 1021թ. գոյութիւն ունէին հայկական վեց թագաւորութիւններ, որոնցմէ խոշորագոյնը եւ հզօրագոյնը Անիի թագաւորութիւնն էր:

Ի վերջոյ, Մենքերիմ Արծրունին յուսայատած, տեղի տուաւ Բիւզանդիոնի ճնշման եւ համաձայնեցաւ Վասպուրականը յանձնելու Բիւզանդիոնին. ու փոխարէնը ստանալ Մեքաստիա քաղաքը իր շրջակայ գաւառներով: Համաձայն պատմական աղբիւրներու՝ Մենքերիմ Արծրունին իր ամբողջ գերդաստանով, Վասպուրականի իշխանները եւ մեծ թիւով բնակչութիւն մօտաւորապէս՝ 80 հազար մարդ (14 հազար տղամարդ, բացի կիներէն ու երեխաներէն), հեռացան Վասպուրականէն ու հաստատուեցան Մեքաստիոյ նահանգին մէջ: Գաղթողներուն թիւը թէեւ բաւական խոշոր էր, բայց այդ բաղդատելով Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան ընդհանուր թիւին հետ, որ մօտաւորապէս մէկ միլիոնի²² կը հասներ, փոքր թիւ էր: Անկասկած այս մեծ գաղթը տեղի չունեցաւ սիրայօժար. կարելի է ըսել, որ այդ կամովին աքսոր մըն էր, յիշեալ պատճառներուն հետեւանքով:

Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան անկումէն ետք 1021թ., Վասպուրականի մէջ մնացին Արծրունիներու տան բեկորները, որոնք կարողացան պահպանել իրենց իշխանութիւնը Վանայ լիճի արեւելեան ափամերձ՝ մէկէ աւելին շրջաններուն մէջ:

²² Վ. Մ. Վարդանեան, Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը, էջ 144:

Անոնցմէ էին Սենեքերիմ Արծրունի թագաւորին սերունդէն երկու եղբայրներ՝ Սենեքերիմ եւ Դերենիկ, որոնք այս պատճառով շարունակեցին կրել «արքայուն» տիտղոսը:

Սենեքերիմ Արծրունուի զաւթէն յետոյ 1021թ., իր ազգականներէն Խեղենիկ Ա. կը գրաւէ եւ կ'իշխէ Ամյուկ (Ամիւկ) բերդը եւ շրջակայ Թիմար գաւառը, որ կը գտնուէր Վանայ լիճի հիւսիս-արեւելեան ափամերձ շրջանը: Խեղենիկ Ա.-ի ծննդեան եւ մահուան թուականները անյայտ կը մնան. իրեն կը յաջորդէ՝ որդին Թոռնիկ. այդպիսով կը յառաջանայ Արծրունեաց տոհմի նոր իշխանական ճիւղ մը, որ կոչուեցաւ Խեղենիկեան:

Խեղենիկ Արծրունին, իր վարչական կեդրոնները դարձուց Ամյուկը եւ Աղթամարի կղզին: Վասպուրականի այս փոքրիկ Խեղենիկեան Արծրունիներու իշխանութիւնը, իր ինքնութիւնը պահեց ենթարկուելով սելջուկներուն. ու երբ անոնք տկարացան, Թոռնիկի որդին՝ Աբղլմսեհը²³, օգտուեցաւ առիթէն եւ անկախացաւ:

Այսպէս, Արծրունեաց թագաւորութեան անկումէն ետք Վասպուրականի որոշ տարածքներու մէջ, ինչպէս Ամյուկ եւ Աղթամար երկար ժամանակ իրենց գոյութիւնը պահեցին Արծրունեաց փոքր իշխանութիւններ, որոնք հզօրանալով ստեղծեցին Աղթամարի կաթողիկոսական աթոռը եւ ապա Աղթամարի կարճակեաց թագաւորութիւնը 1465թ.:

Աղթամարի կաթողիկոսական աթոռի հիմնադրութիւնը տեղի ունեցաւ 1113թ. երբ դէպքերը ոչ տրամաբանականօրէն զարգացան Կիլիկիոյ մէջ. ուր Բարսեղ Ա. Անեցի կաթողիկոսի մահէն ետք, ընտրուեցաւ Գրիգոր Գ. Պահլավունին (1113-1166), որ իր երիտասարդ տարիքին էր, հազիւ 20 տարեկան: Այս ընտրութեան բողոքեց Աղթամարի Դաւիթ եպիսկոպոսը, որ ինքզինք կը համարէր կաթողիկոսութեան արժանի, տրամաբանելով, թէ նորընտիր կաթողիկոսը շատ երիտասարդ է, եւ թէ Աթոռը կը գտնուի Հայաստանէն դուրս՝ Կիլիկիոյ մէջ:

²³ Աբղլմսեհ- Արաբերէն է, կը նշանակէ Քրիստոսի ծառան. Աբղ-ծառայ, եւ մսեհ-Քրիստոս:

Աղթամարի մէջ բողոքի ալիքը աւելի սաստկացաւ. ամրացնելու համար իր իշխանութիւնը Աբղլմսեհ իշխանը 1113թ., իր որդիին՝ Դաւիթ եպիսկոպոսին կաթողիկոս օծել տուաւ Արծրունեաց թագաւորութեան հիմնադիր՝ Գագիկ Ա. Արծրունիի (915-921) տարիներուն կառուցուած Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ: Աղթամարի աթոռին առաջին կաթողիկոսը արդարացուց այս քայլը, «պատճառաբանելով թէ, աթոռ է սա թագաւորացն Արծրունեաց...»²⁴

Աղթամարի մէջ կաթողիկոսական աթոռի հիմնադրութիւնը արդարացուեցաւ մէկէ աւելի պատճառներով, «Դաւիթ հինգ եպիսկոպոսների բաղկացած մի ժողով է գումարում, որը պատճառաբանելով, թէ Վասպուրականի Չորավանքը ժամանակին եղել է կաթողիկոսանիստ, թէ Աղթամարում է գտնւում Ս. Գրիգոր Լուսաւորչի պատարագի սեղանը, գաւազանը եւ այլ սրբութիւններ, օրինաւոր է համարում Դաւթի ցանկութիւնը եւ նրան ձեռնադրում կաթողիկոս Բուն Հայաստանի համար»²⁵

Աղթամարի մէջ կաթողիկոսական աթոռի հիմնադրութիւնը կարելի էր անհրաժեշտ տեսնել, որովհետեւ պատմական զարգացումները ստիպած էին, որ Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը 1066թ., տեղափոխուէր Հայաստանէն դուրս. տես Գծացուցակ թիւ 3: 1065թ., Կարսի թագաւոր Գագիկ Աբբասեանը, սելջուկ-թուրքերու արշաւանքներուն հետեւանքով հեռացաւ իր երկրէն. ան մեծ թիւով իշխաններու, զօրավարներու, ազնուականներու եւ ժողովուրդին հետ տեղափոխուեցաւ Կիլիկիայի հիւսիսային սահմանամերձ Շամնդավի շրջանը: Յաջորդ տարին 1066թ. Գրիգոր Բ. Վկայասէր Ամենայն հայոց կաթողիկոսը՝ Գագիկ Աբբասեանի օգնութեամբ իր աթոռը հաստատեց Հայաստանէն դուրս՝ Շամնդավի²⁶ մէջ: Հիմնական պատճառը այն էր, որ այդ ժամանակ

²⁴ Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Գ գիրք, էջ 1351:

²⁵ Եզնիկ Քենյ. Պետրոսեան, Հայ Եկեղեցու Պատմութիւն Մաս Ա., էջ 86:

²⁶ Շամնդավը բերդաքաղաք էր Փոքր Հայքի մէջ, Կեսարիա քաղաքէն արեւելք, այդ ժամանակ Գագիկ Աբբասեանի իշխած տարածքի մէջ կը գտնուէր:

սելջուկները ներխուժած էին Հայաստան, եւ կաթողիկոսական աթոռը շատ վտանգուած էր:²⁷

Այսպէս, Արծրունիներու Խեղենիկեան իշխանութիւնը լաւատեղեակ ըլլալով, որ շատ անհրաժեշտ էր ունենալ կրօնական աթոռ մը, այդ էր կրօնաքաղաքական պետութիւններու ժամանակաշրջանի թելադրանքը: Խեղենիկեան իշխանութենէն յառաջ եկաւ Աղթամարի կաթողիկոսական աթոռը. եւ յաջորդ քայլը պիտի ըլլար, աւելի զօրացնել իշխանութիւնը՝ զայն վերածելով թագաւորութեան, ինչ որ տեղի ունեցաւ շատ աւելի ուշ 1465թ.:

Այս նոր զարգացումներուն ի պատասխան, Կիլիկիոյ կաթողիկոս՝ Գրիգոր Գ. Պաիւլաւունին հրաւիրեց յատուկ ժողովի, որուն մասնակցեցան շուրջ 2500 հայ հոգեւորականներ, որոնք նգովեցին Դաւիթ եպիսկոպոս Թոռնիկեանի այդ անջատողական քայլը: Սակայն Աղթամարի մէջ հիմնուած նոր կաթողիկոսութիւնը մնաց եւ շարունակեց իր գոյութիւնը մօտաւորապէս ութ դար, մինչեւ 1895թ. տես Գծացուցակ թիւ 1:

Աղթամարի կաթողիկոսական աթոռի հիմնադրման մասին, դժբախտաբար մակերեսային բացատրութիւնները բազմաթիւ են. այս հարցի մասին Արշակ Ալպոյաճեան գրած է, «Մեր պատմիչները առ հասարակ այնպէս կը ներկայացնեն որ Դաւիթ՝ Գրիգորիս փոքր Վկայասէրի (1113-1166) տղայութիւնը արհամարհելով ապստամբեցաւ եւ ինքնագլուխ կաթողիկոս եղաւ»:

Ասիկա անշուշտ կատարուած է իր հօրը Աբղլմսեհի քաջալերութեամբ, որ իբր «թագաւորազն արքայ» եւ «օծեալ» ըստ աւանդական սովորութեան իրաւունք ունէր իր քովը ունենալու կաթողիկոս մը եւ ունեցաւ, նոյն իսկ արհամարհելով Մել լերան ժողովի բանադրանքը»:²⁸

Ալպոյաճեան, Աբղլմսեհ իշխանի այդ քայլին մէջ կը տեսնէ նաեւ Արծրունեաց թագաւորութիւնը վերակազմելու հեռանկարը, «Ասիկա կը մղէ մտածելու՝ թէ Աբղլմսեհ «ամեներեւելի եւ

²⁷ Արամ Յովհաննէսեան, Հայոց Եկեղեցին Կիլիկեան Շրջանում, էջ 14,15:

²⁸ Արշակ Ալպոյաճեան, Արծրունեաց Թագաւորութեան Շարունակութիւնը Վասպուրականի Մէջ, էջ 107:

աստուածասէր կիրապաղատն» աշխատած էր կերպով մը վերակազմել Արծրունեաց թագաւորութիւնը, Վասպուրականի մէջ կազմակերպելով աշխարհիկ եւ հոգեւոր կրկնակ իշխանութիւնները, երկուքն ալ իր ընտանիքին սեպահականելով»:²⁹

Աղթամարի կաթողիկոսութեան հիմնադրութիւնը փաստ է, որ Խեղենիկեան Աբղլմսեհ իշխանը ռազմականօրէն բաւական զօրացած էր: Աբղլմսեհի այս քայլը ունէր մէկէ աւելին նպատակներ. Աղթամարի կաթողիկոսութեան հիմնադրութիւնը պիտի զօրացնէր Վասպուրականի հայութեան դիրքերը թուրք սելջուկներու տիրապետութիւնը աւելի ուժգինօրէն դիմադրելու: Խեղենիկեան իշխանութիւնը աւելի կը զօրանար, իր կողքին կրօնական աթոռ մը ունենալով. եւ այդ բոլորը միասին աշխատեցան եւ իրականութիւն դարձուցին Աղթամարի Արծրունեաց թագաւորութեան հիմնադրութեանը:

Աբղլմսեհ Արծրունին Աղթամարի կաթողիկոսական աթոռը հիմնելէն բացի, զօրացուց իր իշխանութիւնը եւ կատարեց շինարարական կարեւոր աշխատանքներ: Աբղլմսեհին յաջորդեց իր որդին Ստեփանոս Ալուզը 1121թ., եւ վերջինիս յաջորդեց իր որդին Խեղենիկ Բ.: Աբղլմսեհի երկու յաջորդները իշխեցին մինչեւ 13-րդ դարու սկիզբը, որոնց օրով Խեղենիկեան իշխանութիւնը կը գտնուէր հարեւան մահմետական ամիրայութիւններու ճնշման ներքեւ, ու մեծ գոհողութիւններով կը շարունակէր իր գոյութիւնը:

Խեղենիկ Բ. Արծրունին առու գաւակ չունեցաւ, իր աղջկան՝ Մարիամին ամուսնացուց Արծրունեաց տոհմէն՝ Մեֆեդին իշխանին, որուն եւ կտակեց Աղթամար կղզին:³⁰

Մեֆեդին անուան ծագումը շատ հաւանական է, որ արաբական է: Արաբերէնով «Մեյֆ» կը նշանակէ սուր, եւ «Դին» կը նշանակէ կրօնք. ուրեմն Մեֆեդին բառացիօրէն կը թարգմանուի կրօնքի սուրբ, իսկ տրամաբանօրէն կը թարգմանուի կրօնքի պաշտպանը: Այդ պատմահանգրուանին արաբական մշակոյթի ազդեցութիւնը շատ ուժեղ էր ամբողջ տարածքաշրջանին վրայ եւ

²⁹ Արշակ Ալպոյաճեան, նոյնը, էջ 107:

³⁰ Հայ Ժողովրդի Պատմութիւն, հատոր 3, էջ 483:

ի մասնաւորի՝ Վասպուրականի, որ հարեւան էր Բաղդադի մէջ կեդրոնացած Աբբասեան խալիֆայութեան: Մէկ դար ետք Մուսուլ քաղաքի կառավարիչը՝ հայ մըն էր Բադր ալ-Դին Լուլու (Բադրադին) անունով. ուր «Բադր» արաբերէնով կը նշանակէ լուսին, իսկ «Դին» ինչպէս անդրադարձանք՝ կրօնք: Արաբական ազդեցութեամբ «Դին» վերջնամասնիկով անունները բազմաթիւ են այս պատմաշրջանին:

Մարիամի եւ Մեֆեդին իշխանի ամուսնութեամբ հիմքը դրուեցաւ Արծրունեաց-Մեֆեդիներէն իշխանական ընտանիքին, որ հանդիսացաւ Աղթամարի կաթողիկոսական աթոռի եւ ապագայ քաղաքական զարգացումներու կերտողներուն տոհմը. որոնք, ժառանգեցին Աղթամարի կաթողիկոսական աթոռը մինչեւ 16-րդ դար: Այս ամուսնութիւնը եղաւ օրհնուած ամուսնութիւն մը մեր պատմութեան մէջ, որմէ յառաջացաւ ղեկավարող տոհմ մը: Այդ տոհմի անդամներէն էին քաղաքական մեծ դէմք՝ Զաքարիա Գ. կաթողիկոսը եւ Սմբատ Արծրունին. վերջինս թագաւոր օծուեցաւ 1465թ. որուն պիտի անդրադառնանք յաջորդ էջերով:

Պետք է նշել, որ Աղթամարի կաթողիկոսութիւնը նպաստեց հարաւային Հայաստանի ազգային եւ եկեղեցական կեանքի զարգացման, ու դարձաւ կարեւոր գործօն մը հարաւային Հայաստանի ներքին ինքնավարութեան պահպանման: Կարելի է ըսել, որ ան դրական դեր ունեցաւ մեր պատմութեան մէջ, հիմնադրութենէն մինչեւ իր գոյութեան վերջին՝ (19-րդ) դարը, երբ ի հետեւանք Օսմանեան հայաջինջ քաղաքականութեան եւ ներքին ազգային պառակտման, բացասական զարգացումներ տեղի ունեցան, եւ ի վերջոյ....մարեցաւ, որովհետեւ այլեւս անհնար եղաւ իր գոյութեան պահպանումը:

7. Կարա-Կոյունլուներու Պատմաշրջանը

Լենկ Թեմուր վերահաստատեց Չինգիզիանի հիմնած Մոնղոլական կայսրութիւնը՝ գրաւելով Աֆղանստանը, Իրանը, Հայաստանն ու Միջագետքը: Ան իր գործադրած չարիքներով գերազանցեց իր հեռաւոր ազգական Չինգիզիանին. Թումա Թավրիզեցի պատմիչը, անոր անունը թարգմանեց «դա մուր», «Որտեղ

հասնում է՝ մրի նման սեւացնում է, ոմանց կողոպտելով, ոմանց տանջելով, ոմանց սպաննելով, ոմանց գերելով, հօրը որդուց եւ որդուն հօրից բաժանելով»:³¹

Լենկ Թեմուրի ստեղծած հսկայ կայսրութիւնը իր մահէն ետք շատ արագ քայքայուեցաւ: Ան իր գրաւած երկիրներու կառավարումը յանձնած էր իր որդիներուն եւ թոռներուն, որոնք իր մահէն ետք 1405-1409 կատաղի պայքար սկսան իշխանութեան համար, հիմնականօրէն իր որդի Շահրուխի եւ իր թոռնիկ Խալիլի միջեւ:

Մոնղոլական ուժերուն հետ Միջին Ասիայէն մեր տարածքաշրջանը խուժեցին թուրքմէնական ցեղերը եւ գրաւեցին Հայաստանի արօտավայրերը: Այդ ցեղերէն պատմութեան մէջ նշանաւոր եղան երկուքը, որոնց անունները իրենց քաղաքակրթական յետամնացութեան հետեւանքով, առնչուեցաւ իրենց պահած ոչխարներու գոյնի հետ. Կարա-կոյունլուներ (սեւ ոչխարներ կամ սեւախոյ) եւ Ակ-կոյունլուներ (սպիտակ ոչխարներ կամ սպիտակախոյ)³²: Այս երկու ցեղերու անուանակոչութենէն, կարելի է պատկերացնել անոնց մակարդակն ու բարբարոսութիւնը, ինչպէս եւ հայ ժողովուրդի տառապանքի աստիճանաչափը, ենթարկուելով նման բարբարոս ու քոչւոր ցեղախումբերու հարըստահարութիւններուն:

Այս երկու ցեղերը 14-րդ դարու վերջերը գրաւած էին Հայաստանի մեծ մասը. «Դեռեւս XIV դ. վերջերին կարա-կոյունլիները հաստատուեցին Վանայ լճի շրջակայքում Վասպուրականում, Տուրուբերանում եւ այլուր. իսկ Աղ-Կոյունլիները՝ Մոկսի ու Աղձնիքի նահանգներում եւ Ծովքի արեւելեան գաւառներում: 1378թ. Կարա-կոյունլիների ցեղապետներ Ղարա-Մահմադը եւ սրա որդի Ղարա-Յուսուֆը հիմնեցին իրենց իշխանութիւնը Տարօնի, Սասունի եւ Քաջբերունքի շրջանում, իսկ աղ-կոյունլու-

31. Գ. Ե. Կիրակոսեան, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ Թուրքմէն Ցեղերի Արշաւանքների Շրջանում, էջ 71:

32. Խոյ-Արու ոչխարը:

ները Օսմանի գլխաւորութեամբ՝ Հայաստանի հարաւային մասերում, կենտրոն դարձնելով Դիարբեքիը կամ Ամիդ քաղաքը»:³³

Ղարա-Յուսըֆ յաջողեցաւ Կարա-կոյունլուներու եւ Քիւրտիստանի ու Հայաստանի քիւրտ ամիրաներու ուժերը միացնել եւ կազմակերպել հսկայ բանակ մը, եւ սկսաւ նուաճել Երզնկայի եւ Վանայ լիճի շրջանները: Ղարա-Յուսըֆ 1411թ., գրաւեց Բաղդադը, կործանեց Ջելաիրեաններու պետութիւնը, ու հիմնեց ընդարձակ պետութիւն, որ կ'ընդգրկէր Իրաքը, Ատրպատականը, Քիւրտիստանն ու Հայաստանի մեծագոյն մասը:

Կարա-կոյունլուներու իշխանութեան տարիներուն, հայ ժողովուրդի վիճակը նախանձելի չէր. կը շարունակուէր հարստաւարումը եւ երկրի հարստութեան կողոպուտը. Գ. Ե. Կիրակոսեան կը գրէ, «Այսպիսով, XV դ. հայ բնակչութիւնն ընկած էր թուրքմէն նուաճողների հարկային լծի տակ եւ անողորքաբար հարստաւարում ու կողոպուտում էր: Նուաճողներն անողորք վամպիրի նման ծծում էին հայ բնակչութեան կենսանիւթը՝ նրան մատնելով սովի ու թշուառութեան: Հարկերից զատ, թուրքմէն ռազմաքոչւորական ազնւականութեանը շահոյթ էր բերում գերիների վաճառքը: Նրանք գերի վերցրած հայերին ու վրացիներին վաճառում էին Կահիրէի, Բաղդադի, Ալեքսանդրիայի, Կոստանդնուպոլսի եւ այլ քաղաքների շուկաներում»:³⁴

Անհրաժեշտ է այստեղ յիշել, որ Կարա-կոյունլուներու իշխանութեան պատմաշրջանը (1411-1471թ.), տես Գծացուցակ թիւ 1, իր դժուարութիւններով բաղդատմամբ իրեն նախորդած Հուլաղեաններու Պետութեան պատմաշրջանին (1231-1411թ.) աւելի թեթեւ եղած է հայ ժողովուրդին համար:

Կարա-կոյունլուներու գերիշխանութեան տարիներուն, տեղի ունեցած են պատմական մեծ արժէք ունեցող երկու դէպք. առաջինը 1441թ., Հայոց Հայրապետական Աթոռի հաստատումը

³³ Հ. Գ. Ժամկոչեան, Ա. Գ. Աբրահամեան, Ս. Տ. Մելիք-Բախշեան, Ս. Պ. Պողոսեան, Հայ ժողովրդի Պատմութիւն, էջ 596:

³⁴ Գ. Ե. Կիրակոսեան, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ Թուրքմէն Ցեղերի Արշաւանքների Շրջանում, էջ 154:

Ս. Էջմիածնի մէջ, եւ երկրորդը 1465թ., Հայկական թագաւորութեան վերականգման փորձը Վասպուրականի Աղթամար կղզիին մէջ. ինչպէս պիտի անդադառնանք յաջորդ էջերուն:

8. Հայոց Հայրապետական Աթոռի Հաստատումը

Ս. Էջմիածինի Մէջ 1441թ.

Կիլիկիոյ մէջ հիմնուած Հայկական թագաւորութեան անկումէն ետք 1375թ., եւ անոր յաջորդող տասնեակ տարիներուն, բազմահազար հայութեան հեռացումը Կիլիկիայէն՝ աւելի տկարացուցին եւ Հայ ժողովուրդի մեծամասնութենէն մեկուսացուցին Կիլիկիոյ մէջ հաստատուած Մայր Աթոռը:

Կիլիկիոյ թագաւորութեան անկումէն ետք, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը կը մնար Կիլիկիոյ մէջ, իսկ Հայաստանը գուրկ էր դեկավարող կեդրոնէ, ոչ թագաւորութիւն կար, ոչ ալ կաթողիկոսական աթոռ. միակ աթոռը Աղթամարինն էր, որ Ս. Էջմիածինէն բաւական հեռու էր:

Հայկական պետականութեան բացակայութեան հետեւանքով, հայ ժողովուրդը իրար միացնելու միակ հաստատութիւնը կը ներկայանար հայ եկեղեցւոյ Մայր Աթոռը: Վերջինս, գտնուելով Հայաստանէն դուրս, եւ պետականութեան բացակայութեան պատճառով կը գտնուէր վտանգուած վիճակի մէջ: Պատմութիւնը մեզ կը յուշէ, թէ Բագրատունեաց հարստութեան անկումէն ետք, 1066թ. Մայր Աթոռը Հայաստանէն տեղափոխուեցաւ հեռաւոր Կիլիկիա, հիմնականօրէն գտնուելու հայկական իշխանութեան պաշտպանութեան ներքոյ. ինչպէս անդրադարձանք 6-րդ բաժինին մէջ: Այժմ 15-րդ դարուն, պատկերը փոխուած է՝ հակառակ ուղղութեամբ. Կիլիկիոյ մէջ Մայր Աթոռը վտանգուած էր մահմետական ուժերէն, եւ ենթակայ էր Հոռմի պապի կաթօլիկ եկեղեցւոյ ճնշումին: Միւս կողմէն Կարա-կոյունլուներու իշխանութիւնը Ջահանշահի օրով՝ կը քաջալերէր հայոց այդ քայլը, յաւելեալ սիրաշահելու հայութիւնը, ի հարկէ աւելի հեշտ իշխելու եւ շահագործելու միտումով:

Այդ եւ այլ հարցեր պատճառ եղան, որ 1440թ. Հայ եկեղեցւոյ կարեւոր դէմքերը՝ մտածեն Մայր Աթոռը Կիլիկիայէն տեղա-

փոխեն Հայաստան. սակայն անոնք հանդիպեցան Գրիգոր Թ. Մուսաբեկեան կաթողիկոսի (1439-1441թ.) մերժման:

Դեպքերը զարգացան եւ 1441թ. Ազգային-հոգեւորական ընդհանուր ժողով մը տեղի ունեցաւ Երեւանի մէջ, ապա փոխադրուեցաւ Ս. Էջմիածին: Պատմիչ Թովմա Մեծոփեցին³⁵, ներկայ եղած է այդ ժողովներուն, եւ ասոր պատմականը գրած է իր «Յիշատակարանը» երկին մէջ, որ կը վերաբերի Հայոց Մայր Աթոռը Կիլիկիայի մայրաքաղաք՝ Սիսէն Վաղարշապատ տեղափոխելուն: Ըստ անոր, պատուիրակներու թիւը 300-էն աւելի էր, որոնց մէջ կային նաեւ աշխարհիկ դէմքեր: Ժողովականները որոշեցին չճանչնալ Սիսի կաթողիկոսը, որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, եւ նոր կաթողիկոս ընտրեցին Կիրակոս Վիրապեցին. տես Գծացուցակ թիւ 3 գիրքին վերջաւորութեան:

Պատմական այս զարգացումի նպատակներէն մէկն էր՝ Հայ ազգը հեռու պահել Արեւմտեան երկիրներու եւ Հռոմի պապական ոտնձգութիւններէն. նաեւ Հայաստանը տիրացած Արեւելեան մահմետական իշխանութիւններուն վստահեցնել, թէ հայ ազգը կ'ուզէ պահպանել իր ինքնութիւնը, առանց օտարներու եւ կամ քրիստոնէական պետութիւններու միջամտութեան: Ու վերջապէս գրեթէ 4 դար ետք, Կաթողիկոսական Մայր Աթոռը վերահաստատուեցաւ հայոց նուիրական հողին վրայ՝ Արարատեան դաշտին մէջ:

Քաղաքական խորք ունեցող այս շարժման մէջ Աղթամարի կաթողիկոսական աթոռը եւ տասնեակներով վանքեր ու միաբանութիւններ, երկրորդեցին Մայր Աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածինի մէջ:

Աղթամարի Զաքարիա Գ. կաթողիկոսը, շատ դժգոհ մնաց Կիրակոս Վիրապեցիի ընտրութեամբ, որովհետեւ ան ինքզինք աւելի արժանի կը գտներ բազմելու այդ աթոռին: Մեր այս ուսումնասիրութեան կեդրոնական դէմքը կը ներկայանայ Զաքարիա Գ. Աղթամարի կաթողիկոսը, ինչպէս որ պիտի անդրադառնանք յաջորդ էջերուն: Ան եղած էր Աղթամարի Դաւիթ Գ. կաթողիկոսի

³⁵ Թովմա Մեծոփեցիի մասին տես Գծացուցակ թիւ 2:

(1393-1433) աթոռակիցը 1419թ. ի վեր.³⁶ ու երբ կաթողիկոսը մահացաւ 1433թ. Զաքարիա Գ. եղաւ Աղթամարի կաթողիկոս մինչեւ իր վախճանը 1464թ.:

Զաքարիա Գ. յուսահատեցաւ, եւ շարունակեց իր գործունէութիւնը ու երկու տասնեակ տարիներ ետք իրականացուց իր ցանկութիւնը եւ Զահանշահ³⁷ սուլթանի օգնութեամբ բազմեցաւ Հայոց ընդհանրական կաթողիկոսի գահին, ինչպէս որ պիտի անդրադառնանք յաջորդ էջերուն:

Մաղաքիա Օրմանեան կը յիշէ, «*Հենց ինքը՝ Թովմա Մեծոփեցին էր, որ բանակցում էր Զաքարիայի հետ եւ «յաջողեցաւ Զաքարիան ալ իր կողմը շահիլ, եւ Սիւնեցի ու Վասպուրականցի վարդապետներուն գործակից ընել Աղթամարցիներն ալ, անշուշտ Զաքարիայի աչքին ցոլացնելով, Աղթամարէ Էջմիածին անցնելու հնարաւորութիւնը»*»³⁸ Ուրեմն, Զաքարիա Գ-ի ակնկալութիւնները հիմք ունէին. թէեւ ան վիրաւորուեցաւ, բայց չ'ընդդիմացաւ Կիրակոս Վիրապեցուի ընտրութեան, որովհետեւ վերջինս Աղթամարի հին միաբաններէն էր, ու բարեհաճ դիրք ունէր Աղթամարի աթոռին հանդէպ:³⁹ Այսինքն Աղթամարի հին միաբաններէն մէկը՝ Կիրակոս Վիրապեցին բազմեցաւ Ս. Էջմիածինի աթոռին. ինչ որ կը հաստատէ Աղթամարի կաթողիկոսութեան գործունէութեան կարեւորութիւնը Հայաստանի պատմութեան մէջ, այն ժամանակներուն երբ Մայր Աթոռը կը գտնուէր հեռաւոր Կիլիկիոյ մէջ:

Լէօն 1441թ. պատմական զարգացումը կը բնորոշէ, «*Նոր Պատմութեան նախօրեակին հայ եկեղեցական կազմակերպութեան մէջ տեղի ունեցաւ մի շարժում, որ ունէր ազգային խոշոր նշանակութիւն*»⁴⁰ Ու թէեւ Լէօն կը շեշտէ, թէ ինչ որ տեղի ունե-

³⁶ Ներսէս Վ. Ակիմեան, Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 85, 86:

³⁷ Այս սուլթանի անունը յիշուած է Զահանշահ եւ Զահանշահ:

³⁸ Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Բ. հատոր, սիւնեակ 2442:

³⁹ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 589, 590:

⁴⁰ Լէօ, Երկերի Ժողովածու, 3 հատոր, էջ 129:

ցաւ Կաթողիկոսական Աթոռի տեղափոխութիւն չէր, քանի որ Սիսի Կաթողիկոսական Աթոռը շարունակեց իր գոյութիւնը: Այո, Սիսի Աթոռը շարունակեց իր գոյութիւնը, սակայն ան այլեւս Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռը չէր:

Պատմական այս զարգացումը մեր պատմութեան մէջ ունեցաւ իր արձագանգները, որոնցմէ մէկն էր, 24 տարի ետք տեղի ունեցած հայկական թագաւորութեան հիմնադրման կարեւոր քայլը, երբ 1465թ. Սմբատ Արծրունին օծուեցաւ թագաւոր. հարկաւոր է առնչութիւն տեսնել 1441թ. եւ 1465թ. տեղի ունեցած զարգացումներուն միջեւ, ինչպէս պիտի փորձենք լուսաբանել, յաջորդ էջերուն մէջ:

Այսպէս, կաթողիկոս Կիրակոս Ա. Վիրապեցիի ընտրութեամբ Մայր Աթոռի մէջ հաստատուեցաւ Վասպուրականի հոգեւորականներու ազդեցութիւնը, որ դժգոհութիւն յառաջացուց Հայաստանի արեւելեան գաւառներու եպիսկոպոսներուն մօտ, որոնք 1443-ին, դիմելով Երեւանի կարա-կոյունլուներու տիրակալ՝ Յաղուբ բէկին, կաթողիկոս Կիրակոս Ա. Վիրապեցիին հեռացուցին պաշտօնէն եւ Գրիգոր Ժ. Զալալբէկեանցին ձեռնադրեցին կաթողիկոս:

Բ. ԳԼՈՒԽ

ՍՄԲԱՏ ԱՐԾՐՈՒՆԻ-ՍԵՖԵՂԻՆԵԱՆ ԱՂԹԱՄԱՐԻ ԹԱԳԱԽՈՐ

9. Հայկական Պետականութեան Հիմնադրման Գաղափարն ու Հիմքերը

Բաւական երկար եղաւ մեր ուսումնասիրութեան Ա. գլուխը, որպէս «Նախամուտք». բայց մեր կարծիքով անցեալ գլուխի բաժինները ուժգին կերպով շաղկապուած են մեր հիմնական նիւթին հետ:

Հայոց պետականութեան անկումը Կիլիկիոյ մէջ, եւ Հայաստանի մէջ հաստատուող մահմետական օտարազգի տիրապետութիւնը մեծ հարուած հասցուցին հայ նախարարական տուններուն, որոնք կը հանդիսանային մեր ազգի պատմութեան ամուր հիմքերն ու սիւները:

Այդ նախարարական տուններէն մեծ մաս մը, ոչնչացան ու ընդմիջտ հեռացան պատմութեան բեմէն, միւսները տկարացան եւ զրկուեցան իրենց հողային իրաւունքներէն, ի բացի մատներու վրայ հաշուող տուններ, որոնք լեռնային եւ անառիկ վայրերու մէջ՝ իրենց գոյութիւնը կը պահէին. այդ վայրերէն կարելի է յիշել Սիւնիքը, Խաչենը, Արագածոտնը, Վայոց ձորը, Զէյթունը, Շատախը, Աղթամարը, Խուրը եւ Սասունը:

Բնականաբար, եկեղեցականները կեդրոնացան եկեղեցւոյ վարչական եւ կրօնական հարցերուն վրայ. իսկ հայկական պետականութեան վերականգման եւ ընդհանրապէս քաղաքական եւ ռազմական հարցերով՝ պիտի զբաղուէին հայ ազնուականները, որոնք նախարարական տուններու գաւակներն էին: Սակայն պատմաքաղաքական ընդհանուր իրավիճակը հայ ազնուականութեան առջեւ նման գործունէութեամբ զբաղուելու բոլոր դրոշները փակած էր, ինչ որ անոնց մղեց որոնելու այլ ճանապարհներ, եւ միակ ճանապարհը եկեղեցականներու շարքերը համալրելն

էր: Հայ նախարարական տուներէն շատերը, որոնցմէ կարելի է յիշել Արծրունիները, Պոռշեանները, Օրբելեանները եւ Հասան-Ջալալեանները մտան հայ եկեղեցոյ ծառայողներու շարքերը:⁴¹

Հայ նախարարական տուներու սքեմաւորման մասին մէջբերենք հետեւեալ օգտաշատ բացատրութիւնը Վասպուրականագէտ Վրէժ Վարդանեանէն, «Մահմեդական տիրակալների գերիշխանութեան պայմաններում հայ եկեղեցու մէջ կրօնական եւ աշխարհիկ իշխանութեան իրաւունքների միահիւստումը չէր հակասում Ղուրանի ոգուն, քանի որ ելնելով վերջինիս գծած սկզբունքներից, մահմեդական տերութիւններն էլ էին կազմակերպւում աստուածապետական, թեոկրատական սկզբունքներով: Ահա այս իրողութիւնից օգտուելով, հայածէս եկեղեցին, մահմեդական պետականութեան շրջանակներում դառնում է հայ ժողովրդի համար մի տեսակ քաղաքական առանձնաշնորհում: Սրանով էլ բացատրւում է այն հանգամանքը, որ հայ աշխարհիկ ֆեոդալները, իրենց կալուածները ապօրինի բռնագրաւումներից զերծ պահելու համար մեծ մասամբ հազնում էին եկեղեցականի սքեմ, ուժեղացնելով Հայաստանի վանական կալուածատիրութիւնը եւ հայ եկեղեցու աստուածապետական հիմքերը»:⁴² Մէկ խօսքով, Հայ եկեղեցին, որպէս կայուն հաստատութիւն հանդիսացաւ փրկիչը եւ վահանը հայ նախարարական որոշ տուներուն, որոնք ապաստանեցան անոր հովանաւորութեան...:

Այս գործընդացը, հայ նախարարական տուներու սքեմաւորումը շատ աւելի զօրաւոր կերպով տեղի ունեցաւ Վասպուրականի մէջ, որ իր աշխարհագրական դիրքով Հայաստանի հարաւը գտնուելով՝ աւելի մօտիկ էր մահմեդական աշխարհին, եւ բնականաբար վերջինիս ազդեցութիւնը շատ աւելի ուժգին էր այնտեղ: Այդ ամենակարեւոր դրդապատճառն էր, ի կողքին այլ պատճառներու, որոնց անդրադարձանք 6-րդ բաժինին մէջ, որ մղեց Արծրունիներուն 1113թ., բաժանուելու հեռաւոր Կիլիկիոյ մէջ գտնուող

⁴¹ Պետրոս Յովհաննէսեան, Հայ Ազատագրական Շարժումները (V դարի կէս – XVIII դարի վերջ), էջ 10:

⁴² Վրէժ Վարդանեան, Վասպուրականի Արծրունեաց Թագաւորութիւնը, էջ 254:

Մայր Աթոռէն, եւ հիմնել առանձին կաթողիկոսական աթոռ մը Աղթամարի մէջ, ու ամուր պահել զայն մօտաւորապէս ութ երկար դարեր: Այս պատմական զարգացումը, կրօնքի եւ հաւատքի ազդակներէն աւելի քաղաքական եւ վարչական խորք ունէր:

Աղթամարի եւ իր շրջակայքին մէջ իրենց գոյութիւնը շարունակող երբեմնի Վասպուրականի Արծրունեաց թագաւորական ընտանիքի շառաւիղները՝ Արծրունի Սեֆեդիներեանները, տակաւին վառ կը պահէին հայկական անկախ պետականութեան յիշատակները: Աղթամարի մէջ թագաւորութիւն հիմնելու համար, նախ անհրաժեշտ էր պատրաստել քաղաքական բեմը, եւ այդ ընելու համար քաղաքական պատուէրներ տրուեցան Վասպուրականի գրիչներուն. ու պէտք է ըսել, թէ անոնք շատ յաջող կերպով իրականացուցին այդ առաքելութիւնը:

Քաղաքական այս գործընթացը, տեղի կ'ունենար Աղթամարի կաթողիկոսական աթոռի շունչով, «Հենց Վասպուրականում է, որ, առաւել քան այլուր, գուրգուրւում էին հայկական պետականութեան յիշատակները: Վասպուրականի ժամանակագիրները իրենց յիշատակարաններում բազմիցս դիմում էին Ամենաբարձրեալին ու խնդրում «վերանորոգել հայոց ազգի խափանուած թագաւորութիւնը»: Հայաստանի պետականութեան վերականգնման գաղափարը այստեղ երբեք լքուած չէր: Եկեղեցական միջավայրում փայփայւում էր այն յոյսը, թէ աստուածային բարեխօսութեամբ կամ որեւէ հզօր տիրակալի միջամտութեամբ ի վերջոյ այն կը կատարուի»:⁴³

Վասպուրականի հայութեան մօտ թագաւորական եւ կաթողիկոսական իշխանութիւնները միացուած էին. այդ կարելի է տեսնել տեղական ձեռագիրներու յիշատակարաններուն մէջ, «Այսպէս՝ 1431 թ. գրուած մի յիշատակարանում կարդում ենք. «գոր տէր Աստուած պահեսցէ անսասան զաթոռ հայրապետին եւ զթագաւորին մերոյ ազգին եւ բարձրացուցէ զեղջիւր Միոնի ի մէջ Հայաստան»:

⁴³ Պետրոս Յովհաննէսեան, նոյնը, էջ 11, 12:

եայց...».⁴⁴ 1458 թ. մի յիշատակագրող մաղթում է. «Տէր Աստուած... պահեսցէ անսասան զաթոռ հայրապետութեան եւ թագաւորական քրիստոսադատան».⁴⁵ Այսպէս, Արծրունի Սեֆեդիներէն սկսած էին տարածել այն գաղափարախօսութիւնը, թէ Աղթամարի կաթողիկոսական աթոռը՝ թագաւորական աթոռ էր, թէ անոր կաթողիկոսները Գագիկ Արծրունիի ցեղէն էին:

Ճիշդ է, հայկական պետականութեան վերականգման փորձը տեղի ունեցաւ եկեղեցականներու կողմէ. բայց այդ չի նշանակեր, որ հայ աշխարհիկ աւատատէրերը մաս չունէին այդ շարժման մէջ: Եկեղեցական սքեմ հազած այս աշխարհիկներու անդամներն էին, որ Աղթամարի մէջ 1465թ. հայոց թագաւոր օծեցին Սմբատ Արծրունին:⁴⁶

10. Զաքարիա Գ. Ղիւանագիտական եւ Քաղաքական Յաջողակ Գործիչ

Բնականաբար քաղաքական երազանքները՝ պետականութեան վերականգնումը, Աղթամարի Աթոռին կը ներշնչէր, թէ այդ կարելի չէր ունենալ առանց սուր եւ զենք ունենալու, ի կողքին խաչին եւ խունկին: Աղթամարի Զաքարիա Գ. կաթողիկոսը, որ կը ներկայանար Արծրունի-Սեֆեդիներէններու ղեկավար դէմքը, եղաւ մեր պատմութեան 15-րդ դարու հայ ազատագրական շարժման ռահ-վիրան ու հսկայ գործիչը. ան ի կողքին իր ունեցած ղիւանագիտական եւ այլ հմտութիւններուն, նաեւ զինուորական ճարտար գործիչ էր: Գուցէ Զաքարիա Գ. լաւ ուսումնասիրելով Քրիստոսի կեանքն ու գործունէութիւնը ծանօթ էր Քրիստոսի խօսքին, «Ան որ թուր չունի, թող իր հանդերձը ծախէ ու իրեն թուր մը ծախու առնէ»:⁴⁷ Խօսք մը, որ ինքնապաշտպանուելու շատ յստակ պատգամ էր:

⁴⁴ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 588. քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակար., Ա., էջ 412:

⁴⁵ Հայոց Պատմութիւն, նոյնը, էջ 588. քաղուած Յուցակ հայերէն ձեռագրաց վասպուրականի, սունեակ 428:

⁴⁶ Հայոց Պատմութիւն, նոյնը, էջ 589, 590:

⁴⁷ Ղուկաս 22:36:

Աղթամարի կաթողիկոսութիւնը Զաքարիա Գ-էն առաջ ունեցած է նոյն անունով երկու այլ կաթողիկոսներ: Զաքարիա Ա. (1301-1336), որ գնաց Բաղդադ եւ հանդիպեցաւ մոնղոլ խանին 1318թ. եւ ձեռք բերաւ եկեղեցիները հարկերէն ազատելու հրաման: Սակայն, 1330-ական թուականներուն երբ մոնղոլական Հուլավեան պետութիւնը թեւակոխեց իր քայքայման պատմաշրջանը. 1335թ. Արփա իշխանը, որ քրիստոնէայ էր, սպաննուեցաւ եւ գահին բազմեցաւ Մուսի խանը, սակայն իսկական իշխողը Ալի փաշա Նոյինն էր: Վերջինս սկսաւ հալածել քրիստոնէաներուն, քանդեց բազմաթիւ եկեղեցիներ Խլաթի եւ Սալմաստի մէջ: Սամուէլ Անեցին յիշած է, «Այդ անգութ արարքներին վերջ տրուեց շնորհիւ Զաքարիա Ա-ի միջամտութեան: 1336թ. Աղթամարի ձերունագարդ հայրապետը մեկնեց Ալի փաշայի մօտ եւ վերացնել տուեց նրա «արձակած հրամանը»»:⁴⁸

Զաքարիա Ա. իր գործերով եղաւ Աղթամարի Աթոռի լաւագոյն կաթողիկոսներէն մէկը. ան մեծ հեղինակութիւն վայելեց տարածքաշրջանին մէջ. իր այս քայլը մեծ արձագանգ ունեցաւ. գրիչները զինք կոչեցին արքայազարմ, «Այս առթիւ Անեցու շարունակողը Զաքարիա Ա-ին յիշում է որպէս «պայազատ եւ արքայազարմ», շեշտելով նրա՝ թագաւորական (Արծրունեաց) իշխանութեան ժառանգորդ լինելու հանգամանքը»:⁴⁹

Զաքարիա Ա.-ի յաջորդներէն՝ Զաքարիա Բ. (1369-1393) ենթարկուեցաւ ծանր ողբերգութեան ու նահատակուեցաւ, երբ Աղթամարի կղզիի ղիւմազի ցամաքին վրայ գտնուող Ոստան քաղաքի քիւրտ իշխանը ու կրօնական ծայրայեղութեամբ ու տգէտութեամբ վարակուած ամբոխը անոր չարաչար սպաննեցին, «Մոլեկրօն ամբոխը յարձակում է կաթողիկոսի վրայ եւ դաժանաբար ձեռն: Ապա նրա պարանոցին չուան գցելով ու մերկացնելով՝ քարշ են տալիս Ոստանի փողոցներում, շարունակ գանակահարելով: Տարաբախտ կաթողիկոսը աղօթքներ մըմնջալով՝ նահատակում է

⁴⁸ Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն, էջ 48, 49. քաղուած Սամուէլ Անեցի եւ շարունակողները, էջ 159:

⁴⁹ Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 48, 49:

1393թ. Յունիսի 25-ին»:⁵⁰ Ան կոչուեցաւ Զաքարիա Բ. նահատակ կաթողիկոս:

Զաքարիա Բ-ին յաջորդեց իր եղբայրը Դաւիթ Գ. (1393-1433), որու մահէն ետք իրեն յաջորդեց իր եղբորորդին Զաքարիա Գ., որ կը ներկայանայ մեր ուսումնասիրութեան կարեւոր դէմքը:

Զաքարիա Գ. լաւ գիտակցելով, որ ազատագրական պայքարի կարեւոր գործօններէն էր նաեւ ռազմական ուժը, ան յաջողած էր ստեղծել փոքրիկ զօրագունդ մը, «Նա ստեղծել էր լաւ զինուած ու կարգապահ մի զօրաջոկատ, որը պահպանում էր կաթողիկոսական աթոռն ու Արծրունեաց կալուածքները մահմէդականների անընդհատ յարձակումներից: Այդ զօրաջոկատը բազմիցս տպաւորիչ յաղթանակներ էր տարել ասպատակիչ քրդերի դէմ»:⁵¹

Զաքարիա Գ. կաթողիկոսը կը ներկայանար իր տարածքի հայ ժողովուրդի տիրակալը. ան ընծայուած ամէն առիթներէն կ'օգտուէր իր յարաբերութիւնները ամրացնելու թուրքմէն կարակոյունլուներու տիրակալ Զահանշահին հետ, որուն օգնութեամբ իրականացնել կ'ուզէր իր մեծ երազները: Իր մասին ժամանակակից գրիչները շատ դրականօրէն գրած են, «սքանչելի մեծ իմաստասէր, քաջ եւ արի է». «պատուական հայրապետ, ուղղափառ, անբիծ ախոյեան եւ յաղթող, սրբասէր, աղքատասէր եւ ողորմած, եզակի էր բովանդակ Հայոց աշխարհում»:⁵² Ան իր ժամանակի հայ ղեկավարներէն մէկն էր, որուն ստիպուած կը յարգէին մահմետական տիրակալները, ինչպէս եւ Զահանշահը:

Զաքարիա Գ-ի օրով, Վասպուրականին կը տիրէր Ղլիճ Ասլան ամիրան, որ մշտապէս կը հարստահարէր տեղի հայութիւնը եւ կը կազմակերպէր արշաւանքներ, իրագործելով թալան եւ կողոպուտ: Ան կը սպառնար նաեւ կողոպտել Աղթամարի մէջ կուտակուած՝ գոյացած կաթողիկոսական աթոռի հարստութիւնը: Զաքարիա Գ. ստիպուեցաւ անձամբ երթալ Պարսկաստանի Խոյ

քաղաքը եւ խնդրել Զահանշահ սուլթանի օգնութիւնը, «Նա սոսկ եկեղեցական չէր, այլեւ հմուտ ղիւանագէտ էր ու զինուորական: Դեռեւս 1458թ., երբ Վանի կառավարիչ Ղլիճ Ասլանն աւերում ու ոչնչացնում էր երկրամասը, նա անձամբ գնաց Խոյ, ներկայացաւ Զահանշահին եւ համոզեց արշաւել աւարառուի վրայ, որը եւ տեղի ունեցաւ: Դա երկրամասը փրկեց յետագայ աւերումներից, իսկ Զաքարիայի հեղինակութիւնը խիստ բարձրացաւ»:⁵³ Զահանշահ իր շահերը գերադասելով՝ դրական արձագանգեց Զաքարիա Գ-ի խնդրանքին. տեղի հայութիւնը փրկուեցաւ Ղլիճ Ասլանի՝ հրէշէն:

Զաքարիա Գ. մեծ հեղինակութիւն կը վայելէր. եւ իր դիրքը աւելի կը հզօրանայ հայոց եւ օտարներու մօտ, երբ ան ոտքի կը հանէ Վասպուրականի հայութիւնը զենքի ուժով դիմադրելու քրտական Ռոժակի ցեղախումբին, որ փորձեց յարձակում գործել գրաւելու եւ կողոպտելու Աղթամար կղզին եւ Ս. Խաչ եկեղեցին, «1459թ. ռոժիկ քրդերը Սեիդ-Ալու գլխաւորութեամբ ասպատակել են Գավաշից երկիրը: Նրանք 12 օր մնացել են Ախվանց գիւղում եւ պատրաստել են երկու լաստանաւ՝ Աղթամար մտնելու եւ կաթողիկոսարանի հարստութիւնը յափշտակելու նպատակով: Զաքարիա կաթողիկոսը հաւաքել է մարդկանց, կռուել քրդերի դէմ, խլել լաստանաւերը եւ նրանց հետ շարտել Վանայ լճի ափերից: Այնուհետեւ Զաքարիան գնացել է Զահանշահի մօտ, նրան տեղեկացրել քրդերի կատարած ասպատակութիւնների մասին եւ օժանդակութիւն խնդրել: Զահանշահն, ընդառաջելով Զաքարիայի խնդրանքին, քրդերին պատժելու մտադրութեամբ Խոյից եկել է Վասպուրական: Այսպիսով, համարձակ եւ ձեռներեց Զաքարիան կարողացել է վերացնել կաթողիկոսարանին սպառնացող վտանգը»:⁵⁴

Մէջբերման մէջ յիշուած Ախվանց կամ Ախավանք (Ահավանք) գիւղը, ուր քիւրտերը մնացած են 12 օր պատրաստելու իրենց լաստանաւերը անցնելու համար յարձակման. այդ գիւղը

⁵⁰. Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 60:

⁵¹. Պետրոս Յովհաննէսեան, նոյնը, էջ 11, 12:

⁵². Նոյնը, էջ 589, 590. քաղուած Նօտարք հայոց, էջ 209:

⁵³. Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 589, 590:

⁵⁴. Գ. Ե. Կիրակոսեան, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ Թուրքմէն Յեղերի Արշաւանքների Շրջանում, էջ 331:

կը գտնուէր Վանայ լիճի ափին՝ Աղթամար կղզիին դիմաց՝ դէպի հարաւ արեւմուտք, տես քարտէսը գիրքին վերջաւորութեան: Լաստանաւերը կարելոր բեռներ կամ մարդիկ եւ անասուններ, ափէ-ափ որպէս փոխադրամիջոց կը գործածուէին. գերանները կողք-կողքի կապելով լաստ կը պատրաստուէր. աւելի դիւրաշարժ դարձնելու եւ բեռնատարողութիւնը աւելցնելու նպատակով անոր տակին ուռեցուած տիկեր կ'ամրացնէին:

Այսպէս, Ջաքարիա Գ-ի ստեղծած փոքրիկ զօրագունդը, պիտի դառնար հայկական նոր թագաւորութեան բանակի կորիզը, եթէ այս քաղաքական երազը իրականացուէր եւ շարունակուէր. ի հարկէ այդ ռազմունակ կորիզին պիտի միանար Վասպուրականի հայութիւնը, որ զենքի ուժով կանգնած էր պաշտպանելու իր սրբազան կեդրոնը՝ Աղթամարը:

11. Ջաքարիա Գ. Ամենայն Հայոց Կաթողիկոս

Ինչպէս անդրադարձանք Ջաքարիա Գ-ը բազմաթիւ երազանքեր ունէր. անոնցմէ մէկն էր Ամենայն Հայոց կաթողիկոս դառնալը, բայց այդ ինքնանպատակ չէր, այլ աւելին ան կը ձգտէր Էջմիածինի եւ Աղթամարի կաթողիկոսական աթոռներու միացումը. այդ կատարելով զօրացնել իր դիրքերը, հեռու նպատակ ունենալով հիմնել հայկական թագաւորութիւն մը Վասպուրականի մէջ, կեդրոն ունենալով Աղթամար կղզին: Այդ բոլորը ան իրականացուց, օգտագործելով իր բարեկամական կապերը Ջահանշահին հետ:

Ջաքարիա Գ-ի կեանքն ու գործունէութիւնը մեզ կը յուշէ, որ ան մեծ վարպետութեամբ լաւ գիտէր օգտուիլ հրամցուած առիթներէն. որոնցմէ մէկն էր Ջահանշահի դժգոհութիւնը Գրիգոր Ժ. կաթողիկոսէն, «*Ջահանշահը, որը խիստ դժգոհ էր Գրիգոր Ժ. Մակվեցի Ջալալբեկեանց կաթողիկոսից (երեւի հարկերի վճարման յապաղման համար), կարգադրեց Ամենայն հայոց կաթողի-*

կոս ընտրել Ջաքարիային»:⁵⁵ Քաղաքականութեան մէջ, պատեհ առիթներէն օգտուիլը յաջողութիւն ձեռք բերելու մեծ երաշխիք է. եւ այդ առնչութեամբ Ջաքարիա Գ. մի քանի անգամ օգտուեցաւ ընձեռուած առիթներէն: Պատեհ առիթներէն օգտուիլու գործընթացը շատ յստակ է թուրք ժողովուրդի պատմութեան ընթացքին սկսեալ սելջուկներէն մինչեւ օսմանցիները ու ներկայի թրքական հանրապետութիւնը:

Հարկաւոր է մէջբերել Առաքել Դավրիժեցիէն⁵⁶ մեզի հասած պատմական տեղեկութիւնները, ուր ան մանրամասն կը պատմէ, թէ ինչպէս Ջաքարիա Գ. բազմեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռին: Ջաքարիա Գ. օգտուելով Ջահանշահի մեծ յաղթանակներէն, երբ սուլթանը գրաւելով շատ երկիրներ՝ յաղթական վերադարձաւ իր լայնածաւալ պետութեան մայրաքաղաք Թավրիզը, «*Մրան ընդառաջ գնաց Աղթամարի Սուրբ Խաչի աթոռակալ տէր Ջաքարիա հայրապետը, որ արքայազն էր՝ Գազիկ արքայի թոռներից ու շառաւիղից, բազմաթիւ ընծաներով ու նուէրներով, որոնք սիրով ընդունեց արքայից արքայ Ջահանշահ փաղիշահը եւ Բեգում թագուհին. (նրանք) պատուեցին, մեծարեցին կաթողիկոսին, նրան տուին զգեստանուէր եւ պարգեւեցին մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի աջը եւ պատրիարքութեան պատիւ: Մա (կաթողիկոս) աստծու առաջնորդութեամբ եւ սուրբ Լուսաւորչի կամքով ու փաղիշահի հրամանով եկաւ աստուածարեալ, աստուածանկար սուրբ Գրիգորաշէն եւ երկնանման կաթողիկէ Սուրբ Էջմիածին՝ սուրբ Գրիգորի առաքելաշնորհ աթոռը եւ նստեց իբրեւ ինքնակալ պատրիարք ընդհանուր ամբողջ քրիստոնէական ազգի (հայերի) համար, որ սփռուած է աշխարհի բոլոր ոլորտներում, եւ ողջ աշխարհը այնպէս արեց, որ լինեն մի հօտ եւ մի հովիւ...»:⁵⁷ Առաքել Դավրիժեցի մեծ ոգեւորութեամբ կը խօսի Ջաքարիա Գ-ի Ամենայն Հայոց կաթողիկոս դառնալուն,*

⁵⁵ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Բ., էջ 590:

⁵⁶ Առաքել Դավրիժեցի (1590–1670). գրած է «Պատմութիւն» աշխատութիւնը, որ կ'ընդգրկէ պարսկա-օսմանեան պատերազմի պատմութիւնը տես Գծացուցակ թիւ 2:

⁵⁷ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 329, 330:

այդ քայլին մեջ տեսնելով հայութիւնը միացնելու գործոնթացը՝ յիշելով «որ լինեն մի հօտ եւ մի հովիւ»։ այդ հովիւը նկատելով Ջաքարիա Գ-ին։

Ջաքարիա Գ-ի Թավրիզ երթի մասին յիշած է նաեւ պատմիչ Ջաքարիա Քանաքեռցին (Ջաքարիա Սարկավագ)։⁵⁸ Ան գրած է, «Նրան ընդառաջ գնաց Աղթամարի կաթողիկոս տէր Ջաքարիան շատ ընծաներով։ Թագաւորը նրան ընդունեց սիրով, քանզի սիրում էր մեր քրիստոնէայ ազգը։ Նրան թղթով ու հրովարտակով տուեց Սուրբ Էջմիածնի կաթողիկոսութիւնը։ Իր ամուսին Ջահանշահի նման նրան սիրեց նաեւ նրա թագուհի Բեկում խաթունը»։⁵⁹ Շատ հետաքրքրական է Ջաքարիա Քանաքեռցիի յիշածը, թէ Ջահանշահը կը սիրէր քրիստոնէայ հայ ժողովուրդը. աւելին կը թուի, թէ Ջաքարիա կաթողիկոսը սիրաշահած էր նաեւ անոր կնոջ՝ Բեկում խաթունի համակրանքը. թերեւս վերջինս հաւատք ու սէր ուներ քրիստոնէութեան հանդէպ, եւ ան իր կարգին ազդած էր ամուսնու քաղաքական որոշումներուն վրայ. նման օրինակները բազմաթիւ են Միջին Արեւելքի միջնադարեան պատմութեան մէջ։

Այսպէս, Ջաքարիա Գ. բանակցութիւններ վարեց թուրքմէն կարա-կոյունլուներու Ջահանշահ տիրակալին հետ. եւ յաջողեցաւ ստանալ անոր համաձայնութիւնը։ Էջմիածնի Գրիգոր Ժ. կաթողիկոսը գահընկէց եղաւ, եւ 1460թ. Ջաքարիա Գ. բազմեցաւ Էջմիածնի Մայր Աթոռին։ Այս զարգացումով իրականացաւ նաեւ Ջաքարիա Գ-ի մեծ բաղձանքը, դառնալ ողջ Հայաստանի հոգեւոր առաջնորդը։⁶⁰ Երկու տասնեակ տարիներ առաջ ան յաջողեցաւ իրագործել իր երազանքը, երբ 1441թ. հայոց հայրապետական աթոռը Կիլիկիայէն փոխադրուեցաւ Ս. Էջմիածին. թէեւ

⁵⁸ Ջաքարիա Քանաքեռցի (1627–1699). գրած է «Պատմագրութիւն» աշխատութիւնը, որ կ'ընդգրկէ հայոց պատմութիւնը Արշակունիներու ժամանակէն մինչեւ 1699թ.։ Երկի հիմնական մասը 17-րդ դարու պատմութիւնն է, որուն ականատես եղած է. տես Գծացուցակ թիւ 2։

⁵⁹ Ջաքարիա Քանաքեռցի, Պատմագրութիւն, էջ 9։

⁶⁰ Գ. Ե. Կիրակոսեան, նոյնը, էջ 331։

այդ ժամանակ ան այդ աթոռը գրաւելու թեկնածուներէն մէկն էր, ինչպէս անդրադարձանք 8-րդ բաժինին մէջ։

Ու թէեւ Գրիգոր Ժ. կաթողիկոսը գահընկէց եղաւ, սակայն պաշտօնականօրէն Մայր Աթոռի Ամենայն հայոց կաթողիկոսներու ցանկին մէջ Ջաքարիա Գ-ի անունը չի յիշուիր որպէս յաջորդ Գրիգոր Ժ. Ջալալբէկեանի (1443–1465), կը յիշուի իր աթոռակիցը՝ Արիստակէս Բ. Աթոռակալը (1465–1469)։ Այս զարգացումին մասին Համազասպ Ոսկեան կը յիշէ, «Գրիգոր Մակուեցիին մահէն յետոյ կաթողիկոսական գահը կը բարձրանայ իր աթոռակիցը Արիստակէս, որ չորեքամեայ իշխանութենէ վերջ 1470ին կը մեռնի»։⁶¹

Ամենայն Հայոց կաթողիկոս դառնալու համար պայման էր ունենալ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի աջը։ Դէպքերը այնպէս զարգացած էին, որ Ս. Աջը կը գտնուէր Թավրիզ՝ Ջահանշահի մօտ։ Իսկ, թէ ինչպէս Ս. Աջը հասած էր Թավրիզ, մեջբերենք հետեւեալը՝ Ներսէս Ակինեանէն, «Էջմիածին Արիստակէս վարդապետ կաթողիկոսական իշխանութիւնն կը յափշտակէ Մակուեցույ ձեռքէն. եւ յայնմ շփոթութեան մի ոմն ի վարդապետաց կաթողիկոսարանին Սարգիս անուն գողացեալ զԷջմիածնայ զԱջ Լուսաւորչին՝ տարաւ ի Դաւրէժ, եւ սպասէր անդ գալստեան Ջահանշահայ, զի առցէ ի նմանէ հրաման իշխանութեան լինելոյ կաթողիկոս»։⁶²

Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջի գողցուիլը Հայ եկեղեցույ գահին տիրանալու համար, մղուած պայքարի մէկ ցաւալի օրինակն էր, որ կը նշանակէ՝ թէ որոշ Հայ կղերականներու մօտ հաւատքը կը գտնուէր երկրորդ դիրքի վրայ, եւ պատմութեան շարժիչ ուժը եղած էր փառքն ու իշխանութիւնը...։ Իրականութիւն մը, որ դաւերու ընթացքին մեծ վնասներ հասցուցած է հայ ազգին, ու անհրաժեշտ է գայն գիտակցելով որպէս դաստիարակիչ ազդակ յաջողակ առաջ գնալու համար։

Առաքել Դավրիժեցի կը յիշէ, թէ Ս. Աջին հետ, Ջաքարիա Գ. ստացաւ նաեւ խաչվառը եւ ուրարը։ Այդ բոլորը ունենալը անոր

⁶¹ Համազասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի Վանքերը, էջ 589։

⁶² Ներսէս Վ. Ակինեան, Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 90։

տուալ յաւելեալ բարոյական զօրութիւն ուղեւորուելու Մայր Աթոռ Ս. Էջմիածին:⁶³

Զաքարիա Գ-ի հետ, Ս. Էջմիածին ուղեւորուեցաւ իր եղբոր որդին՝ Ստեփանոս, ուր ան ձեռնադրուեցաւ արքեպիսկոպոս. վերջինս կը ներկայանար Զաքարիայի օգնականն ու խորհրդականը, «1448ին կը յիշուի Ստեփանոս իբր «սրբասէր կրօնաւոր», 1461ին ընկերացած է Զաքարիայի դէպ ի Էջմիածին, ուր եւ ընդունեցաւ արքեպիսկոպոսական ձեռնադրութիւն»:⁶⁴ Ստեփանոս արքեպիսկոպոսը Զաքարիա Գ-ի մահէն ետք օծուեցաւ կաթողիկոս եւ շարունակեց իր նախորդի քաղաքական գործունէութիւնը, իր օրով հիմնուեցաւ Աղթամարի թագաւորութիւնը, ինչպէս պիտի անդրադառնանք յաջորդ էջերուն մէջ:

12. Զաքարիա Գ. Եւ Ջահանշահ Բարեկամներ

Պատմական զարգացումները շարունակելէ առաջ անհրաժեշտ է անդրադառնալ այս երկու դէմքերու յարաբերութիւններուն մասին եւ անոնց դիրքորոշման դրդապատճառները:

Ջահանշահի իշխանութեան երեսուն տարիներուն Հայաստանի վիճակը յարաբերաբար խաղաղ եւ առանց ցնցումներու անցաւ, «Երկիրը մի պահ խաղաղուեց կարա կոյունլու Ջահանշահի տիրապետութեան տարիներին (1437-1467 թ.), որի իշխանութիւնը տարածոււմ էր Հայաստանից բացի, Վրաստանի ու Ատրպատականի վրայ: Ջահանշահը խելամտօրէն ամրացրեց ենթակայ երկրամասերի կառավարումը, այնտեղ նշանակեց յատուկ պաշտօնեաներ, ինչ-որ չափով կանոնաւորեց հարկերի գանձումը: Այդ ժամանակ Երեւանը դարձաւ Հայաստանի հիւսիս-արեւելեան մասի մայրաքաղաք, իսկ Վանը՝ հարաւ-արեւմտեան»:⁶⁵

Ջահանշահի ժամանակ Աղթամարը երբեք չ'ենթարկուե-

ցաւ արշաւանքներու եւ կողոպուտի: Իր իշխանութենէն առաջ 1431ին քիւրտ Փիրի Բէկը յարձակեցաւ ու գրաւեց Աղթամար կղզին, եւ օրուայ Դաւիթ Գ. (1393-1433) կաթողիկոսը եւ վանականները ստիպուեցան փախչիլ կղզիէն եւ փրկել իրենց կեանքը:⁶⁶ Դաւիթ Գ. կաթողիկոսը ստիպուեցաւ երկու տարի ապրիլ հալածական, եւ հազիւ 1433թ., կարողացաւ ապահով զգալ եւ դառնալ Աղթամար:⁶⁷

Հայ ժողովուրդի իրավիճակի բարելաւումը Ջահանշահի իշխած երեսուն տարիներուն, բացատրուած է, թէ ան մեղմ եւ հեռատես քաղաքականութիւն կը վարէր քրիստոնէաներուն հանդէպ, ի մասնաւորի Հայոց նկատմամբ:⁶⁸ Այս իրականութիւնը հազուադիւս էր հայ ժողովուրդի պատմութեան մէջ, որ դրականօրէն ազդեց հայութեան վրայ եւ քաջալերեց Վասպուրականի ղեկավարութեան, որ այդ ժամանակ կը ներկայանար Աղթամարի Կաթողիկոսական Աթոռով՝ ձեռնարկելու պետականութեան հիմնադրութեան քայլը:

Ի բախտաւորութիւն, Ջահանշահի այդ մեղմ քաղաքականութիւնը ժամանակագրային առումով տեղի ունեցաւ նոյն ժամանակ, երբ Վասպուրականի հայութիւնը ունէր Զաքարիա Գ-ի նման հնարամիտ ղեկավար մը. վերջինս յաջողեցաւ լաւագոյն կերպով օգտուիլ այս պատեհ առիթէն՝ ի շահ իր ժողովուրդին: Երկու դէմքերու ժամանակակից ըլլալը, պատմական հանդիպում մը եղաւ. ըսել կ'ուզենք, եթէ Ջահանշահին ժամանակակից չ'ըլլար Զաքարիա Գ-ի նման ղեկավար անձնաւորութիւն մը, ապա այս բոլոր պատմական զարգացումները շատ հաւանական էր, որ տեղի չ'ունենային:

Միւս կողմէն Ջահանշահ անձամբ հովանաւորեց Զաքարիա Գ-ին, որովհետեւ ան տարբեր առիթներով փաստեց, որ հաւատարիմ էր Ջահանշահի կեդրոնական իշխանութեան, երբ

⁶³ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 341, 342:

⁶⁴ Ներսէս Վ. Ակիկեան, նոյնը, էջ 109:

⁶⁵ Ստ. Մելիք-Բախշեան, Հայոց Պատմութիւն (Հնագոյն ժամականերից մինչեւ 18րդ դարի վերջը), էջ 152:

⁶⁶ Գ. Ե. Կիրակոսեան, նոյնը, էջ 330:

⁶⁷ Ն. Ակիկեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 74:

⁶⁸ Հայոց Պատմութիւն-Հիմնահարցեր, էջ 77, 78:

տեղի կ'ունենային ներքին գահակալական կռիւները իշխող թուրքմէն ընտանիքէն ներս:

13. Կաթողիկոսական Աթոռներու Միացումը Նախաքայլ Ապագայ Ծրագիրներու

Երկու աթոռներու միացումով, Չաքարիա Գ. Աղթամարը միացուց Էջմիածինին, որովհետեւ վերջինս Ամենայն Հայոց աթոռանիստն էր. բայց ան Վասպուրականը կը նկատէր համայն հայութեան բաղձանքներու իրագործման կեդրոնը, որովհետեւ այնտեղ իրենց գոյութիւնը պահպանած էին հայոց թագաւորներու սերունդները, որոնցմէ էր իր տոհմը: Աթոռներու միացումը իրագործելով, ան կը փորձէր հայ ժողովուրդի քաղաքական միասնականութիւնը իրականացնել: Ան իր կեանքի ընթացքին աշխատեցաւ այդ ուղղութեամբ, եւ կարելի է ըսել, որ զոհ գնաց իր բաղձանքները իրագործելու ճանապարհին վրայ...:

Եթէ աչք գոցենք Չաքարիա Գ-ի անձնական երազներուն վրայ, որոնցմէ մէկն էր Ամենայն Հայոց Աթոռին տիրանալը, ապա երկու աթոռներու միացումը ինքնին դրական մեծ քայլ մըն էր հայ ազգի պատմութեան մէջ, «Որքան էլ Չաքարիան առաջնորդում էր անձնական ու խմբակային դրդապատճառներով, պէտք է շեշտել զոյգ աթոռների միաւորման դրական նշանակութիւնը պետականութիւնից զրկուած հայ ժողովրդի կեանքում»:⁶⁹

Այսօր, մեր ապրած օրերուն Ս. Էջմիածինի եւ Անթիասի երկու աթոռներու միացումը, եթէ իրականանայ, անկասկած դրական պատմական մեծ քայլ մը պիտի ըլլայ՝ հայ ազգի դիրքերը զօրացնելու ճամբուն վրայ: Գուցէ եւ այդ դառնայ մղիչ ուժը մեր այլ բացասական ազգային հարցերը լուծելու, որոնցմէ կը տառապինք՝ երկու լեզու, երկու ուղղագրութիւն...:

Կը թուի թէ, Չաքարիա Գ. յաջողած էր Ջահանշահ սուլթանին համոզել, որ իր կրօնա-քաղաքական հզօրութեամբ յաւելեալ պիտի ամրացնէր հայութեան ղեկավար դէմքը ըլլալու իր դիրքե-

րը, եւ հարագատ բարեկամն ու աջակիցը սուլթանին. իրավիճակ մը, որ լաւագոյնս պիտի ծառայէր ամրապնդելու Ջահանշահի իշխանութիւնը Հայաստանի մէջ, ունենալով Չաքարիա Գ-ի նման հաւատարիմ եւ բարեկամ հպատակ մը, «Դժուարին չէր բազմահնար Չաքարիայի հաճել Ջահանշահին, որուն համար անտարբեր բան էր խնդիրը. տեսակէտով մը՝ մինչեւ անգամ բաղձալի: Երկուց աթոռոց միութիւնն քրիստոնէայ ժողովուրդն սերտագոյնս կը կապէր իւր գահին հետ»:⁷⁰

Եկեղեցական աթոռներու միացումը կը հետապնդէր մէկէ աւելի նպատակներ, որոնցմէ էր մօտ ապագային Աղթամարի Աթոռը դարձնել առաջին աթոռանիստը, այդպիսով ան գերադասութիւն կ'ունենար հայոց բոլոր եկեղեցական աթոռներուն վրայ: Վասպուրականն ալ կը դառնար հայոց, թէ հոգեկան եւ թէ՛ քաղաքական կեդրոնը. այս վերջինը իրականացնելու համար՝ հարկաւոր էր վերականգնել Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը...: Այսպէս, երկու աթոռներու միացումը յաւելեալ քաջալերեց եւ ոգևորեց Չաքարիա Գ-ին իրագործելու նաեւ Աղթամարի Արծրունեաց թագաւորութեան հիմնադրութեանը:

Այս բոլորին մէջ շատ յստակ էր, Վասպուրականի հայութեան ծայրայեղ հայրենասիրութիւնը: Հարկաւոր է մէջբերել հետեւեալը Ռուբէն Տէր-Մինասեանէն, որ ան գրած է 1906թ. Վասպուրականի հայութեան ծայրայեղ հայրենասիրութեան մասին, «...Վասպուրականցու հոգեբանութեամբ՝ Հայաստանի միւս նահանգներու հայերը, «դրսի հայերը», երկրորդական են, շատ ալ էական չեն: Էականը նախ՝ Վանայ «քաղաքն» է, յետոյ Վասպուրականը, եւ յետոյ միայն միւսները: Հայութիւնը՝ նախ վանեցիներն են, իսկ դրսեցիները եկամուտ են: Ամէն ինչ՝ Վանը, ամէնքը՝ Վանին: Այս տեղացիական ծայրայեղ հայրենասիրութիւնը, որ նկատելի է միայն Ղարաբաղի մէջ, թէեւ Վասպուրականցուն կու տայ կարծրութիւն, բայց կու տայ նաեւ «դրսեցիի» եւ «ներսեցիի» ցաւալի խտրականութեան ոգին, կու տայ նաեւ եսականութիւն եւ

⁶⁹ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 591:

⁷⁰ Ներսէս Վ. Ակինեան, Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 89:

անտարբերությամբ զեպի իր հարեւան հայ նահանգները»:⁷¹ Կը թուի, թէ յիշեալ «տեղացիական ծայրայեղ հայրենասիրութիւն»ը, որ ինքնին մերժուած է, մեր հետապնդած հիմնական նիւթի պարագային դրական եղաւ. ճիշդ այնպէս ինչպէս Արցախի հայութեան պարագային, անցեալ դարու 90-ական թուականներուն: Ուրեմն, չարիքներ կան, որոնց ետեւ բարիքներ թաքնուած են. կամ ինչպէս ժողովրդական խօսքը կ'ըսէ, «Ամէն չարիք, ունի բարիք»...:

14. Զաքարիա Գ-ի Դիրքի Հգորացումը

Բնականաբար, Զաքարիա Գ. կաթողիկոսի նման անձնատրութեան մը դերն ու գործունէութիւնը աւելի պիտի բազմանար իր Ամենայն Հայոց կաթողիկոս դառնալէն ետք: Ան օժտուած ըլլալով դիւանագիտական ձիրքերով ինչպէս յիշեցինք, սկսաւ միջամտել քաղաքական հարցերուն, մանաւանդ, երբ այդ կը սպառնար իրեն ենթակայ հայ ժողովուրդին: Կարելի է, ըսել, Զաքարիա Գ. կաթողիկոս ըլլալէ աւելին քաղաքական գործիչ էր, իր կեանքն ու գործունէութիւնը այդ կը վկայէին:

Զաքարիա Գ., 1461թ. ստիպուեցաւ միջամտել, երբ Բաղէշի իշխանը ապստամբեցաւ Զահանշահ սուլթանի դէմ: Դէպքերը զարգացան, եւ Զահանշահ զօրք դրկեց Խլաթ քաղաքին մէջ օտարազգի մէկ ուրիշ ապստամբ իշխանի մը դէմ, «Թագաւորը ուղարկեց չորս զօրապետ տասներկու հազար զօրքով Խլաթի վրայ: Գնացին, աւերեցին, քանդեցին ամբողջ երկիրը եւ նստան բերդի շուրջ. եւ մօտ էր բերդի գրաւումը: Նոյնը կամենում էին անել Բաղէշում, Մուշում, Խուրում, Սասունում եւ սրանց բոլոր սահմաններում»:⁷²

Տեղի ունեցած աղետը ցնցեց Զաքարիային, որ փութաց երթալ Զահանշահ սուլթանին մօտ, եւ առաջարկեց իր միջամտութիւնը, նպատակ ունենալով հայութիւնը փրկել վտանգուած տա-

րածքներուն մէջ վերահաս ռազմական գործողութիւններու արհաւիրքներէն, «Այս լսելով Զաքարիա կաթողիկոսը գնաց աշխարհակալ թագաւոր Զահանշահի եւ թագուհի Բեկում խաթունի մօտ, հաշտեցրեց եւ ինքնակալի բարկութիւնը իջեցրեց»:⁷³ Զաքարիա Քանաքեոցի, սուլթանի կողքին կը յիշէ նաեւ անոր կնոջ Բեկում խաթունի անունը, որուն հետ Զաքարիա Գ. բարեկամական սերտ յարաբերութիւններ ունէր, ինչպէս անդրադարձանք:

Առաքել Դավրիժեցի մանրամասն յիշած է Զաքարիա Գ-ի այս դժուարին բայց եւ յաջողակ քաղաքական գործի մասին, «Բսկ ինքը (Զաքարիա Գ.) վերադարձաւ Բաղէշ եւ երեք ամիս նստեց, առաւ խոստացած կայսերական տուրքը եւ տարաւ մատուցեց թագաւորին (Զահանշահ), նրանց միջեւ խաղաղութիւն հաստատեց եւ ողջ ռամիկ ժողովուրդը՝ թէ հայ, թէ մահմեդական, ազատեց անօրէնների ձեռքից ու դառը գերութիւնից»:⁷⁴

Այսպէս, Զաքարիա Գ. միջամտեց Բաղէշի (Բիթլիսի) ապստամբ ամիրայի Էմիր Շարաֆի եւ Կարա-կոյունլուներու Զահանշահի միջեւ, ան յաջողեցաւ ապստամբ Էմիրին համոզել, որ շարունակէ հարկերը վճարել Կարա-կոյունլուներու կեդրոնական իշխանութեան. եւ վերջ տալ իր Բաղէշի շրջակայքի հայկական գիւղերու կողոպուտին, որ պատճառներէն մէկն էր, որ Զաքարիա Գ-ին մղեց ձեռնամուխ ըլլալ այդ դիւանագիտական ծանր աշխատանքին:

Այս յաջողակ առաքելութեամբ՝ Զաքարիա Գ-ի դիրքը զօրացաւ Զահանշահի մօտ, եւ իր ժողովրդականութիւնը բարձրացաւ տարածքաշրջանի հայութեան եւ տեղացի մահմետականութեան մօտ, որոնք բոլորը փրկուեցան նոր պատերազմի արհաւիրքներէն:

Այդ բոլորը իրեն պիտի քաջալերէր դիմելու Զահանշահին եւ համոզելու անոր, որ համաձայնի հայկական թագաւորութեան հիմնադրութեան գաղափարին:

⁷¹ Ռուբէն, Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները, Բ. հատոր, էջ 210:

⁷² Զաքարիա Քանաքեոցի, Պատմագրութիւն, էջ 9:

⁷³ Զաքարիա Քանաքեոցի, նոյնը, էջ 10:

⁷⁴ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 331:

15. Զաքարիա Գ. Էջմիածինէն կը հեռանայ Աղթամար

Զահանշահ սուլթանի դէմ տեղի ունեցած ապստամբութիւնները, իրենց բուռն արձագանքները կ'ունենային Հայաստանի մէջ: Այսպէս, երբ 1461թ., Զահանշահ հեռացաւ Հայաստանէն դէպի Պարսկաստան, ուր իր դէմ ապստամբած էր Շիրազի կառավարիչ՝ Փիր-Բուղադը, որ իր հարազատ որդիներէն մէկն էր. Զահանշահ Հայաստանի եւ շրջակայ տարածքներուն կառավարելը յանձնեց իր Հասան Ալի տղուն, որ իր գահաժառանգն էր:

Հասան Ալիի նշանակումը վատ հետեւանքներ ունեցաւ հայոց վրայ: Հասան Ալիի բացասական անձնավորութեան մասին Զաքարիա Քանաքեռցի յիշած է, «Քանի դեռ կենդանի էր Զահանշահը, ունէր Հասան Ալի անունով մի որդի: Սա գոռոզ, անզգամ, լիբր, կողոպտիչ էւ յափշտակող մէկն էր. սրան չարութեան պատճառով հայրը չէր սիրում: Նա ելած ինքնագլուխ շրջում էր Արարատեան երկրում՝ այստեղ-այնտեղ, իբրեւ թափառական: Երբ լսեց, թէ իր հայրը գնաց Շիրազ եւ Քերման, Հասան Ալին կամեցաւ բռնել կաթողիկոսին»:⁷⁵

Հասան Ալի բարեկամական աչքերով չէր նայիր Զահանշահի եւ Զաքարիա Գ-ի մտերմութեան. առիթէն օգտուելով անսկսաւ հալածել կաթողիկոսին եւ պահանջեց ծանր հարկեր: Հասան Ալիի այս դիրքորոշման թիկունքին կային Զաքարիա Գ-ի հայ հակառակորդները, եւ Գրիգոր Ժ. կաթողիկոսի աջակիցները, «Իւր հակառակորդներն չէին ննջեր. որոնք ամէն հնարագիտութեամբ կը ճգնէին հալածել զինքը Էջմիածնէն: Առանց տարակուսի ասոնց գործն էր Հասան ալիի թշնամանալն Զաքարիայի հետ»:⁷⁶

Զաքարիա Գ. 1461թ., նոյեմբերին ծպտուած հեռացաւ Էջմիածինէն, իր հետ վերցուցած «աստուածային գանձ»ը, նոյն տարուայ դեկտեմբերի 11-ին հասաւ Աղթամար: Ս. Էջմիածինէն

իր հետ վերցուցած «աստուածային գանձ»ի մասին Առաքել Դավրիժեցի յիշած է, «Մեծ հայրապետը, նրա այս նենգամտութիւնը իմանալով, առաւ սուրբ Լուսաւորչի աջը այլ սպասներով հանդերձ ձմեռ օրով գնաց մինչեւ Բագվան, այնտեղից եկաւ Բայազետի բերդը, այնտեղից էլ իջաւ Արգելան սուրբ ուխտը, որտեղ թաղուած են Յուսիկի որդի սուրբ վարդապետ Ստեփանոսի նշխարները: Այնտեղ հասնելով ի յայտ բերեց աստուածային գանձը՝ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի սուրբ աջը խաչվառի հետ միասին, ուր մի կողմում նկարուած էր տիրոջ պատկերը, իսկ միւս կողմում նկարուած էին մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի, Տրդատ թագաւորի, չքնադագեղ կոյս սուրբ Հովսիսիմէի (պատկերները): Նաեւ (խաչվառը) զարդարուած էր ոսկեթել գործուածքով, երփներանգ գոյներով, սուրբ ուրարով, որ տեսնողների համար զարմանալի էր...»:⁷⁷

Ներհայկական պայքարը պատճառ եղաւ, որ Էջմիածինի եւ Աղթամարի կաթողիկոսական աթոռներու միացումը վիժի. այդ միացումը հազիւ թէ տեւեց երկու տարի, «Բայց դարձեալ չնորհուեցաւ իրեն հանգիստ աթոռին վրայ: Էջմիածին շատ հակառակորդներ ունէր Զաքարիա. որոնք ամէն հնարիւք իրեն կորուստը կ'ուզէին: Երկու Աթոռներուն հազիւ երկու տարի տիրացած՝ տեղակուր կ'ըլլայ Էջմիածին իւր հակառակորդներէն, յընթացս 1464 տարւոյն»:⁷⁸ Այս մեջբերման մէջ յիշուած տարին, պէտք է ըլլայ 1461թ., թերեւս այդ տպագրական սխալ է:

Ամենայն Հայոց Աթոռին համար մղուած պայքարին մէջ, շատ յստակ էր, որ երկու պայքարող կողմերն ալ կը յենուէին օտարազգի իշխանաւորներուն վրայ: Հայր (Զահանշահ սուլթան) եւ որդի (Հասան Ալի) կը հովանաւորէին հայկական պայքարող կողմերը, անոնք իրենց կարգին կը հետապնդէին իրենց շահերը: Բնականաբար, այս բոլորին մէջ, տուժող կողմը հայութիւնն էր: Հայր եւ որդիի այս քաղաքական տարբեր կեցուածքները հայու-

⁷⁵ Զաքարիա Քանաքեռցի, Պատմագրութիւն, էջ 10:

⁷⁶ Ներսէս Վ. Ակիւնեան, նոյնը, էջ 92:

⁷⁷ Առաքել Դավրիժեցի, նոյնը, էջ 331, 332:

⁷⁸ Ներսէս Վ. Ակիւնեան, նոյնը, էջ 94. քաղուած Նօտարք Հայոց, էջ 220:

թեան հանդէպ նպաստաւոր չեղան: Հայրը խաղաղասէր եւ բարեացակամ էր հայութեան հանդէպ, իսկ որդին Հասան Ալին հակառակը. ան խառնուածքով չար եւ ապերախտ գաւակ էր: Չաքարիա Քանաքեոցիէն հասած է մեզի բաւական տեղեկութիւններ Ջահանշահի եւ Հասան Ալիի լարուած յարաբերութիւններու մասին, որոնք շատ յստակ ի յայտ եկան Ջահանշահ սուլթանի սպանութենէն ետք, ինչպէս որ պիտի անդրադառնանք յաջորդ էջերուն:

Այսպէս, երկու տասնեակ տարիներուն 1441-1461թ. բազմաթիւ կարեւոր զարգացումներ տեղի ունեցան Ամենայն Հայոց Աթոռի պատմութեան մէջ. շատ խտացուած անդրադառնանք-

ա-1441թ., Հայոց Հայրապետական Աթոռի հաստատումը Ս. Էջմիածինի մէջ. ամբողջ Հայաստանի միասնական որոշումով. տես 8-րդ բաժին:

բ-1443թ., Հայաստանի արեւելեան գաւառներու եպիսկոպոսները Երեւանի Յաղուբ բէկի հովանաւորութեամբ կաթողիկոս Կիրակոս Ա. Վիրապեցիին հեռացուցին պաշտօնէն եւ Գրիգոր Ժ. Ջալալբեկեանցին ձեռնադրեցին կաթողիկոս. այդպէս բեկանուեցաւ Հայաստանի հայութեան միասնական որոշումը:

գ-1460թ., Հայաստանի հարաւային գաւառներու եպիսկոպոսները Ջահանշահի հովանաւորութեամբ՝ Էջմիածինի Գրիգոր Ժ. կաթողիկոսը գահընկէց ըրին. Չաքարիա Գ. բազմեցաւ Էջմիածինի Մայր Աթոռին. տես 11-րդ բաժին:

դ-1461թ., Հայաստանի արեւելեան գաւառներու եպիսկոպոսները ապստամբ Հասան Ալիի հովանաւորութեամբ Գրիգոր Ժ. Ջալալբեկեանցին վերահաստատեցին Էջմիածինի Կաթողիկոսական գահին վրայ:

Այսպէս, 1461-ին Գրիգոր Ժ. Ջալալբեկեանց կրկին վերահաստատուեցաւ Էջմիածինի Կաթողիկոսական գահին: Շատ յստակօրէն կարելի է տեսնել Հայաստանի երկու տարածքներու՝ արեւելեան (Երեւան) եւ հարաւային (Վան) պայքարի զարգացումները: Բնականաբար, այս ցաւալի վիճակը հետեւանքն էր հայութեան պետականութեան բացակայութեան, եւ մանաւանդ

հայութեան ղեկավար դասի եասերութեան եւ անհեռատեսութեան:

Այս պատմական զարգացման օրինականացման մասին մեջբերենք հետեւեալ բացատրութիւնը, «Մակայն ընդդիմադիր ուժերը եւ յատկապէս Գրիգոր Ժ. Ջալալբեկեանց կաթողիկոսն ու իր համակիրները չէին կարող հանդուրժել Չաքարիայի կաթողիկոսութիւնը, քանզի նախորդն էր «հայրապետութեան օրինաւոր արժանակալ ճանաչուած անձը: Ոչ մի ժողով եւ ոչ մի օրինական վճիռ չէր որոշած անոր դադարումը, եւ ոչ ալ ինքն կամովին հրաժարած էր պաշտօնէն»:⁷⁹

Չաքարիա Գ. քաղաքական զարգացումներուն հետեւելու եւ լաւատեղեակ ըլլալու ունակութիւն ունէր. այլապէս պիտի զոհ երթար Հասան-Ալիի արշաւանքին: Չաքարիա Գ. տարիներ ետք՝ մինչեւ իր մահը, շարունակեց ինքզինքը նկատել եւ կոչել Ամենայն Հայոց Կաթողիկոս, որովհետեւ ան իր հետ Աղթամար տարած էր այդ տիտղոսը արդարացնելու սրբութիւնները:

Չաքարիա Գ. Էջմիածինէն հեռանալով իր հետ վերցուցած սրբութիւններով հասաւ Վասպուրականի Ոստան քաղաքը. Առաքել Դավրիժեցի մանրամասն գրած է, «Երբ քաղաքից ելաւ, նրա հետ դուրս եկան եպիսկոպոսների, վարդապետների քահանաների բազմութիւններ եւ Վանի բոլոր ազատագունդ խոջաները՝ ձիերով եւ ձիաւորներով սպառազինուած: Եկան, հասան ծովահայաց Ոստան քաղաքին մօտիկ, որին ընդառաջ եկան քաղաքի բոլոր բնակիչները քահանաներով ու բազմամբոխ ժողովրդով՝ մեծամեծներից մինչեւ փոքրերը խունկերով, մոմերով, բարձրաձայն երգերով»:⁸⁰

Ապա Ոստան քաղաքէն Չաքարիա Գ. մեծ շուքով մտաւ Աղթամար կղզի, որուն մասին Առաքել Դավրիժեցին յիշած է «Աստուածաբնակ Աղթամար կղզի», «Ինքը սուրբ աջը առաւ,

⁷⁹ Աղաւնի Ա. Ութուշեան, Հայկական Պետականութեան Վերականգնման Փորձ ԺԵ. Դարի Կէսերին, էջ 112. քաղուած Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հատ. Բ., սիւնեակ 2163:

⁸⁰ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 332:

մտաւ նաւ եւ գնաց Աստուածաբնակ Աղթամար կղզին՝ իր հայրենի ժառանգութիւնը: Երբ դուրս եկան ցամաք, նրան ծովեզերում ընդառաջ ելան տեղի բոլոր բնակիչները՝ խունկերով, մումերով, քահանաներով, քաղցրաձայն երգերով եւ առան սուրբ աջը տարան, դրին Աղթամարի գեղակառոյց Սուրբ խաչում, եւ երկրպագում էին սուրբ աջին ու հայրապետին եւ օրհնութիւն ու փառաբանութիւն էին վերառաքում հրաշագործող աստծուն, որ ամենքին արժանի արեց Լուսաւորչի շնորհաբաշխ սուրբ աջի տեսութեանը»:⁸¹

Զաքարիա Գ-ի վերադարձի մասին Աղթամար յիշուած է, թէ ան այդ քայլով Ամենայն Հայոց կաթողիկոսական կոչումը իր հետ առած՝ տարաւ Աղթամար, այդ պատճառով որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսաւորիչի աջը ձեռքին, յաղթական, չտեսնուած մեծ շուքով դիմաւորուեցաւ եւ գնաց Աղթամար, «Զաքարիա ամենայն ճարտարութեամբ հաճոյանալով Ջհանշահին՝ անոր հաւանութեամբը յինքն կը կորզէ Էջմիածնի նորակազմ Աթոռը եւ ասով Մայր Հայաստանի դարերով երկփեղկեալ եկեղեցին ի մի միաբանութիւն կը բերէ կենդրոնացնելով վերին իշխանութիւնն յԱղթամար, ուր կը վերադառնայ չտեսնուած շքով (11 դեկտ. 1461)»:⁸² Ուրեմն, կարելի է ըսել այս զարգացումներով Ամենայն Հայոց Աթոռը Էջմիածինէն տարուեցաւ Աղթամար. սակայն այդ երկար չտեսնեց, հազիւ թէ երկու տասնեակ տարիներ, ինչպէս պիտի անդրադառնանք յաջորդ էջերուն:

Հաւանական էր, որ Զաքարիա Գ. Աղթամարը հռչակէր Ամենայն Հայոց աթոռանիստ, բայց այդ տեղի չունեցաւ, որովհետեւ իր ծրագիրները շատ աւելի հեռու կ'երթային: Կը թուի թէ ան հարկաւոր կը տեսներ նախ հիմնել Աղթամարի Արծրունեաց թագաւորութիւնը, ապա այդ իրագործելէ ետք մտածել Աղթամարը Ամենայն Հայոց աթոռանիստ յայտարարելու մասին, քանի որ իր մօտ էր Ս. Գրիգոր Լուսաւորիչի աջը...:

⁸¹. Առաքել Դավրիժեցի, նոյնը, էջ 333:

⁸². Ն. Ալիսեան, Ազատութեան շարժումը ԺԵ-ԺԶ դարերուն Հայոց մէջ, ՀԱՆԴԷՍ ԱՍՏՕՐԵԱՅ, 1917/1918, էջ 143:

16. 1463-1464 Թուականներու Բանակցութիւնները Եւ Զաքարիա Գ.-ի Անակնկալ Մահը

Զաքարիա Գ. կաթողիկոսի կեանքի վերջին երկու տարիները դժուարին եղան: Ան մէկէ աւելի անգամներ սպառնալիքներ կը ստանայ ու կ'երթայ թուրքմէն զօրագլուխի տեղակալին մօտ, եւ կը տեղեկացնէ անոր իր անձին եւ ժողովուրդին սպառնացող վտանգներուն մասին. այդպէսով կը յաջողի այդ վերահաս վտանգները հեռացնել:

Սակայն հայոց հանդէպ հալածանքները շարունակուեցան: Անոնցմէ մէկը տեղի ունեցաւ Բաղէշ (Բիթլիս) քաղաքին մէջ, ուր կ'իշխէր քիւրտ Շարաֆ բէկը, որուն մասին անդրդարձանք 11-րդ բաժինին մէջ, երբ Զաքարիա Գ. 1461թ., միջամտեց եւ մեղմացուց լարուած վիճակը յիշեալ բէկի եւ Ջահանշահ սուլթանի միջեւ:

Մշոյ Սուրբ Կարապետի Իննականեան վանքի վանահայրը՝ եպիսկոպոս Յովհաննէսը, կը ձեռնարկէ նորոգել Սուրբ Կարապետի պատմական տաճարը: Տաճարը կը գտնուէր Մուշ քաղաքէն՝ մօտ 30 կմ դէպի հիւսիս-արեւմուտք: Վանքը կոչուած էր «Իննականեան» իրար մօտ բխող ինը աղբիւրներու պատճառով:⁸³

Տարօն գաւառի մէջ հաստատուած Դմի քրտական ցեղը, դէմ կը կանգնի Յովհաննէս եպիսկոպոսի այս ձեռնարկին. ամբաստանելով, որ ան քակելով իրենց քարերը իր բարեգարդումները կ'ընէ: Մուշի գաւառապետին կը բողոքեն, եւ խեղճ եպիսկոպոսին կը դրկեն Շարաֆ բէկին մօտ, «Մուշի գաւառապետի հրամանով Յովհաննէս եպիսկոպոսը կալանւում է եւ ուղարկւում Բաղէշ՝ Շարաֆ Բէկի մօտ, որն առանց խորամուխ լինելու կատարուածի մէջ, նրան յանձնում է դահիճների ձեռքը, որոնք նրա հրամանով եպիսկոպոսին քարշ են տալիս քաղաքի հրապարակ: Ապա մերկացնում եւ չուանը գցելով նրա պարանոցը՝ տեղափոխում են Բաղէշի բարձրադիր թաղամաս, հարկադրելով ուրանալ հաւատը: «Սուսերամերկ խծծէին գնա ընդ երեսս եւ ընդ թիկունս»՝ սպառնում գլխատել, եթէ հրաժարուի իսլամ ընդունելուց, վկայում է յիշատակագրող գրիչը: Տարաբախտ եպիսկոպոսը չի կորցնում իր չարչա-

⁸³. Ուխտանէս Եպիսկոպոս, Հայոց Պատմութիւն, «Հայաստան», Երեւան, 2006, էջ 229:

քաբէկ հոգու արիութիւնը եւ մինչեւ վերջ մերժում է նրանց առաջարկը: Այնժամ մոլեռանդ ամբոխը քարկոծում ու վերջ է տալիս երանելու կեանքին»:⁸⁴ Այդ պատահեցաւ 1463թ. ապրիլի 19-ին:

Հակառակ տիրող ծանր իրավիճակին, Ջաքարիա Գ. կաթողիկոսը անցաւ իր աւելի մեծ երազանքի իրականացման աշխատանքներուն, ան 1463-1464 թուականներուն սկսաւ քաղաքական բանակցութիւններ վարել իր բարեկամ Ջահանշահին հետ, անոր համաձայնութիւնը ստանալու Վասպուրականի հայկական թագաւորութիւնը վերականգնելու համար: Ջաքարիան նոյնիսկ ներկայացուց անոր իր առաջարկած թագաւորը, իր եղբորորդի Սմբատ Արծրունի-Սեֆեդեանը:⁸⁵ Դժբախտաբար այդ բանակցութիւններու մանրամասնութիւնները մեզի հասած չեն:⁸⁶

Բանակցութիւնները պսակուեցան յաջողութեամբ. Ջաքարիա Գ. ստացաւ կարա-կոյունլուներու շահին համաձայնութիւնը իր պատմական խնդրանքին: Այս շատ մեծ եւ պատմական յաղթանակ էր Ջաքարիա Գ-ի կեանքին մէջ, որ պատճառ եղաւ իր անունը անմահացնելու մեր ժողովուրդի պատմութեան մէջ:

Մեր ուսումնասիրութիւններու ընթացքին հանդիպեցանք նաեւ շատ հետաքրքրական արժեքաւորման մը, Ջաքարիա Գ-ի այս կարեւոր քաղաքական ձեռքբերման մասին: Ն. Ակինեան յիշած է, «Իւր այս փառամոլ բայց եւ ազգասէր ձգտումները հոս դադար չեն առնուր: Կ'երեւայ թէ անիկա իւրատիպ խորամանկութեամբ նաեւ քաղաքական շնորհք խնդրած է Ջահանշահէն ազգին համար, անոր գերիշխանութեան տակ վերահաստատել Վասպուրականի հին թագաւորութիւնն եւ այսպէս աթոռին ճոխութիւնն նաեւ քաղաքական փայլով մը պայծառացնել»:⁸⁷

⁸⁴ Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն էջ 102. քաղուած Նօտարք Հայոց, էջ 211, 212:

⁸⁵ Պետրոս Յովհաննէսեան, նոյնը, էջ 12. տես նաեւ Հայոց Պատմութիւն-Հիմնահարցեր, խմբ. Հր. Ռ. Սիմոնեան, էջ 78, 79:

⁸⁶ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 593:

⁸⁷ Ն. Ակինեան, Ազատութեան շարժումը ԺԵ-ԺԶ դարերուն Հայոց մէջ ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, 1917/1918, էջ 143:

Ջաքարիա Գ. կաթողիկոսը, որ այս ուսումնասիրութեան հիմնական եւ կեդրոնական անձնաւորութիւնն է, իր լայնածաւալ գործունէութեամբ, ինչպէս նախապէս անդրադարձանք, ունեցաւ տխուր եւ անորոշ վախճան մը...:

Ջաքարիա Գ-ի մահուան մասին տեղեկութիւնները մշուշոտ են. կան հիմնական երեք կարծիքներ, յանկարծամահ կամ թունաւորուած ըլլալը, բնական մահ խոր ծերութեան պատճառով: Պիտի անդրադառնանք յիշեալ երեք վարկածներուն:

Բանակցութիւններու ժամանակ Ջաքարիա Գ. յանկարծամահ եղաւ, բայց իր յաջորդը Ստեփանոս Դ. կաթողիկոսը իրականացուց այդ երազը: Այս զարգացումներուն մասին, մէջբերենք Գ. Ե. Կիրակոսեանէն, «Օգտուելով իր ունեցած դիրքից ու հեղինակութիւնից եւ զօրավիգ ունենալով Ջահանշահի հովանաւորութիւնը, Ջաքարիան նպատակադրուել էր Վասպուրականում ստեղծել թագաւորութիւն: Որպէս թագաւորի թեկնածու նա առաջ քաշեց իր եղբոր՝ Գուրջիբէկի որդի Սմբատին, սակայն սրա թագաւորութեան հանդիսութեանը, որը տեղի ունեցաւ 1465թ., Ջաքարիան չմասնակցեց: Այդ հանդիսութիւնից առաջ նա մահացել էր»:⁸⁸

Ջաքարիա Գ. կաթողիկոսի վերջը անսպասելի եղաւ, ան սպաննուեցաւ 1463թ., կամ 1464թ., թունաւորուելով իրեն մօտիկ մարդոց կողմէ, դրդապատճառները անյայտ կը մնան: Իր մահը տեղի ունեցաւ, երբ ան կը գտնուէր Էջմիածինի մէջ: Իր մահուան մասին արձանագրուած է, «Անյայտ է, թէ ինչ հանգամանքների բերումով նա դարձեալ վերադարձել էր Էջմիածին, որտեղ էլ 1464թ., ինչպէս տրտմութեամբ արձանագրում է ժամանակագիրը. «նենգ եւ չարախօս անձինք» նրան թունաւորելով սպաննեցին»:⁸⁹

Այստեղ հարկաւոր է նշել, եթէ իրականութիւն էր այն վարկածը, թէ Ջաքարիա Գ-ի վախճանը տեղի ունեցաւ, երբ ան կը գտնուէր Էջմիածինի մէջ, «նենգ եւ չարախօս անձինք»ը անոր թունաւորելով սպաննեցին Աղթամարէն հեռու. շատ հաւանական է,

⁸⁸ Գ. Ե. Կիրակոսեան, նոյնը, էջ 331, 332:

⁸⁹ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 594:

որ յիշեալ մարդասպանները Ջաքարիա Գ-ի Ամենայն Հայոց Աթոռին բազմելու ընդդիմադիրներն էին. կամ անոնք որոնք հակառակ էին անոր որդեգրած քայլերուն Վասպուրականի մէջ հայկական թագաւորութիւն հիմնելուն: Ամէն պարագայի, եթէ ճիշդ է իր սպանութիւնը, ապա անկախ դրդապատճառներէն, այդ մեր պատմութեան բացասական, տխուր ու ցաւալի էջերէն մէկը պէտք է նկատել:

Ըստ Վրէժ Վարդանեանին Ջաքարիա Գ-ի թունաւորուելու հարցը եւ մահը Էջմիածինի մէջ ճիշդ չէ, «*Ջաքարիա Գ-ը վախճանուեց ծեր տարիքում, Աղթամարում վրայ հասած բնական մահով: Այս մասին արժանահաւատ յիշատակութիւն է պահպանուել 1464 թ. Վասպուրականի Շատվան գիւղում Ատոմ գրչի արտագրած Յայսմավորքի*⁹⁰ *յիշատակարանում, ուր նշում է, որ ձեռագիրն աւարտել է «Ի հայրապետութեան Տեառն Ջաքարիայի, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս...»*»:⁹¹

Ջաքարիա Գ-ին յաջորդեց իր եղբորորդին Ստեփանոս Դ. կաթողիկոսը ըստ ոմանց հօրեղբորորդին,⁹² որ Ջաքարիա Գ-ի կողմէ Էջմիածինի մէջ ձեռնադրուած էր եպիսկոպոս, ինչպէս յիշեցինք 11-րդ բաժինին մէջ:

Աղթամարի կաթողիկոս Ջաքարիա Գ., իր կեանքով ու գործունէութեամբ կը հանդիսանայ միջին դարերուն՝ Հայ ազատագրական շարժման ռաւիվիւրան Իսրայէլ Օրիէն եւ Յովսէփ Էմինէն դարեր առաջ: Ան լիովին կ'արժանանայ նշանաւոր վիպագիր Մուրացանի⁹³ հետեւեալ խօսքին, «*Պատմութեան մէջ յայտնի բազմաթիւ անձինք նշանաւոր են դարձել եւ ազգերի ու սերունդ-*

⁹⁰ Յայսմավորք-Մեծահատոր գիրք է, որ կը պարունակէ սուրբերու վկայաբանութիւններն ու վարքերը: Կը կարդացուի երեկոյեան ժամերգութիւնը սկսելէն առաջ: Ամէն օրուայ ընթերցումը կը սկսի «Յայսմ աւուր յիշատակ է», այստեղէն ծագած է այս գիրքի անունը. քաղուած Մ. Օրմանաէն, Ծիսական Բառարան, «Հայաստան», Երեւան, 1992, էջ 104:

⁹¹ ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատ., 2, էջ 224:

⁹² Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 105:

⁹³ Մուրացան Գրիգոր Տէր-Յովհաննիսեան (1854-1908):

ների սիրտը գրաւել ոչ այն պատճառով, որ իրենց անձն են սիրել կամ շահը խնամել, այլ որովհետեւ նուիրուել են հասարակաց բարւոյն, ժողովրդին ու հայրենիքին»:

17. Ստեփանոս Դ. Տղայ (1464-1489)

Կաթողիկոսի Չանքերը

Հայկական թագաւորութեան վերականգման աշխատանքներու շարունակութիւնը Ջաքարիա Գ-ի մահէն ետք ունի յստակ մէկ նշանակութիւն, որ այդ շարժումը միայն մէկ անձի, այս պարագային միայն Ջաքարիա Գ. կաթողիկոսի երազանքը չէր, այլ Ստեփանոս Դ. Տղայ կաթողիկոսը եւ թագաւորական գահի թեկնածու Սմբատ Արծրունին, եւ վստահաբար Վասպուրականէն շատ ուրիշ մեծամեծներ ունէին նոյն երազանքն ու ձգտումը, ինչպէս որ պիտի նշմարենք այս ուսումնասիրութեան յաջորդ էջերուն:

Թագաւորութիւն հիմնելու գաղափարին հակառակ մտածող անձիք չկային Աղթամարէն ներս, այլապէս անոնք պիտի հակառակէին նորընտիր կաթողիկոս Ստեփանոս Դ-ին, ատիկա կը նշանակէ, որ այդ գաղափարախօսութիւնը Վասպուրականի հայութեան ղեկավարութեան մէջ ընդհանրական էր...: Նշենք նաեւ, որ մեր պրպտումներուն մէջ չհանդիպեցանք որեւէ նման հակառակ դիրքորոշման յիշատակութեան:

Ջաքարիա Գ. կաթողիկոսի անակնկալ մահը պատճառ չեղաւ, որ Հայոց թագաւորութեան վերականգման փորձը վիժի: Նոր կաթողիկոս Ստեփանոս Դ. Տղայ, որ լաւատեղեակ էր Ջաքարիա Գ-ի ծրագիրներուն, քանի որ անոր օգնականն էր եւ խորհրդատուն, շարունակեց աշխատանքը այդ ուղղութեամբ եւ գործադրեց հանգուցեալ կաթողիկոսի ձեռք բերած համաձայնութիւնը թուրքմէն Ջահանշահ սուլթանէն:

Հիմնուելիք թագաւորութեան գահի թեկնածուն անհրաժեշտ էր, որ ըլլար Ջաքարիա Գ-ի վստահելի եւ անպայման իր նման թագաւորական տոհմէ, ուստի պիտի ըլլար իր ազգակիցներէն: Այդ հանգամանքը, գահակալ թեկնածուի «Թագաւորագն» ըլ-

լալը, ուժ եւ արժէք պիտի տար անոր անձի ընտրութեան Վասպուրականի հայութեան կողմէ, ինչպէս եւ Զահանշահ սուլթանի համաձայնութեան: Պէտք չէ մոռնալ, որ Հայաստանի հայութիւնը մօտաւորապէս կէս հազարամեակ չէր ունեցած թագաւոր. այստեղ զերծ կը մնանք Կիլիկիոյ հայ թագաւորները նշելու, որովհետեւ Կիլիկեան բուն Հայաստանէն՝ Հայկական Լեռնաշխարհէն դուրս կը գտնուէր, թէեւ Կիլիկիոյ հայկական թագաւորութիւնը իր գոյութեամբ հոգեկան եւ քաղաքական ոգեշնչման աղբիւր մըն էր, ամբողջ հայութեան համար:

Զաքարիա Գ. կաթողիկոսի եղբայրը՝ Գուռջիբէկը, ունէր երեք արու գաւակներ, ընտրուեցաւ անոնցմէ Սմբատը, «Առաջնային ու կարելոր էր նաեւ գահի յաւակնորդի հարցը: Աներկբայօրէն թեկնածուն պէտք է լինէր նրա մերձաւոր ազգականներից՝ ոչ միայն «ի թագաւորաց զարմէ», այլեւ օժտուած ու յարգանքի արժանի մէկը: Մեզ հետաքրքրող պահին ապրում եւ գործում էին կաթողիկոսի եղբոր՝ Գուռջիբէկի երեք որդիները: Նրանցից երկուսը՝ Ներսէսն ու Ստեփանոսը, բարձրաստիճան հոգեւորականներ էին, ուստի յաւակնորդ լինել չէին կարող: Երրորդը «պարոն» Սմբատն էր՝ արդէն ամուսնացած (կնոջն անուանում էին Բէկի խաթուն) ու զոյգ երեխաների հայր»:⁹⁴ Այսպէս, գահի թեկնածուն՝ Աստուածապաշտ ընտանիքի մը գաւակն էր:

Թագաւորութեան թեկնածու Սմբատի ծնողքին մասին, եւ անոր ազգականական կապը Ստեփանոս Դ-ի հետ, տես Ցուցակ թիւ 1:

Ցուցակ Թիւ 1
Սմբատ Թագաւորի Ծնողքը⁹⁵

Գուռջիբէկ — Դունիա խաթուն		
Ներսէս (Եպիսկոպոս)	Ստեփանոս	Սմբատ
	(Ստեփանոս Դ. կաթողիկոս) (1464-1489)	(Թագաւոր) (1465-1471)

⁹⁴ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 593:

⁹⁵ Նոյնը, էջ 593:

Թեկնածու թագաւորի կենսագրութեան մասին տեղեկութիւններ հասած են մեզի «Ճառընտիր»⁹⁶ ժողովածուի մէջ յիշուած երկու յիշատակութիւններէ-

ա- Թումա գրիչը կը խնդրէ յիշել պատուիրատուներուն, «մաւաւանդ ստացող սուրբ գրոյս զպարոն Սմբատն, եւ զծնողսն իւր զամիր Գուռջիբէկն եւ զԴունիա-Խաթունն, եւ զհաւրեղբայրն զտէր Զաքարիա կաթողիկոսն, զկենակիցն Սմբատայ զԲէկի-Խաթունն, եւ զնախանիքն ամենայնի...»:⁹⁷

բ- «Ողորմած Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեայ ամենայն հաւատացեալ քրիստոնէից, եւս առաւել ստացողի սուրբ գրոցս Սմբատ թագաւորին, եւ ծնաւդաց նորին՝ պարոն Գուռջիբէկին եւ Դունեա-Խաթունին, եւ հաւրեղբայրն տէր Զաքարիա կաթողիկոսին եւ կենակցին Բէկի-Խաթունին, եւ քուերն Խանում-Խաթունին, եւ նախնեաց ամենայնի»:⁹⁸

Միայն այսքան քիչ տեղեկութիւններ հասած են մեզի Սմբատ Արծրունի թագաւորի մասին. ծննդեան եւ մահուան տարիները, ուսումը, զբաղմունքը, այդ բոլորը կը մնան անծանօթ. չունինք նաեւ որեւէ այլ տեղեկութիւն. վստահ գիտենք, որ ան աշխարհիկ էր՝ ոչ եկեղեցական, եւ յարգանքի արժանի անձնաւորութիւն: Որեւէ տեղեկութիւն չունինք թագուհի՝ Բէկի խաթունի մասին, կամ անոր ծնողքին մասին:

18. Սմբատ Արծրունի Մեֆեղիներեանի
Թագաւորական Օծումը

Յիշեալ քաղաքական զարգացումներէն յետոյ, թագաւորութեան հիմնադրման քաղաքական ճարտարապետին վիճակուած չէր տեսնել իր մեծ նպատակի իրականացումը: Զաքարիա Գ. կաթողիկոսի վախճանումէն մօտաւորապէս երկու տարի ետք, մեծ հանդիսաւորութեամբ տեղի ունեցաւ Սմբատ Արծրունիի օծումը 1465թ.

⁹⁶ Ճառընտիր- Ընտրուած ճառերու ժողովածու:

⁹⁷ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 593, քաղուած Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. բ., 418:

⁹⁸ Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 105. քաղուած Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադար. Մխիթար. ի Վենետիկ, հ. 1, էջ 419:

սկիզբներուն՝ Աղթամարի Ս. Խաչ մայր եկեղեցւոյ մէջ, ներկայութեամբ Վասպուրականի հայոց մեծամեծներուն եւ բարձրաստիճան հոգեւորականներուն:

Զաքարիա Գ-ի վախճանումէն մօտ երկու տարի ետք թագաւորական օծումը փաստ մըն էր, որ Վասպուրականի հայութեան ղեկավարները հաստատ էին իրենց որոշման մէջ, առաջ երթալու այդ քաղաքական քայլով:

Ժամանակի գրիչները Սմբատ Արծրունիի թագաւորական օծումը կը կապեն Աստուծոյ կամքին հետ, «*Եւ յայնժամ, - ցնծութեամբ գրում է ժամանակագիրը, - օծեցին զպարոն Սմբատ թագաւոր ըստ նախնեաց իւրոց Գագկայ, զի ի վաղուց անտի ազգս Հայոց չէր տեսել թագաւոր: Փրկիչն մեր Քրիստոս զօրացուցէ զնա եւ բարձրացուցէ զաթոռ իշխանութեան մերոյ*»⁹⁹ Յիշուած է «պարոն» բառը Սմբատի անունէն առաջ, որ կը շեշտէ, թէ ան աշխարհիկ անձնաւորութիւն էր:

Ցնծութիւնը շատ մեծ էր, Սմբատի օծումը կը նմանցուէր Գագիկ Արծրունիի օծումին 908թ. երբ հիմնուեցաւ Արծրունեաց թագաւորութիւնը: Ցնծութեան մեծութենէն կրնանք եզրակացնել, որ կային մէկէ աւելի քաղաքական նպատակներ, որոնց չենք ուզեր անդրադառնալ, մեր հիմնական նիւթէն չհեռանալու համար. բայց կարելի է ընդգծել, որ Վասպուրականի հայութիւնը մեծ յոյսեր կը կապէր տեղի ունեցած պատմական զարգացման հետ, որ վերջ պիտի գտնէր կամ պիտի մեղմանար օտարի լուծի ներքոյ իր տառապեալ կեանքը...:

Մեզի հասած է Սմբատ թագաւորի եւ Ստեփանոս Դ-ի եղբոր Ներսէս եպիսկոպոս գրիչին կողմէ 1472թ. գրուած ձեռագիրը¹⁰⁰, որ «եպիսկոպոսի եւ կաթողիկոսի ձեռնադրութեան եւ թագաւորի օծման Մաշտոց» է: Բարեբախտաբար ձեռագիրի 212բ էջին մէջ պատկերագարուած է նկարիչ Կարապետ Ծաղկողի¹⁰¹ կողմէ պատկեր մը, ուր կարելի է տեսնել Կաթողիկոսը կը թագադրէ ծունկի եկած եւ գլուխը թեթեւ խոնարհած Սմբատ թագաւորը. որուն աջին պատկեր-

⁹⁹ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 59, քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակար. Բ, էջ 239:

¹⁰⁰ Հ. Հ. Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 5702 ձեռագիր:

¹⁰¹ Կարապետ Ծաղկող-Աղթամարի Գրչութեան Կեդրոնի քահանայ գործիչներէն:

ուած են երեք սուրբեր: Պատկերին մէջ սուրբերու ներկայութիւնը ի կողքին կաթողիկոսին եւ հոգեւորականներուն ցուցանիշն է, թէ այդ օծման արարողութեան մէջ կը տեսնէին Տիրոջ օրհնութիւնը: Յաջորդ էջերուն աւելի մանրամասն պիտի անդրադառնանք այս կարեւոր ձեռագրին:

Անդրադարձանք, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչի աջը կը գտնուէր այդ ժամանակ Աղթամարի կաթողիկոս Ստեփանոս Դ-ի մօտ, որ Հայոց եկեղեցիի աւանդական կանոնադրութեամբ Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռին պարտադիր էր: Ս. Աջի ներկայութիւնը յաւելեալ զօրութիւն եւ օրհնութիւն կու տար որեւէ ձեռնարկի, եւ այդ սրբութիւնը ներկայ էր Սմբատ թագաւորի օծման արարողութեան, «*Եւ յայնժամ օծեցին զպարոն Սմբատ թագաւոր ըստ նախնեաց իւրոց Գագկայ, զի վաղուց անտի ազգս Հայոց չէր տեսնել թագաւոր: Փրկիչն մեր Քրիստոս զօրացուցէ զնա եւ բարձրացուցէ զաթոռ իշխանութեան մերոյ եւ զաթոռ յԱղթամարու եւ զսուրբ Աջն Լուսաւորչայ եւ զաթոռակալն մեր՝ զտեսուչ բանաւոր հօտիս՝ զամենագով զտէր Ստեփաննոս կաթողիկոս ամենայն Հայոց եւ զնախնիս իւր. ամէն*»¹⁰²:

Այսպիսով, Սմբատ Արծրունի (1465-1471), եղաւ Հայոց վերջին թագաւորը: Ան, ծագումով մօր կողմէն Արծրունի էր, իսկ հօր կողմէն՝ Մեֆեդիւնեան: Անդրադարձանք 6-րդ բաժինին մէջ, թէ Խեղենիկ Բ. Արծրունին արու զաւակ չունեցաւ, իր աղջկան Մարիամին ամուսնացուց Արծրունեաց տոհմէն Մեֆեդիւն իշխանին, որուն եւ կտակեց Աղթամար կղզին:

1465թ. թագաւորական օծումը պատմական երկրորդ կարեւոր զարգացումն էր 1441թ., Հայոց Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածինի մէջ հաստատումէն քառորդ դար ետք. բայց այս պատմական զարգացումը՝ այս անգամ տեղի ունեցաւ Աղթամար կղզիին մէջ:

Թագաւորական օծումի նպատակը չէր հիմնել Աղթամար կղզիին մէջ սահմանափակուած փոքրիկ թագաւորութիւն մը, այլ Զաքարիա Գ-ի եւ իր համակիրներու գաղափարն էր վերականգնել

¹⁰² Ն. Ակիւնեան, Ազատութեան շարժումը ԺԵ-ԺԶ դարերուն Հայոց մէջ, ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, 1917/1918, էջ 144:

Վասպուրականի հայկական թագաւորութիւնը, ու հետաւոր թիրախ ունենալով այն դարձնել համահայկական պետութիւն, եթէ հնարաւոր ըլլար: Մեր պատմաբանները այս քայլը մեկնաբանած են, տարբեր կերպով. մեջբերենք անոնցմէ մի քանին-

-«Ստեփանոս Դ-ը 1465թ. Զհանշահի համաձայնութեամբ թագաւոր օժեց Սմբատին»:¹⁰³

-«1465թ. Սմբատ Արծրունի-Սեֆեդիներէն հռչակուեց թագաւոր Աղթամար կղզում...»:¹⁰⁴

-«Զաքարիայի մահից յետոյ էր, որ Սմբատը՝ նրա եղբոր որդին, 1465 թ. օծուեց Վասպուրականի հայոց թագաւոր»:¹⁰⁵

-«...հանդիսաւորութեամբ Սմբատ Արծրունուն օժեց Հայոց թագաւոր...»:¹⁰⁶

-«Ստեփանոս Դ.ը 1465ի սկզբներին Աղթամարի Սրբ. Խաչ Մայր եկեղեցում մեծ հանդիսաւորութեամբ եղբորն օժեց հայոց թագաւոր...»:¹⁰⁷

-«Աղթամարի Ստեփանոս կթողիկոսը (1465-1485) զարմանալի փորձ մը կ'ընէ իր ազգականներէն Սմբատը (որդին Ամիր Գուռջի բէկ Սեֆէնդիներէն) օժելով Աղթամարի մէջ «Հայոց թագաւոր» 1465ին...»:¹⁰⁸

Վերոյիշեալ վեց բացատրութիւններուն մէջ ընդգծումները մերն են. կը տեսնենք, որ օծուած էր «թագաւոր», կամ աւելի ընդարձակ բացատրութեամբ «Վասպուրականի հայոց թագաւոր». կամ «հայոց թագաւոր»:

Մեր կարծիքով, բոլոր բացատրութիւնները ճիշդ են. հիմնուած էր հայկական թագաւորութիւն, որ կարելի էր դառնար Վասպուրականի թագաւորութիւն, ու թերեւս Հայոց թագաւորու-

¹⁰³. Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 105:

¹⁰⁴. Արտակ Մովսիսեան, Հայոց Պետականութիւնը, էջ 64:

¹⁰⁵. Գ. Ե. Կիրակոսեան, նոյնը, էջ 332:

¹⁰⁶. Պետրոս Յովհաննէսեան, նոյնը, էջ 13:

¹⁰⁷. Աղաւնի Ա. Ութուշեան, նոյնը, էջ 114:

¹⁰⁸. Արշակ Ալպոյաճեան, նոյնը, էջ 116:

թիւն: Բայց ինչպէս, որ պիտի տեսնենք յաջորդ էջերուն, ան եղաւ Աղթամարի թագաւորութիւն ընդգրկելով միայն մօտակայ ափին գտնուող քանի մը գիւղեր. մնաց այդպէս շատ կարճ ժամանակ, եւ մարեցաւ...:

19. Իշխանութենէն Կաթողիկոսութիւն, եւ Կաթողիկոսութենէն Թագաւորութիւն

Վասպուրականի հայութիւնը, ի հեճուկս տիրող ոչ բարենպաստ քաղաքական պայմաններուն, գտնուելով օտար ազգի եւ կրօնքի՝ թուրքմէն կարա-կոյունլուներու մահմետական իշխանութեան ներքեւ, իր ուժերը կեդրոնացուցած էր Աղթամար կղզիին մէջ, որպէս բերդա-կղզի, որ հեշտ հասանելի չէր օտարազգի ոչ բարեկամներուն:

Վստահաբար Աղթամարի մէջ գտնուող հայկական փոքրիկ «Արմէնիկ» քաղաքի գոյութիւնը, որուն մասին շատ աւելի մանրամասն պիտի անդրադառնանք յաջորդ էջերուն մէջ. պատմական, հոգեբանական եւ ռազմավարական ուժ ու կորով տուին Վասպուրականի հայութեան, որ կարելոր քաղաքական խորք ունեցող քայլին երթան:

Օծման ժամանակ գործնականօրէն ոչ յայտարարուած հայկական փոքրիկ թագաւորութիւն մը արդէն իսկ գոյութիւն ունէր Աղթամար կղզիին մէջ: Արմէնիկ քաղաքին մէջ բնակչութիւն կար, որոնց թիւը մօտաւորապէս 3,000 անձի կը հասներ: Թագաւորութիւնը պաշտպանող ուժ կար, Զաքարիա Գ-ի հիմնած զօրագունդը: Նիւթական հարստութիւն ալ կար. Կաթողիկոսական Աթոռը տնտեսապէս հարուստ էր, եւ ունէր իր ազդեցութիւնն ու իշխանութիւնը Աղթամարի թեմին ենթակայ քաղաքներուն, գիւղերուն, վանքերուն եւ եկեղեցիներուն վրայ. որոնք բոլորն ալ հարկեր կը վճարէին Աղթամարի Աթոռին: Ուրեմն, կը մնար միայն պաշտօնականացնել իրավիճակը, ունենալ թագաւոր, յանձինս Սմբատ Արծրունիի, եւ առաջ քալել:

Այդ բոլորի կողքին Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան անկումէն ետք 1021թ., տեղւոյն հայութեան մէջ վառ

մնացած էր, այդ թագաւորութեան պատմութիւնը իր բոլոր ձեռք-բերումներով. մանաւանդ, որ Աղթամար կղզիին մէջ, որպէս ժա-ռանգութիւն տակաւին մնացած էին Գագիկ Արծրունիի կառու-ցած շինարարութիւնները. շատ հաւանական էր, որ այդ պատ-մաշրջանի թագաւորական պալատը եւ իշխանական դղեակները կանգուն կը մնային, որոնցմէ մէկն էր Ս. Խաչ կաթողիկոսանիստ ճոխ եկեղեցին: Չմոռնանք յիշելու, որ 1021թ. մինչեւ 1465թ., կը կազմէր ճիշդ 444 տարի, որ պատմականօրէն շատ երկար դարե-րու ժամանակաշրջան չէր, մանաւանդ, որ մեզի հասած պատմա-կան տեղեկութիւններուն համաձայն Աղթամար կղզին յիշեալ դարերուն չէր ենթարկուած քանդիչ արշաւանքներու կամ կործա-նիչ երկրաշարժներու:

Ճիշդ է երկրաշարժներ տեղի ունեցած են. Վասպուրականը այն տարածքներէն է, որ ենթակայ է երկրաշարժներու, որոնցմէ մաս մը շատ սաստիկ եղած են եւ մարդկային մեծ կորուստներ ու նիւթական ահաւոր աւերումներ պատճառած են: Վանի երկրա-շարժներու մասին Թ. Խ. Յակոբեան յիշած է, «Վանը զգալի չափով տուժում էր նաեւ պարբերաբար կրկնող երկրաշարժերից: Աղ-բիւրները հաղորդում են քաղաքում եւ շրջակայքում 1276, 1441, 1646, 1648, 1701, 1715 թուականներին տեղի ունեցած երկրաշար-ժերի ու դրանց պատճառած վնասների մասին: Առանձնապէս կոր-ծանիչ է եղել 1648 թուականի երկրաշարժը...»¹⁰⁹ Ամենակործանիչը եղած է 1648թ., որ ազդած է նաեւ Աղթամարի վրայ, այն տեղի ու-նեցած է մեր յիշած ժամանակէն մօտաւորապէս երկու դար ետք:

Այն ինչ տեղի ունեցաւ 1465թ., երբ Աղթամարի Ստեփանոս Դ. կաթողիկոսը իր եղբոր՝ Սմբատին թագաւոր օժեց. շատ նման է 1113թ., Աղթամարի մէջ կեդրոնացած Խեղենիկեան իշխանու-թեան մէջ տեղի ունեցածին, երբ Աբղմսեհ իշխանը իր որդին՝ Դաւիթ եպիսկոպոսը օժեց կաթողիկոս. ինչպէս անդրադարձանք 6-րդ բաժինին մէջ: Երկու պատմական օծումները տեղի ունեցան Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ. առաջինը կաթողիկոսական, երկրորդը թագաւորական: Այսպէս, կարելի է ըսել Աբղմսեհ

իշխանի գործին զարկ տուաւ Զաքարիա Գ. կաթողիկոսը, որ իսկական ճարտարապետն էր թագաւորութիւն հիմնելու գաղա-փարին ու գործին:

Թագաւորական օծումը կարելի չէր ըլլար, եթէ տեղի ունե-ցած չ'ըլլար Խեղենիկեան Արծրունեաց իշխանութեան հզօրանա-լով՝ կաթողիկոսական աթոռի հիմնութիւնը 1113թ.: Այդ Աթոռը հզօրանալով եւ օգտուելով իր վայելած հեղինակութենէն 1465թ., թագաւորութիւն հիմնեց:

Այս բարդ գործընթաց մըն էր. Խեղենիկեան Իշխանութիւնը հզօրանալով հիմնեց Աղթամարի կաթողիկոսութիւնը. վերջինս հզօրանալով հիմնեց Աղթամարի թագաւորութիւնը:

Մեր պատմութիւնը մեզի կը յուշէ բազմաթիւ նման օրի-նակներ, երբ հայ իշխան մը զօրացնելէ ետք իր իշխանութիւնը, կ'անցնի երկրորդ քայլին, այն է ունենալ կաթողիկոսական աթոռ, որ յաւելեալ ժողովրդային ներքին հոգեկան ուժ կու տար իր ստեղծած իշխանութեան: Այսպէս կարելի է անդրադառնալ Փի-լարտոս Վարաժնունիի մասին, որ հայ էր՝ եւ ծագումով Վասպու-րականէն, «Փիլարտոս Վարաժնունին ծագումով Վասպուրական-ցի էր: Կայսր Ռոմանոս Դիոգենեսից ստանալով մեծ դոմեստիկո-սի տիտղոս զինուորական ծառայութեան մէջ էր բիւզանդական բանակում»¹¹⁰

Փիլարտոսի յանդուգն ծրագիրն էր, ստեղծել հայկական կեդրոնական պետութիւն մը. ան այդ իրագործելու համար օգտուեցաւ 1071թ., Մանազկերտի ճակատամարտէն ետք քաղա-քական բեմին վրայ ստեղծուած նոր պայմաններէն եւ հրամցուած առիթներէն: Այսպէս, 1077թ. Փիլարտոս գրաւեց Եդեսիան (Ուր-ֆան), եւ յաջորդ տարին Անտիոքը: Փիլարտոս հայաշատ՝ Մարաշ քաղաքը ընտրեց, որպէս մայրաքաղաք իր հիմնած հայկական անկախ իշխանապետութեան:

Փիլարտոս Վարաժնունի, որպէս քրիստոնէայ փորձեց նաեւ իր հիմնած իշխանապետութեան մայրաքաղաք՝ Մարաշի

¹⁰⁹ Թ. Խ. Յակոբեան, Պատմական Հայաստանի Քաղաքները, էջ 236:

¹¹⁰ Գրիգոր Գ. Միքայէլեան, Կիլիկիայի Հայկական Պետութեան Պատմութիւն, էջ 71:

մէջ ունենալ կաթողիկոսական աթոռ մը. այդ աթոռին կաթողիկոս ձեռնադրուեցաւ Վասպուրականի՝ Վարագավանքի վանահայր՝ տէր Պօղոսը¹¹¹. սակայն այս պատմական զարգացումը երկար չտևեց: Ի վերջոյ սելջուկները կործանեցին Փիլարտոսի իշխանապետութիւնը: Իր փորձը իշխանապետութիւն հիմնելու, ապա զայն աւելի զօրացնելով հիմնել ուրոյն կաթողիկոսական աթոռ եւ այդ բոլորէն ետք հիմնել հայկական թագաւորութիւն, այդ աշխատանքը կէս ճանապարհին վերջ գտաւ: Փիլարտոս Վարաժնունիի պատմութեան մանրամասնութեան մասին փափաքողները կարող են հանդիպիլ մեր մէկ այլ գիրքի մէջ: ¹¹²

Փիլարտոսի շարժումէն տարիներ առաջ, կարելի է յիշել նաեւ երկրորդ օրինակ մը այս քաղաքական գործընթացի մասին: 1080թ., Բագրատունիներու շառաւիղներէն Ռուբէն իշխանը հիմնեց Կիլիկիոյ հայկական իշխանութիւնը, իր կողքին ունենալով Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը, որ սելջուկներու արշաւանքներէն վտանգուած՝ 1066թ. Գրիգոր Բ. Վկայասէրի օրով հաստատած էր Հայաստանէն դուրս, Կիլիկիոյ հիւսիսային սահմանամերձ Ծամնդավի շրջանը: Ռուբէնի հիմնած իշխանութիւնը շարունակեց այս գործընթացը, եւ հզօրանալով հիմնուեցաւ Կիլիկիոյ հայկական թագաւորութիւնը 1198թ. Լեւոն Բ-ի օրով:

Նոյն գործընթացն էր, որ տեղի կ'ունենար Աղթամարի մէջ. իշխանութենէն կաթողիկոսութիւն, եւ ապա կաթողիկոսութենէն թագաւորութիւն:

Այս գործընթացէն շատ յստակ կը պարզուի, եկեղեցական (հոգեւոր) եւ քաղաքական (աշխարհիկ) իշխանութեանց սերտ յարաբերութիւնները: Աւատապետական հասարակութիւններու մէջ, եկեղեցական եւ քաղաքական իշխանութիւնները գործընկերներ եղած են. կաթողիկոսական աթոռի մը գոյութիւնը իշխանապետութեան կամ թագաւորութեան մը կողքին, նոր ուժ կու տար

¹¹¹. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 150:

¹¹². Պետրոս Մ. Թովմասեան, Աբբասեան Խալիֆայութեան Վերջին Պատմաշրջանը եւ Հայութիւնը, էջ 81-89:

աշխարհիկ եւ հոգեւոր ուժերուն միասնաբար պաշտպանելու տիրող աւատապետական դասակարգին շահերը:

Երբ 428թ. անկում ապրեցաւ Արշակունեաց թագաւորութիւնը, Պարսկաստանի Սասանեան կայսրութիւնը սկսաւ մեր ազգի ճակատագիրին հետ խաղալ. Հայ ազգի գոյութիւնը վտանգուած էր: Հայոց ղեկավարները դէմ կանգնեցան Պարսկաստանի հայաջինջ քաղաքականութեան, 444թ. յունիսի 24-ին, Ծաղկոտն գաւառի Շահապիվան աւանին մէջ գումարեցին շատ կարեւոր եկեղեցական ժողով մը, որ կոչուեցաւ այդ շրջանին անունով, Շահապիվանի եկեղեցական ժողով: Այդ ժամանակ Հայոց կաթողիկոսն էր Յովսէփ Ա. Վայոցձորեցին, իսկ մարգպանը¹¹³՝ Վասակ Սիւնին. ժողովին մասնակցեցան 40 նշանաւոր դէմքեր Հայաստանի հոգեւոր եւ աշխարհիկ գործիչներէն:

Շահապիվանի եկեղեցական ժողովը ամրացուց Հայոց եկեղեցին, որ բաւական տկարացած էր պարսկական տիրապետութեան հետեւանքով: Ժողովը զօրացուց Հայոց եկեղեցւոյ դիրքերը պայքարելու կրօնափոխութեան ինչպէս եւ աղանդաւորական շարժումներուն դէմ: Յիշեալ ժողովէն եօթ տարի ետք 451թ. տեղի ունեցաւ Աւարայրի ճակատամարտը՝ Վարդանանցի պատմական՝ ճակատագրական բարոյական մեծ յաղթանակը: Կարելի է արձանագրել, որ այս ժողովին՝ հիմքը դրուեցաւ Հայոց Ազգային եկեղեցիին: Հայոց եկեղեցին ազգայնացաւ, ու թագաւորութեան բացակայութեան հետեւանքով դարձաւ Հայոց քաղաքական գործունէութեան հիմնաքարը, եւ կրօնական իշխանութեան հետ միասին ունեցաւ քաղաքական իշխանութիւն:

Այսպէս, Շահապիվանի եկեղեցական ժողովէն (444թ.) մօտաւորապէս մէկ հազարամեակ յետոյ (1465թ.), Աղթամարի Կաթողիկոսական Աթոռը՝ կրօնական իշխանութիւնը կը գործածէր

¹¹³. Մարգպանը վարչական պաշտօն էր Պարսկաստանի Սասանեան իշխանութեան ժամանակ. երբ Հայաստանը կը ներկայանար որպէս մարգպանութիւն. եւ մարգպանը կը ներկայանար պարսիկ Սասանեան արքայից արքայի տեղապահը:

իր ժառանգած քաղաքական հիմքերը, ու կը հիմնէր աշխարհիկ իշխանութիւն՝ թագաւորութիւն մը:

20. Ջահանշահի Դիրքը Թագաւորական Օծումէն

Սմբատ Արծրունիի թագաւորական օծումը իր խորքին մէջ ցոյց կու տայ, որ օրուայ հայ ղեկավար դասը Հայկական թագաւորութեան վերականգնումը կը կապէր մերձակայ մահմետական Արեւելքի վեհապետի մը հետ, յանձինս թուրքմէն կարա-կոյուն-լուներու ղեկավար՝ Ջահանշահին, եւ ոչ թէ հեռաւոր Արեւմուտքի քրիստոնէայ ղեկավարներուն. ի հարկէ քաջալերուելով Ջահանշահի քաղաքականութենէն՝ «...*իրայատուկ, մեղմ ու հեռատես քաղաքականութեամբ, որ նա վարում էր ընդհանրապէս իր հպատակ քրիստոնէաների եւ մասնաւորապէս հայերի նկատմամբ*»:¹¹⁴ Վստահաբար Ջահանշահի մեղմ քաղաքականութիւնը իրեն հպատակ բոլոր քրիստոնէայ ժողովուրդներուն հանդէպ, կարելի է բացատրել, որ ան կ'ուզէր անոնց աշխատանքով բարելաւել իր տէրութեան քայքայուած տնտեսութիւնը, եւ զարգացնել առեւտուրն ու արհեստագործութիւնը:

Տեղի ունեցածը՝ պատմական աննախադէպ մօտեցում էր, երբ մահմետական գերիշխող ուժ մը կը համաձայնէր քրիստոնէայ՝ քաղաքական եւ ռազմական տեսակետէ շատ աւելի տկար վիճակի մէջ գտնուող ժողովուրդի մը, որ հիմնէր իր պետութիւնը, փոքրիկ թագաւորութեան մը կերպով...:

Այստեղ հարց կը ծագի, արդեօք ինչպէ՞ս պատահեցաւ, որ Ջահանշահը համաձայնեցաւ, որ հայերը Աղթամար կղզիին մէջ հիմնեն թագաւորութիւն մը. ըստ Վրէժ Վարդանեանի «Մտեփանոս Դ-ը 1465թ., Ջահանշահի համաձայնութեամբ թագաւոր օծեց Սմբատին: Ջահանշահը գիտէր, որ Սմբատի «թագաւորութիւնը» գուրկ է իրական բովանդակութիւնից եւ որեւէ ձեւով չի ստուերի Հայաստանում իր իշխանութիւնը»:¹¹⁵

¹¹⁴. Պետրոս Յովհաննէսեան, նոյնը, էջ 11, 12:

¹¹⁵. Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 105:

Ջահանշահի հայկական հզօր թագաւորութեան ներկայութեան դէմ էր. սակայն տեղական փոքրիկ թագաւորութիւն մը պիտի չկարողանար խանգարել իր իշխանութիւնը: Իսկ եթէ պատահէր, որ այդ ստեղծուած պետութիւնը հզօրանար, ինչ որ այս պարագային շատ ու շատ անհաւանական էր, որ պիտի փորձէր բացատրել յաջորդ էջերուն. այն ժամանակ, անոնք պիտի կործանէին այդ նորաստեղծ պետութիւնը եթէ տեսնէին, որ ան կը զարգանար վտանգելով իրենց շահերը:

Ջահանշահի դիրքը թագաւորական օծումէն, ճիշդ էր. Աղթամարի թագաւորութիւնը որեւէ կերպ չվտանգեց իր իշխանութիւնը: Գուցէ ան մտածեց. հայերը դարերէ ի վեր ունին Աղթամարի կաթողիկոսութիւնը, ուր կը ղեկավարեն իրենց հին թագաւորական ընտանիքներէն մէկուն շառաւիղները. ինչ պիտի ըլլայ, թող ունենան իրենց երազած փոքրիկ թագաւորութիւնը: Ջահանշահ կարող էր դէմ կանգնիլ թագաւորական օծումին, ինչպէս գիտենք ան իր համաձայնութիւնը տուած էր Ջաքարիա Գ-ին. բայց վերջինի մահէն ետք, ան դէմ չկեցաւ. եւ օծումը տեղի ունեցաւ ըստ նախկին համաձայնութեան, երբ Ջաքարիա Գ. երկու տարի առաջ հեռացած էր կեանքէ:

Միւս կողմէն, տեղական ռազմականօրէն շատ տկար թագաւորութիւններու կամ իշխանութիւններու ստեղծումը կը հեշտացնէր ընդհանուր տիրակալի տիրապետութիւնը. ինչպէս գիտենք կարա-կոյուն-լուները արտօնած էին տեղական տարածքային քրտական փոքրիկ իշխանութիւններու գոյութիւնը, ինչ պիտի տարբերէր, եթէ այդ բոլորին կողքին աւելնար հայկական մը, թէկուզ հայերը փափաքին թագաւորական օծումով՝ անոր մեծ շուք պարգեւէն: Սմբատի օծումը կը ծառայէր նաեւ Ջահանշահին, մէջբերենք հետեւեալը, «Այս միտքն սակայն բոլորովին օտար չէր Հայոց համար նաեւ բռնապետներէն ոմանք զգացին թէ անշահ չէր ըլլար իրենց՝ եթէ երկրին քրիստոնէայ տարրը իրենց բարեկամ ունենային, որ իրենց ռոտիսին յառաջախաղացութեան

անջել թումբ մը կրնար կազմել»¹¹⁶ Այստեղ, կ'արժե անդրադառնալ, թե կարա-կոյունլուները պայքարի մեջ էին իրենց մրցակից ու պատմական ոսոխ՝ թուրքմեն ակ-կոյունլուներու պետութեան հետ. վերջինս իր տիրապետութեան տակ առած էր հայկական Տարօնի եւ Աղձնիքի տարածքները: Ջահանշահ սիրաշահելով Վասպուրականի հայութիւնը, կ'ուզէր անոնց պահել իր կողքին:

Սակայն այդ չէր նշանակեր, թե Ջահանշահի իշխանութեան տարիներուն հարստահարութիւնները հայութեան դէմ քիչ էին. նոյն տարին 1465թ., երբ տեղի ունեցաւ Սմբատի թագաւորական օծումը, մեզի հասած են ձեռագիրներ, ուր կը յիշուի թուրքմենական լուծի հարստահարութիւններու մասին, որոնց գրիչները կը կոչէին նետողաց կամ նետաձիգներու ազգ: Այդ ժամանակաշրջանի մեր պատմիչները եւ գրիչները նետողաց ազգ կը կոչէին թաթար-մոնղոլներուն, որովհետեւ անոնց հիմնական զէնքը նետ ու աղեղն էր. որոշ գրիչներ շարունակեցին այդպէս կոչել նաեւ անոնց ազգակից եւ յաջորդող թուրքմեններուն, «Այսպէս 1465թ. Աղթամարում Հայրապետ գրչի օրինակած Աւետարանի յիշատակարանում նշում է՝ «ի հայրապետութեան Տեառն Ստեփանոսի կաթողիկոսի, ի դառն եւ վշտալից ժամանակիս, յորում ի խիստ եւ ի նեղութեան եւ ի չար ծառայութեան կամք ազգին նետողաց, զի յոյժ կեղեն եւ կեղեքեն զազգս քրիստոնէից»¹¹⁷:

21. Ներքին Մրցակցութեան Դերը

Թագաւորական Օծման Մէջ

Պատմական թագաւորական օծման յետին կար նաեւ հայկական ներքին մրցակցութեան արձագանգներ. մրցակցութիւնը եւ պայքարը Հայաստանի հիւսիս-արեւելեան եւ հարաւարեւմտեան երկու կարեւոր կեդրոններու՝ Երեւանի եւ Վանի միջեւ, կամ Արարատեան Դաշտ-Սիւնիք եւ Վասպուրականի

¹¹⁶ Ն. Ակինեան, Ազատութեան շարժումը ԺԵ-ԺԶ դարերուն Հայոց մէջ-ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, 1917/1918, էջ 142:

¹¹⁷ Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 105. քաղուած ԺԵ դարի հայ. ձեռագր. յիշատակարաններ, էջ 239:

միջեւ¹¹⁸: Այդ պատմաշրջանին Երեւանը կը ներկայացնէր Հայաստանի հիւսիս-արեւելեան մասի մայրաքաղաք, եւ Վանը հարաւարեւմտեան¹¹⁹: Այս ներքին պայքարը ոչ միայն կեդրոնացած էր Ամենայն Հայոց Աթոռի շուրջ այլ՝ աւելին. այդ պատճառով երկու կողմէն ալ մասնակից էին եկեղեցական եւ աշխարհիկ ղեկավար ուժերը: Այս ներքին պայքարը կը հանդիսանայ մեր պատմութեան տխուր բացասական էջերէն մէկը:

Կարելի է այսպէս մօտենալ այս պատմական զարգացումին. 1441թ. Երեւանի եւ Էջմիածինի համագործակցութեամբ Ամենայն Հայոց Աթոռը կրկին անգամ հաստատուեցաւ Ս. Էջմիածինի մէջ. եւ ինչպէս անդրադարձանք 8-րդ բաժինին մէջ, Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Գ-ը չ'ընտրուեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոս, ան չորս թեկնածուներէն մէկն էր: Պատմական այդ զարգացումը մեծ յաղթանակ էր համայն հայութեան եւ ի մասնաւորի Հայաստանի հիւսիս-արեւելեան հայութեան, որ Մայր Աթոռը հեռաւոր Կիլիկեայէն վերադարձաւ Հայաստան՝ աւելի ապահով վայր, իր տրամաբանական տեղը՝ Արարատեան Դաշտը: Որպէս պատասխան Վանի եւ Աղթամարի համագործակցութեամբ 1465թ. տեղի ունեցաւ հայկական պետականութեան վերահաստատման պատմական փորձը Աղթամարի մէջ. եւ այդ կարեւոր ձեռքբերում էր համայն հայութեան եւ ի մասնաւորի Հայաստանի հարաւ-արեւմտեան հայութեան:

Այս ներքին մրցակցութիւնը մեզի կը յիշեցնէ 5 դար առաջ պատմական զարգացումը 908թ., երբ Վասպուրականը անջատուեցաւ համահայկական Բագրատունեաց թագաւորութենէն եւ հիմնուեցաւ Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը, որուն մասին անդրադարձանք 4-րդ բաժինին մէջ:

Հայկական երկու կարեւոր կեդրոններու մրցակցութիւնը այս պատմաշրջանին տեղի ունեցաւ Մայր Աթոռը իրենց մօտ ունենալու համար, որովհետեւ ան համահայկական արժէք ունէր

¹¹⁸ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 595, 596:

¹¹⁹ Ստ. Մելիք-Բախշեան, Հայոց Պատմութիւն (Հնագոյն ժամանակներից մինչեւ 18րդ դարի վերջը), էջ 152:

եւ ունի ցայսօր. իսկ միւս երկու կաթողիկոսական աթոռները Աղթամար եւ Սիս՝ տեղական էին, համահայկական հեղինակութիւն չ'ունէին: Այդ հեղինակութիւնը ունենալու հիմնական պայմանն էր, Ս. Գրիգոր Լուսաւորիչի աջը. այդ պատճառով յիշեալ սրբութիւնը Զաքարիա Գ. 1461թ. երբ հեռացաւ Ս. Էջմիածինէն իր հետ տարաւ Աղթամար, եւ այդ սրբութիւնը իր մօտ պահելով օգտուեցաւ անոր հեղինակութենէն: Զաքարիայի մահէն ետք Ստեփանոս Դ. կաթողիկոսը Ս. Աջը պահեց իր մօտ, որ գործածուեցաւ 1465թ., Սմբատը թագաւոր օծելու ժամանակ: 1471թ. հիմնրուած թագաւորութեան անկումէն ետք, Ս. Աջը պահուեցաւ Աղթամարի մէջ, հակառակ այն իրականութեան, որ Աղթամարի կաթողիկոսը Ստեփանոս Դ., այլեւս Ամենայն Հայոց կաթողիկոս չէր. Ս. Էջմիածինի մէջ գահակալեց Արիստակէս Բ. եւ մնաց կաթողիկոս մինչեւ իր վախճանը 1469ին, առանց Ս. Աջը Էջմիածինի մէջ գտնուելու:

Ս. Աջը դարձաւ մրցակցութեան հարց, մինչեւ 1476թ., երբ գաղտնաբար վերցուեցաւ Աղթամարէն եւ տարուեցաւ Ս. Էջմիածին. պիտի անդրադառնանք այդ պատմութեան Գ. գլուխին մէջ:

Սմբատին թագաւոր օծելու նպատակներէն էր նաեւ զարկ տալ Մայր Աթոռ ունենալու պայքարին մանաւանդ, որ Ս. Աջը կը գտնուէր Աղթամարի մէջ. Վասպուրականի հայութիւնը այդ մրցակցութեան զարկ տուաւ աւելի զօրացնելու իր դիրքերը, *«Սմբատի թագաւոր» օծելու շնորհիւ նաեւ պէտք է բարձրացուէր Ստեփանոս Դ-ի հեղինակութիւնը ոչ միայն նրան ենթակայ թեմերում, այլեւ Հայաստանի միւս մասերում, անշուշտ, Էջմիածնի Ընդհանրական Աթոռի հաւանութեամբ»*:¹²⁰ Օծման նպատակներէն էր նաեւ զօրացնել Աղթամարի Աթոռի քաղաքական դիրքերը, *«Սմբատի թագաւորութեամբ վերականգնուելու էր Հայոց պետականութիւնը, եւ կամ հետապնդում էր Աղթամարի աթոռը կաթողիկոսական միւս աթոռներից գերագահ ներկայացնելու եկեղեցական ու քաղաքական յեռազնա նպատակներ»*:¹²¹

¹²⁰ Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 106:

¹²¹ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 595:

Աղթամարի մէջ թագաւորութեան հիմնադրութեան ձեռնարկը հանդիսացաւ պսակը Վասպուրականի հայութեան հայկական պետականութեան ստեղծման գործընթացին, եւ ինչպէս բացատրուած է հետեւեալ մէջբերման մէջ Սմբատի խաղաքարտը շատ անհրաժեշտ էր, *«Տեսական ու գաղափարական հող էր նախապատրաստում նախ ընդհանրական կաթողիկոսական գահը գրաւելու եւ ապա Էջմիածնի ու Աղթամարի կաթողիկոսական զոյգ աթոռները վերամիաւորելու ուղղութեամբ: Ահա թէ ինչու էր անհրաժեշտ Սմբատի խաղաքարտը: Աղթամարն առանձնանում էր բոլորից. այն միանգամից յայտնւում էր ուշադրութեան կենտրոնում, քանզի նորընծայ թագաւորի նստավայրն էր»*:¹²²

Այսպէս, Աղթամարի մէջ թագաւորութեան հիմնադրութեան փորձը իր դրդպատճառներով բազմաշերտ էր. պիտի աշխատինք այս հարցը մանրամասն լուսաբանել յաջորդ էջերուն մէջ:

22. Արտաքին Իրավիճակը Թագաւորութեան Հիմնադրման Ժամանակաշրջանին

Հայկական թագաւորութիւն հիմնելու 1465թ. փորձը տեղի ունեցաւ պատմական շատ կարեւոր զարգացումներու ժամանակաշրջանի մը ընթացքին:

Հայութեան այս քաղաքական փորձը տեղի կ'ունենար Բիւզանդական կայսրութեան անկումէն միայն՝ մէկ տասնեակ տարի ետք. ոչ շատ հեռաւոր արեւմուտքի մէջ՝ Օսմանցի թուրքերը 29 Մայիս 1453թ., գրաւած էին Կ. Պոլիսը եւ վերջ տուած երկարակեաց Բիւզանդական կայսրութեան: Այդպիսով, մեզ հետաքրքրող տարածքաշրջանէն վերջնականապէս հեռացուած էր քրիստոնէական հզօր անցեալ ունեցող գերութ մը, որ իր վարած անհետատես սխալ քաղաքականութեամբ հանդիսացաւ գլխաւոր պատճառը Հայոց Բագրատունեաց եւ Արծրունեաց հարստութիւններու անկման 11-րդ դարուն:

¹²² Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 595:

Դարերէ ի վեր բիզանդական մայրաքաղաք՝ Պոլսոյ մէջ գոյութիւն ունեցած էր հայկական համայնք մը, որ կազմակերպուած էր 572թ., սակայն ան մշտապէս բիզանդական եկեղեցւոյ ճնշման տակ էր: Օսմանցի Մուհամմեդ Բ. սուլթանը 1461թ. Պուրսայի հայ եպիսկոպոս Յովակիմը ճանչցաւ, որպէս Օսմանեան կայսրութեան հպատակ հայոց պատրիարք: Այսպէս, ի կողքին Երուսաղէմի պատրիարքութեան հիմնուեցաւ Պոլսոյ հայոց պատրիարքարանը, որ կը շարունակէ իր գոյութիւնը մինչեւ մեր օրերը:

Կարա-կոյունլուներու պետութեան արեւմտեան սահմաններուն՝ Հայկական Լեռնաշխարհի տարածքներուն տիրացած մէկ այլ թուրքմէն ցեղ մը Ակ-կոյունլուներու պետութիւնը, սկսած էր հզօրանալ: Այս պետութիւնը աւելի հզօրանալով վերջ պիտի տար Հայաստանի մեծ մասին վրայ՝ հաստատուած կարա-կոյունլուներու պետութեան:

Հեռաւոր հիւսիսային տարածքներուն մէջ, իրենց գոյութիւնը կը շարունակէին Սամցխի, Քարթլիի եւ Կախէթի վրացական փոքրիկ թագաւորութիւնները: Համշէնի շուրջ փոքր տարածքով՝ ինքզինքը կը պահէր հայկական Առաքել իշխանութիւնը: Արեւելեան Հայաստանի եւ Արցախի մէջ կը գոյատեւէին Պոռշեաններու, Օրբելեաններու եւ Հասան-Ջալալեաններու հայկական փոքրիկ իշխանութիւնները, որոնք իրենց հպատակութիւնը յայտնած էին կարա-կոյունլուներու Ջահանշահին:

Այսպէս էր պատկերը, երբ Արեւմտեան Հայաստանի մէջ տեղի ունեցաւ հայկական թագաւորութեան հիմնադրութիւնը՝ կեդրոն ունենալով Աղթամար կղզին:

Աղթամարի տարածքին մէջ հիմնադրուած թագաւորութեան մօտակայքը կիսանկախ հայկական իշխանութիւններ չկային այդ ժամանակ, որ տեղի ունենար նորաստեղծ թագաւորութեան ընդարձակումը դէպի այդ տարածքներ: Ամենամօտիկը, Սիւնիքի Պոռշեաններու տարածքն էր, որ որոշ չափով ինքնավար էր:

Աղթամար կղզիի ծովեզերքին առջեւ, ամենամօտիկ հայաշատ խոշոր քաղաքը Ոստանն էր, որուն ուղղութեամբ կարելի էր

ընդարձակուէր ստեղծուած թագաւորութեան սահմանները, կը գտնուէր քիւրտ իշխանի մը ձեռքը, որ «ամբողջովին քրիստոնէաների թշնամին էր»:¹²³ Երկրորդ մօտիկ հայաշատ քաղաքն էր՝ Վասպուրականի սիրտը՝ Վանը, որ կը գտնուէր կարա-կոյունլուներու Ջահանշահ տիրակալի եղբօր՝ Մահմուդ բէկի իշխանութեան ներքեւ, որուն մասին անդրադարձած է Առաքել Դավրիժեցին:¹²⁴ Երրորդ մօտիկ քաղաքը Բաղէշն էր, որ կը գտնուէր Էմիր Շարաֆի իշխանութեան ներքեւ. ան հայ ժողովուրդին հանդէպ թշնամաբար տրամադրուած էր, եւ որուն 1461թ. ապստամբութեան միջամտեց Ջաքարիա Գ. կաթողիկոսը, ինչպէս անդրադարձանք 13-րդ բաժինին մէջ:

Այսպէս, խեղդիչ էր արտաքին վիճակը հայոց հիմնադրած նոր թագաւորութեան տարածքին շուրջ. որ հանդիսացաւ, որպէս հակառակ ազդակ հայկական նորաստեղծ թագաւորութեան գոյութեան եւ զարգացման: Նմանապէս վատառողջ էր Հայոց ղեկավար խաւերու ներքին յարաբերութիւնները. անմիաբանութիւնը կը տիրէր բոլորին վրայ...: Հետեւաբար նորաստեղծ թագաւորութիւնը որեւէ յոյս չունէր զարգանալու եւ զօրանալու, եւ իր կնիքը դնելու պատմութեան բեմին վրայ:

23. Աղթամարի Թագաւորութեան Տարածքը

Աղթամարի մէջ 1465թ. հիմնադրուած Արծրունեաց թագաւորութեան տարածքը շատ ընդարձակ չէր, հիմնականօրէն թագաւորութեան տարածքը կ'ընդգրկէր Աղթամար կղզին, որ այդ ժամանակ շատ աւելի տարածուն էր. եւ կղզիին դիմացի առափնեայ տարածքներուն գիւղերը, «Հայոց այս վերջին թագաւորի տիրապետութիւնը տարածուում էր Աղթամար կղզու (որ աւելի մեծ էր, քան մեր օրերում) եւ կղզու դիմաց ծովափին ընկած

¹²³ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 333:

¹²⁴ Առաքել Դավրիժեցի, նոյնը, էջ 332:

մի քանի գիւղերի վրայ: Կողմի վրայ կար 600 տուն գուտ հայ բնակչություն ունեցող մի փոքրիկ քաղաք...»:¹²⁵

Համաձայն պատմական տեղեկություններուն Աղթամար կղզին տարածութեամբ աւելի ընդարձակ էր 10-րդ դարուն, որովհետեւ Վանայ լիճի ջուրի մակարդակը աւելի ցած էր այդ ժամանակներուն. ինչպէս գիտենք, ան մշտական բարձրացման մէջ է: Գագիկ Արծրունին 10-րդ դարուն Աղթամար կղզիին վրայ պարիսպներով շրջապատուած փոքրիկ քաղաք մը կառուցեց ինչպէս յիշեցինք: Այդ քաղաքը մօտաւորապէս կէս հազարամեակ ետք դարձաւ յենարանը Աղթամարի մէջ հիմնադրուած Սմբատի թագաւորութեան:

Վանայ լիճի արեւմտեան մասը ամենախորն է՝ մօտաւորապէս 400մ., երկարութիւնը հիւսիսէն մինչեւ Պիթլիս եւ հիւսիսարեւմուտքէն մինչեւ Ախլաթ: Լիճի արեւելեան մասը մակերեսային է: Վան-Աղթամար մասը աստիճանաբար կը խորանայ ունենալով առաւելագոյն խորութիւն 250 մ.: Լիճ եւ Կտուց կղզիներուն կողմերու խորութիւնը հազիւ թէ 50մ. է: Հետեւաբար, Վանայ լիճի ջուրի մակարդակի բարձրացումը դարերու ընթացքին փոքրացուցած է Աղթամար կղզիի տարածքը, եւ Լիճ ու Կտուց ներկայի կղզիները, դարեր առաջ եղած են թերակղզիներ, եւ ջուրի բարձրացումով վերածուած են կղզիներու:

Ըստ Աշխարհացոյցին «Ատլաս», որ կը ներկայանայ հայոց պատմութեան միջնադարեան աշխարհագրական շատ կարեւոր ուսումնասիրութիւն մը, մանաւանդ բացառիկ աղբիւր մը Մեծ Հայքի մասին. Վանայ լիճը Աշխարհացոյցի պատրաստման ժամանակ 5-7-րդ դարերուն ունէր վեց կղզի. ի կողքին ներկայի Լիճ, Աղթամար, Կտուց եւ Առտէր կղզիներուն, կային նաեւ երկու այլ կղզիներ, «Ծիպանի»՝ Կտուցէն հիւսիս-արեւմուտք. եւ «Արծկեռ»՝ Ծիպանիէն արեւմուտք:¹²⁶ Ծիպանի եւ Արծկեռ կղզիները Վանայ

լիճի ջուրի բարձրացման պատճառով ընկղմած են լիճի ջուրերուն մէջ:

Ներկայիս Աղթամար կղզիին տարածութիւնն է 0.7 քառ. քմ., բայց 555 տարի առաջ երբ հիմնուեցաւ հայկական թագաւորութիւնը, կղզիին տարածութիւնը աւելի խոշոր էր. ենթադրենք՝ նուազագոյնը 1.0 քառ. քմ. եթէ ոչ աւելի:

Ցուցակ Թիւ 2
Աղթամարի Տարածքը

	Տարածութիւն քառ. կմ.	Բնակչութիւն
Վաթիքան	0.49	825
Մոնաքօ	2.10	37,308
Աղթամար	0.7-1.0	0

Գաղափար մը ունենալու համար պատրաստեցինք Ցուցակ Թիւ 2ը, ուր կարելի է տեսնել, ներկայիս աշխարհի մէջ պաշտօնականօրէն ճանչցուած ամենափոքր տարածութեամբ երկու պետութիւնները՝ Վաթիքանն ու Մոնաքօն. եւ Աղթամարի տուեալները: Այս թիւերէն կարելի է եզրակացնել, թէ երբ յիշուած է, որ Աղթամարը ունէր 600 տուն բնակչութիւն, այսինքն մօտաւորապէս 3000 բնակչ 15-րդ եւ 16-րդ դարերուն, այդ շատ աւելի տրամաբանական պէտք է նկատել: Յիշեցնենք, Աղթամարը որպէս կղզի իր դիրքով ռազմական բերդ մըն էր, պաշտպանուած իր ափերու ալիքներով, որոնք կը համարուէին այդ հայկական փոքրիկ մայրաքաղաքի պաշտպանողական պարիսպները:

Մեզ հետաքրքրող հայկական կարճատեւ թագաւորութեան հիմնադրութենէն կէս դար ետք՝ 16-րդ դարուն, Աղթամար քաղաքը (Գագիկ Արծրունիի հիմնած քաղաքը) տակաւին գոյութիւն ունէր: Վենետիկցի անանուն վաճառականը 1510-ական թուականներուն Աղթամար կղզին այցելելով՝ իր գրութեան մէջ զայն կոչած է Արմէնիկ, «Անանուն վենետիկցի վաճառականի վկայութեամբ Աղթամար կղզում կար մի փոքրիկ քաղաք՝ 600 տուն հայ բնակչութեամբ: Ահա թէ Աղթամարի կղզին ինչպէս է նկարագրել

¹²⁵ Ն. Ակիմեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 42:

¹²⁶ Բարգէն Յարութիւնեան, Հայաստանի Պատմութեան Ատլաս, Ա. մաս, Երեւան 2004, էջ 42, 43:

յիշեալ ճանապարհորդ վաճառականը. «Կղզու... վրայ կայ մի փոքրիկ քաղաք, երկու մղոն շրջագծով, քաղաքն ունի այնքան տարածութիւն, որքան կղզին: Այս քաղաքը կոչւում է Արմէնիկ, շատ բազմամարդ է միայն հայ քրիստոնէաններն են բնակւում այնտեղ, առանց ոչ մի մահմեդականի. ունի շատ եկեղեցիներ, բոլոր հայ քրիստոնէաների պաշտամունքի համար: ... Քաղաքի կամ կղզու դիմաց գտնւում է մի ծովածոց հիանալի մի դաշտով, որն ունի բազմաթիւ գիւղեր՝ բնակուած հայ քրիստոնէաներով»:¹²⁷ Քաղաքին անուանումը կը շեշտէ, որ ան գուտ հայկական քաղաք էր:

Աղթամարի «Դուրսի Տունը» հատուածը մաս կը կազմէր Աղթամարի թագաւորութեան տարածքէն: Ան կը գտնուէր Աղթամար կղզիի հարաւ արեւմուտքի ափի եզերքին գտնուող Ախավանք կամ Ահավանք գիւղին մէջ, որ հարուստ էր այգիներով եւ պարտէզներով: Աղթամար կղզին ժամանակին ունէր մաքուր ջուրի աղբիւր, եւ երբ ան ցամքեցաւ, ջուրը Աղթամար կը հասնէր նաւակներով Ախավանք գիւղէն: Թերեւս այդ ժամանակ, երբ Արմէնիկ քաղաքի բնակչութիւնը կը հաշուէր մօտաւորապէս երեք հազար, խմելու ջուրը կղզի կը տարուէր Ախավանք գիւղէն. տես Քարտէսը գիրքի վերջաւորութեան:

Աղթամար կղզիի վրայ հիմնուած Արմէնիկ փոքրիկ քաղաքը, որ դարձաւ Սմբատ Արծրունիի թագաւորութեան մայրաքաղաքը, ունէր իր նաւահանգիստը, որ կառուցէր էր 10-րդ դարուն Գագիկ Ա. Արծրունին (908-943թ.). այդ արհեստական նաւահանգիստը կառուցուեցաւ շատ մեծ ջանքերով, որովհետեւ Աղթամար կղզին չունէր բնական ծովախորշ:

Արհեստական նաւահանգիստի կառուցումը կը նկատուի Գագիկ Արծրունիի ամենայիշարժան գործերէն մէկը, ի կողքին Աղթամարի Ս. Խաչ եկեղեցիին. այդ նաւահանգիստի մասին Թորոս Թորամանեան ճարտարապետը յիշած է, «Աղթամարի նաւահանգստի մնացորդները հիացրել ու զարմացրել են նրա կառու-

¹²⁷ Գ. Ե. Կիրակոսեան, նոյնը, էջ 326. քաղուած Հ. Յակոբեան, Ուղեգրութիւններ, Ա., էջ 300-301: Նաեւ, Սերգէյ Վարդանեան, Հայաստանի Մայրաքաղաքները, էջ 15:

ցումից նոյնիսկ տասը դար յետոյ ապրած շինարարներին ու ճարտարապետներին: Այդ նաւահանգստի աւերակները տեսնելով, Թորոս Թորամանեանը գրել է, «Գագիկ Ա. ուզելով ծովի մէջ մի խաղաղ նաւակահանգիստ շինել, չորս ձիարշաւ երկարութեամբ (աւելի քան երկու կիլոմետր) ծովը լեցուցէր է մեծամեծ ժայռերով եւ վրաները շինել է հաստատուն պարիսպներ՝ նաւահանգիստը շրջապատող: Այդ պարիսպները երեւում են ջրի մէջ, որովհետեւ վերեւի մասերը փլել են, նաեւ ջրի մակարդակը բարձրացել է դարերի ընթացքում եւ պարիսպի ստորին մասերը մնացել են ջրի մէջ»:¹²⁸

Տեղեկութիւններ չունինք թագաւորական պալատի մասին, կամ ընտրուած թագաւոր Սմբատ Արծրունիի նստատեղիի մասին: Գիտենք, որ մօտաւորապէս հինգ ու կէս դար առաջ Գագիկ Արծրունին Աղթամար կղզիի մէջ կառուցեց շքեղ թագաւորական պալատ մը, «Աղթամարի այլ կառոյցներից հետագօտներն աւելի շատ անդրադարձել են Գագիկ Արծրունու պալատին, այլեւայլ ենթադրութիւններ արել նրա հնարաւոր ձեւերի մասին: Ն. Մ. Տոկարսկու կարծիքով, այն եղել է երկյարկ, իսկ Հ. Ա. Օրբելու վերակազմութեան համաձայն նրա դահլիճը ծածկուած է եղել խաչուող կամարներով, որոնց վրայ բարձրացել է գմբէթը»:¹²⁹

Աղթամար քաղաքի ճարտարապետութեան մէջ գերիշխող էր թագաւորական պալատի դահլիճը, որուն պատերու հաստութիւնը 3 մ. էր: Պատմիչ Թովմա Արծրունիէն հասած է մեզի բաւական տեղեկութիւններ. օգտաշատ է մէջբերել մաս մը: Պալատի կառուցման մասին յիշած է, «Թագաւորը հրամայեց նրանցից մէկին՝ ճարտարապետ, իմաստուն եւ հանճարեղ մարդուն, շինելու քառանկիւնի պալատ, որի լայնութեան ու երկարութեան չափը քառասուն կանգուն»¹³⁰ էր, նոյնքան էր եւ բարձրութիւնը: Սրա որմերի լայնութիւնն ունէր 3 մեծաքայլ չափ տարածութիւն: Որմերը անապակ կրի ու քարի զանգուած էին, որ իրար էին խառնուած, ինչպէս կապարի ու

¹²⁸ Սերգէյ Վարդանեան, Հայաստանի Մայրաքաղաքները, էջ 13:

¹²⁹ Ստեփան Մնացականեան, Աղթամար, էջ 8:

¹³⁰ Կանգուն- երկայնութեան եւ լայնութեան չափ, 68 սանթիմէթը:

պղնձի համաձուլուածքը: Պալատի շինուածքը, հիմքից մինչեւ օղի մէջ կախուած նրա գագաթը, մնում էր հաստատուն առանց սիւների, ինչն արդարեւ մտքից վեր է ու զարմանքի արժանի»...¹³¹

Շատ հետաքրքրական է Թովմա Արծրունիի յիշած պալատի ներքին զարդարանքներու մասին, տեղեկութիւնները «Եւ պալատի շինուածքն այնքան ահեղ է ու զարմանալի, այնքան բարձր եւ մտքի համար անհասանելի, որ օրինակ՝ եթէ որեւէ իմաստուն մարդ մի խորանի բազում ժամեր նայի, դուրս գալուց յետոյ որեւէ մէկին ոչինչ չի կարող պատմել իր տեսածի մասին: Քանի որ նրանում (նկարուած) է ոսկեզարդ գահոյք, որի վրայ երեւում է պատուական ճոխութեամբ բազմած արքան, շրջապատուած լոյսի նման պատանիներով, ուրախարար սպասաւորներով: Այնտեղ են նաեւ գուսանների խումբը եւ աղջիկների հիացքի արժանի խմբապարք, ինչպէս նաեւ սուսերամարտիկների խմբերը, ըմբշամարտիկների կռիւներ, առիւծների ու այլ զազանների խմբեր, տեսակ-տեսակ պաճուճանքներով զարդարուած թռչունների երամներ: Եթէ որեւէ մէկը կամենայ հաշուել այն բոլոր գործերը, ինչ կան այնտեղ, բազում չարչարանքներ հարկաւոր կը լինեն թէ իրեն եւ թէ լսողների համար»:¹³² Եւ այսպէս բաւական այլ տեղեկութիւններ: Պահ մը մեզի մտածել կուտայ, եթէ այդ շքեղ պալատը փրկուէր անցեալի ցաւոտ էջերէն եւ մնար մինչեւ օրս, ինչ հիասքանչ պիտի ըլլար ներկայիս Աղթամար կղզի այցելողներուն համար...:

Առ այսօր, Գագիկ Արծրունիի Աղթամար կղզիի մէջ կառուցած ամբողջ քաղաքէն կղզի այցելողը կրնայ տեսնել միայն Մանուէլ ճարտարապետի կառուցած պալատական եկեղեցին հրաշակերտ Ս. Խաչը, որ իր ճարտարապետական շքեղութեամբ կը վկայէ, որ կառուցուած թագաւորական պալատը նմանապէս շատ շքեղ եղած է:

Այս է վիճակը մեր օրերուն քաղաքի կառուցումէն 11 դար ետք. բայց ինչ էր վիճակը Սմբատ Արծրունիի ժամանակ, այդ քաղաքի կառուցումէն 5.5 դար ետք, որեւէ տեղեկութիւն չունինք: Բայց հիմնուելով վերոյիշեալ Վենետիկցի անանուն վաճառականի մը վկայութեան

¹³¹. Թովմա Արծրունի Եւ Անանուն, Պատմութիւն Արծրունեաց Տան, էջ 297, 298:

¹³². Թովմա Արծրունի Եւ Անանուն, նոյնը, էջ 298:

վրայ, կարող ենք ենթադրել, որ Արմէնիկ քաղաքը ունէր շատ եկեղեցիներ. ուրեմն շատ հաւանական էր, որ այդ եկեղեցիներուն կողքին կանգուն մնացած էր նաեւ Գագիկ Արծրունիի կառուցած շքեղ պալատը. եւ եթէ այդպէս էր, ապա տրամաբանութեամբ կարելի է ըսել, որ Սմբատ Արծրունի թագաւորը ապրեցաւ նոյն այդ պալատին մէջ...:

24. Սմբատ Արծրունի Թագաւորը Ձեռագիրներու Մէջ

Մեր բոլոր տեղեկութիւնները Աղթամարի մէջ հիմնադրուած թագաւորութեան մասին, հասած են մեզի մէկ տասնեակի չափ ձեռագիրներէ միայն. դժբախտաբար մեր պատմիչներու մօտ որեւէ յիշատակութեան չհանդիպեցանք այս թագաւորութեան եւ իր միակ թագաւոր Սմբատ Արծրունի Մեֆեդիկեանի մասին:

Սմբատի մասին, որպէս հայոց թագաւոր, 1465-1471 թուականներուն գրուած՝ իննը յիշատակութիւնները հասած են մեզի. թուենք զանոնք-

Ա- Գրուած 1465թ. - «գրեցաւ սա ի թուականիս Հայոց ի Զ եւ ի ԺԴ (1465), ի հայրապետութիւն տեառն Ստեփանոսի եւ ի Սմբատայ թագաւորին»:¹³³

Բ- Գրուած Վասպուրականի մէջ կազմուած «Ճառնտիր»ի յիշատակարանին մէջ 1465թ., ուր յիշատակութիւն կայ Սմբատ թագաւորի ծնողքին մասին. «մանաւանդ ստացող սուրբ գրոյս զպարոն Սմբատն, եւս առաւել ստացողի Սուրբ գրոցս Սմբատ թագաւորին եւ ծնաւդաց նորին պարոն Գուռծիբեկին եւ Դունեա խաթունին եւ հաւրեղբարն Տէր Զաքարիա կաթողիկոսին եւ կենակցին Բեկի խաթունին եւ քրւերն Խանում-խաթունին»:¹³⁴

Գ- Գրուած 1465թ., ուր յիշատակութիւն կայ Սմբատ թագաւորի ծնողքին մասին, «Ողորմած Աստուած Յիսուս Քրիստոս,

¹³³. Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 595. ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակար., Բ, էջ 237:

¹³⁴. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 1, էջ 419:

ողորմեայ ամենայն հաւատացեալ քրիստոնէից, եւս առաւել ստացողի սուրբ գրոցս Սմբատ թագաւորին, եւ ծնաւդաց նորին՝ պարոն Գուրջիբէկին եւ Դունեա-Խաթունին, եւ հաւրեղբարն տէր Զաքարիա կաթողիկոսին եւ կենակցին Բեկի-Խաթունին, եւ քուերն Խանում-Խաթունին, եւ նախնեաց ամենայնի»¹³⁵

Դ- Գրուած Աղթամարի մէջ 1465թ. Սմբատի օծման մասին, «Եւ յայնժամ, ցնծութեամբ գրում է ժամանակագիրը, -օծեցին զպարոն Սմբատ թագաւոր ըստ նախնեաց իւրոց Գագկայ, զի ի վաղուց անտի ազգս Հայոց չէր տեսել թագաւոր: Փրկիչն մեր Քրիստոս զօրացուցէ զնա եւ բարձրացուցէ զաթոռ իշխանութեան մերոյ»¹³⁶

Ե- Գրուած 1466թ. - «Աւարտեցաւ... ի հայս թուականիս ԶԺԵ (1466) ի հայրապետութիւն տեսոն Ստեփանոսի եւ պարոն Սմբատայ, ի թագաւորութիւնս Հայոց»¹³⁷

Զ եւ Է- Սմբատը, որպէս թագաւոր յիշուած է նաեւ երկու ձեռագիրներու մէջ գրուած 1466թ., «Սմբատը՝ որպէս թագաւոր, յիշուում է նաեւ 1466թ. Սոկաց Փաստականք եւ Բոնաշէն գիւղերում օրինակուած ձեռագրերի յիշատակարաններում, եւ 1471թ. գրուած մի մատենանում»¹³⁸

Ը- Գրուած Աղթամարի մէջ ընդօրինակուած «Մաշտոց»ի¹³⁹ մէջ 1471թ., ուր կը յիշուի Սմբատի անունը որպէս թագաւոր. «ի հայրապետութեան... Տեսոն Ստեփանոսի, եւ ի նոր թագաւորիս մեր պարոն Սմբատի»¹⁴⁰

¹³⁵. Հայոց Պատմութիւն, նոյնը, էջ 593. քաղուած Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 2, Վենետիկ, 1924, էջ 419:

¹³⁶. Հայոց Պատմութիւն, նոյնը, էջ 594. քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռա. յիշատակարաններ, մասն Բ, էջ 239:

¹³⁷. Նոյնը, մասն Բ, էջ 249:

¹³⁸. Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն, էջ 105. քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Բ, էջ 249-250, 312:

¹³⁹. Մաշտոց- Խորհուրդներու կատարման եւ նմանօրինակ գործողութիւններու համար սահմանուած ծիսական կարգերն ու աղօթքները պարունակող գիրք:

¹⁴⁰. Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 105:

1471թ. ետք Սմբատ թագաւորի անունը յիշուած չէ մեզի հասած ձեռագիրներուն մէջ. ինչ որ ենթադրել կու տայ, որ այդ տարին եղած է իր թագաւորութեան վերջին տարին:

Թագաւորութեան անկումէն ետք հանդիպեցանք երկու այլ ձեռագիրներու, ուր յիշատակութիւն կայ Սմբատ թագաւորի մասին. անոնց պիտի անդրադառնանք Գ. գլուխին էջերուն մէջ:

Մեր պատմիչներէն որեւէ յիշատակութիւն չկայ 1465թ., Աղթամարի մէջ հիմնադրուած թագաւորութեան մասին: Անցեալ էջերուն մէջ անդրադարձանք, թէ Առաքել Դավրիժեցի (1590-1670) եւ Զաքարիա Քանաքեոցի (1627-1699) իրենց գրած պատմութեան մէջ բաւական լայն յիշատակութիւններ ունին Զահանշահի եւ Զաքարիա Գ-ի մասին. բայց անոնք ոչինչ յիշած են Սմբատ թագաւորի օծման, կամ անոր թագաւորած 6-7 տարիներու պատմութեան մասին:

Մեր կարծիքով հիմնական պատճառը այն է, որ Առաքել Դավրիժեցին իր «Պատմութիւն» աշխատութիւնը, գրած է էջմիածինի Փիլիպոս Ա. կաթողիկոսի յանձնարարութեամբ. եւ նմանապէս Զաքարիա Քանաքեոցին եղած է Յովհաննավանքի միաբանութեան անդամ եւ իր ողջ կեանքը անցուցած է վանքին մէջ. ան Առաքել Դավրիժեցին կը համարէր իր ուսուցիչը: Ուրեմն երկու կարեւոր պատմիչներն ալ եղած են Ս. էջմիածինի միաբաններ, եւ այդ պատճառով անոնց պատմական կարեւոր երկերուն մէջ չենք հանդիպիր որեւէ յիշատակութեան Աղթամարի Սմբատ թագաւորի օծման կամ թագաւորութեան մասին: Միւս կողմէն ուշ միջնադարի մէջ, չենք ունեցած Թովմա Արծրունիի նման Արծրունեաց ծագումով պատմիչ մը, որ անդրադառնար Վասպուրական աշխարհի՝ Աղթամարի մէջ հիմնուած թագաւորութեան պատմութեան մանրամասնութիւններուն: Այս առիթով վերյիշենք Մուրացանի հետեւեալ խօսքը, «Հայոց պատմական կեանքն ուսումնասիրողը պէտք է ուսումնասիրէ նաեւ այդ կեանքի մասին գրող մարդկանց հոգեբանութիւնը, որպէսզի ըստ այնմ կարողանայ որոշել նրանց գրուածքի արժէքը»:

Շատ խորիմաստ խօսք մը, որ անհրաժեշտ է լաւագոյնս հասկնալու պատմութեան զարգացումներու բոլոր դրդապատճառները եւ ծալքերը:

25. Աղթամարի Թագաւորութիւնը Սմբատ Արծրունիի Օրով

Թագաւորական օծումէն ետք, Ստեփանոս Դ-ի դիրքերը շատ ամրացան, ի կողքին Աղթամարի Կաթողիկոսական Աթոռին կար նաեւ Աղթամարի թագաւորութիւնը. ան ունէր նաեւ Ս. Աջը: Ժամանակն էր շարունակելու երկու կաթողիկոսական աթոռներու միացած պահելը եւ այդ կերպով աւելի ուժ եւ արժէք տալ նաեւ հիմնուած Աղթամարի թագաւորութեան:

Ս. Էջմիածինի մէջ Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Ժ. Ջալալբեկեանի վախճանումէն ետք 1466թ., Ստեփանոս Դ. յաջորդ տարին մեկնեցաւ Ս. Էջմիածին, փորձելով անգամ մը եւս տիրանալ Ամենայն Հայոց Աթոռին. բայց իր այդ փորձը անյաջող անցաւ, «Ստեփանոս թագաւորի օծութեան վրայ աճապարեց ստուգիւ երթալ Էջմիածին, ինչպէս յիշատակագիր մը կը գրէ ՋԺԶ (1467) թուին՝ «որ յայսմ՝ ամի գնաց յԷջմիածին եւ տիրեաց յամենայն հայկազեան ազգի», բայց ոչ յուսացուած փառօք եւ ոչ երկար ժամանակով: Նոյն տարին կը մեռնի Ջահանշահ (1444-1467), Ջաքարիայի եւ Ստեփանոսի մեծ պաշտպանն, եւ Հասան բէկ (1467-1478) կը հետեւի ուրիշ քաղաքականութեան»:¹⁴¹ Ստեփանոս Դ. իր նախորդ՝ Ջաքարիա Գ-ի նման յաջողած էր բարեկամական սերտ յարաբերութիւններ պահպանել Ջահանշահի հետ. վերջինիս մահը խանգարեց Ստեփանոս Դ-ի ծրագիրը: Այսպէս, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ Արիստակէս Բ., ու մնաց Ս. Էջմիածինի աթոռին մինչեւ իր վախճանը Էջմիածինի մէջ 1469ին:

Սմբատի թագաւորութեան տարիներու գործունէութեան մասին, որոնք եղան շատ կարածատեւ, հազիւ եօթ տարի (1465-

1471)՝ որեւէ տեղեկութիւններ չունինք: Ճիշդ է, հիմնուած թագաւորութեան տարածքը շատ փոքր էր, սահմանափակուած՝ Աղթամար կղզիով եւ դիմացի ափամերձ տարածքներով, տես քարտէսը:

Կարելի է ենթադել, որ Աղթամարի կաթողիկոսական աթոռին ենթակայ գիւղերէն մաս մը, եթէ ոչ բոլորը, ուղղակի կամ անուղղակի կ'ենթարկուէին Սմբատ թագաւորի իշխանութեան. այդ եզրակացութեան կարելի է հանգիլ այն տրամաբանութեամբ, թէ Աղթամարի կաթողիկոսական աթոռի գոյութիւնը ինքնին այդ ամուր հիմքն էր, որուն վրայ փորձ կատարուեցաւ կառուցելու հայկական պետութիւնը մը՝ Աղթամարի թագաւորութիւնը:

Սմբատ թագաւորի իշխած կարճատեւ տարիները կարելի է բաժնել երեք շրջաններու:

ա- Թագաւորական օծումէն՝ 1465թ. մինչեւ Ջահանշահ սուլթանի սպանութիւնը 1467թ.: Կարճ ժամանակաշրջան, երեք տարի, տես Գծացուցակ թիւ 4:

բ- Ջահանշահի սպանութենէն մինչեւ կարա-կոյունլուններու պետութեան անկումը 1469թ., երկու տարի, տես Գծացուցակ թիւ 4:

գ- Ակ-կոյունլուններու տիրակալութեան պատմաշրջանի սկիզբէն, երկու տարի մինչեւ 1471թ., տես Գծացուցակ թիւ 4, նկատի ունենալով գոյներու տարբերութիւնը:

Այսպէս Սմբատ Արծրունիի իշխանութեան կարճ պատմաշրջանը, սահուն անցած չէ. հակառակը՝ եղած է հարուստ քաղաքական ցնցումներով, այն կը հանդիսանայ կարելորդ պատճառներէն մէկը, որ նորաստեղծ թագաւորութիւնը պսակուեցաւ անյաջողութեամբ եւ վաղանցուկ կեանքով:

Կայ նաեւ այն կարծիքը, թէ Սմբատ թագաւորի գործունէութեան մասին որեւէ տեղեկութիւն հասած չէ մեզի, որովհետեւ ըստ Գ. Ե. Կիրակոսեանի, «Սմբատ թագաւորն իր օրապակաս թագաւորութեամբ, առանձնապէս աչքի չընկաւ»:¹⁴²

¹⁴¹ Ներսէս Վ. Ակինեան, Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 114:

¹⁴² Գ. Ե. Կիրակոսեան, նոյնը, էջ 332:

Պատմաբաններեն ումանք հետեւեալ միտքը արտայայտած են, որ առանց Ջահանշահի, հիմնուած թագաւորութիւնը չէր կրնար գոյատեւել. այս միտքին հանդիպեցանք մէկէ աւելի պատմաբաններու մօտ, ինչ որ լրիւ իրականութիւն չէ, փաստ, որ անոր մահէն ետք, թագաւորութիւնը շարունակուեցաւ եւս չորս տարի. տես Գծացուցակ թիւ 4:

Կասկած չկայ, որ Սմբատի թագաւորած տարիներուն, տեղի ունեցած է սահմանափակ գործունէութիւն հայկական այդ շատ փոքրիկ թագաւորութեան մէջ, բայց այդ անյայտ կը մնայ մեզի տեղեկութիւններու չգոյութեան հետեւանքով: Տրամաբանութեամբ կարելի է արձանագրել, թէ թագաւորութիւն հիմնողները պիտի աշխատէին, որ այդ փորձը յաջողէր, եւ այդ ուղղութեամբ աշխատանք տարուած է. այլապէս ինչու անցան այդ քաղաքական քայլի իրագործման, մանաւանդ, որ թագաւորութիւն հիմնելու ճարտարապետը՝ Չաքարիա Գ. մահացած էր. ու անոնք եթէ համոզուած չ'ըլլային չէին շարունակել այդ քաղաքական ուղին:

Վստահաբար թագաւորութեան հիմնադրութիւնը, գոնէ դրական ազդած պիտի ըլլար Աղթամարի վրայ. գիտենք որ Երուսաղիմի վաճառականը մօտաւորապէս կէս դար ետք՝ իր յիշատակութեան մէջ լաւ տպաւորուած էր Աղթամար կղզիի հայկական Արմէնիկ քաղաքին վիճակով:

Հիմնուած թագաւորութիւնը կարճատեւ եղաւ, եւ հայոց երազը չիրականացաւ, ի հետեւանք բազմաթիւ պատճառներու. փորձենք անդրադառնալ անոնցմէ քանի մը հատին:

ա-Հայկական թագաւորութեան հիմնադիր ճարտարապետը կեանքէ հեռացաւ հիմնադրութենէն մէկ տարի առաջ, շատ հաւանական է, որ ան թունաւորուեցաւ եւ զոհ գնաց ներքին պայքարի: Այդ ինքնին զգալի հարուած էր նորաստեղծ թագաւորութեան համար, որ տեղի ունեցաւ 1464թ. Սմբատ թագաւորի օծումէն մէկ տարի առաջ, տես Գծացուցակ թիւ 4:

Չաքարիայ պետականութեան հիմնադրութեան հոգին ու մարմինն էր, եթէ ողջ մնար եւ շարունակէր իր գործունէութիւնը, թերեւս որոշ ձեռքբերումներ տեղի ունենային: Վստահաբար, Չաքարիա Գ-ի նման անձնաւորութիւն մը, ունէր բազմաթիւ ծրագիր-

ներ. եւ ինչպէս տեսանք, ան շատ հմուտ քաղաքական գործիչ էր. կարելի էր, որ լեզու գտնէր նաեւ թուրքմէն նոր տիրակալներու Ակ-կոյունլուներու հետ եւս. ու հետեւաբար Աղթամարի թագաւորութիւնը կէս դարէն աւելի երկար տեւէր. մինչեւ իր անկումը օսմանցի թուրքերուն ձեռքով:

բ- Հիմնադրութենէն հազիւ թէ երկու տարի ետք՝ 1467թ., սպաննուեցաւ կարա-կոյունլուներու տիրակալ՝ Ջահանշահը, որ հայկական թագաւորութեան հովանաւորն էր, ինչ որ դէպքերու զարգացումը փոխեց ոչ ի նպաստ հայութեան, տես Գծացուցակ թիւ 4:

գ- Ջահանշահի սպանութենէն ետք, իր թոռն ու որդիները չկարողացան պահպանել կարա-կոյունլուներու պետութիւնը, որ անկում ապրեցաւ 1469թ., երբ ակ-կոյունլուներու ղեկավար Ուզուն Հասանը յաղթական մտաւ Թավրիզ մայրաքաղաքը ու վերջ տուաւ անոնց պետութեանը, տես Գծացուցակ թիւ 4:

դ- Ինչպէս անդրադարձանք 21-րդ բաժինին մէջ, Աղթամարի տարածքին մօտիկ կիսանկախ հայկական իշխանութիւններ չկային այդ ժամանակ, որ տեղի ունենար հիմնադրուած թագաւորութեան ընդարձակումը դէպի այդ ուղղութիւններով. ամենամօտիկը Պոռշեաններու տարածքն էր, որ որոշ չափով ինքնավար էր, բայց կը գտնուէր Երեւանէն դէպի Նախիջեւան տարածուող տարածքներուն մէջ: Իսկ Աղթամարին ամենամօտիկ կարեւոր երկու քաղաքները Վանն ու Ոստանը կը գտնուէին օտար թուրքմէն ու քիւրտ տիրակալներու ձեռքը: Այսպէս, հիմնուած թագաւորութեան հարեւան տարածքներուն ուղղութեամբ թագաւորութեան սահմաններու ընդլայնումը կարելի էր տեղի ունենալ միայն ռազմական ուժով, իսկ Աղթամարի թագաւորութիւնը այդ իրականացնելու ռազմական հզօրութիւնը չունէր:

ե- Նորաստեղծ թագաւորութիւնը բերկրանքով չ'ընդունուեցաւ Վասպուրականէն դուրս գտնուող հայութեան կողմէ. փաստերէն մէկը, որ մեր պատմիչներէն Առաքել Դավրիժեցին եւ Չաքարիա Քանաքեռցին, որոնք յիշած են Ջահանշահի եւ Չաքարիա Գ-ի մասին, ոչինչ յիշած են Աղթամարի մէջ ստեղծուած թագաւորութեան մասին: Հայ ազգի ներքին մրցակցութիւնը երկու

կարելու կաթողիկոսական աթոռներուն միջեւ, ինչպէս եւ գոյութիւն ունեցող նախարարական տուներու մրցակցութիւնն ու նախանձը իրար հանդէպ, ստեղծած էին ոչ բարենպաստ մթնոլորտ մը:

Ինչպէս Քրիստոս յիշած է, «Ամէն թագաւորութիւն իրեն մէջ բաժնուած կ'աւերի»:¹⁴³ Հայ ազգը այդ ժամանակներուն ներքին եւ արտաքին պատճառներով, իրար մէջ բաժնուած էր, ու հետեւաբար շատ տկար վիճակի մէջ էր: Նախկին դարերու անմիաբանութիւնը, ու ներքին պայքարի աւերիչ հետեւանքները մոռցուած էր: Յակոբ Պարոնեանի խօսքը «Ի՞նչ է պատմութիւնն՝ ետիդ նայիլ՝ առջեւդ տեսնել»¹⁴⁴. կամ Բաֆֆիի խօսքը, «Պատմական անցքերը նոյնպէս կրկնուում են մի ազգի կեանքում, որպէս կրկնուում են նրանք մի անհատի կեանքում». կամ մեր այլ տասնեակ մեծերու նմանատիպ խօսքերը, որոնք ըսուած են, այս պատմաշրջանէն դարեր ետք, լաւագոյն կերպով կը վկայեն, որ այդ ժամանակաշրջանին հայութեան մէջ կը բացակայէր նման գաղափարախօսութիւնները....:

26. Ջահանշահի Սպանութիւնը 1467թ.,

Եւ Կարա-Կոյունլուներու Պետութեան Փլուզումը

Հայկական վերջին թագաւորութեան հիմնադրութենէն հազիւ երկու տարի ետք, սաստկացաւ պայքարը թուրքմէն երկու մրցակից ցեղախումբերու Ակ-կոյունլուներու եւ Կարա-կոյունլուներու միջեւ:

Ակ-կոյունլուներու ղեկավար Ուզուն Հասան, հզօրանալով՝ իր իշխանութիւնը աւելի ընդարձակել սկսաւ Հայաստանի հարաւային տարածքներուն մէջ: Ջահանշահ արթուն կերպով կը հետեւէր իր ռիւսթիւմ հակառակորդ եւ մրցակից Ուզուն Հասանի քայլերուն. ան ստիպուեցաւ 1467թ. Մայիսին հսկայ բանակով Ատրպատականէն շարժուիլ դէպի Վասպուրական: Ջահանշահ ամիսներ

շարունակ ռազմական գործողութիւններ եւ աւերածութիւններու ենթարկեց Մշոյ դաշտը եւ շրջակայ տարածքները, որոնք կը գտնուէին ակ-կոյունլուներու իշխանութեան ներքեւ:

Պատմական ճակատամարտը երկու թուրքմէն գահակալներուն միջեւ տեղի ունեցաւ 1467թ. Մշոյ դաշտին մէջ, «1467 թ. նոյեմբերի 10-ին, երբ Ջահանշահը գինարբութից յետոյ իր 2000-անոց թիկնազօրի հետ հանգստանում էր Սանջախ կոչուած վայրում գտնուող մի գիւղում, յանկարծակի յարձակւում է Ուզուն Հասանի զօրքը եւ բոլորին կոտորում: Իր երկու որդիների հետ սպաննւում է նաեւ Ջահանշահը»:¹⁴⁵

Այսպէս, վերջ տրուեցաւ Ջահանշահի կեանքին, երբ արդէն եօթանասուն տարեկան էր:¹⁴⁶ Ջահանշահի սպանութիւնը բացասականօրէն ազդեց նորաստեղծ՝ հազիւ երկու տարուայ կեանք ունեցող հայկական թագաւորութեան վրայ. հայութիւնը եւ Սմբատ Արծրունի արքան կորսնցուցին բարեկամ եւ հովանաւոր Ջահանշահը:

Ջահանշահի որդին եւ յաջորդը Հասան Ալին բարեկամաբար չէր հակուած հայ ժողովուրդին, «Հասան Ալին, ինչպէս նշուել է, չէր հանդուրժում Ջաքարիա Գ-ին եւ, հաւանաբար, բարեացակամ չէր նաեւ Ստեփանոս Դ-ի նկատմամբ: Դրանով իսկ սահմանափակուեց Ստեփանոս Դ-ի՝ «Ամենայն հայկազեան» հայրապետի իրաւազօրութիւնը»:¹⁴⁷

Հասան Ալին խառնուածքով չար եւ ապերախտ զաւակ էր: Ջաքարիա Քանաքեռցիէն հասած է մեզի բաւական տեղեկութիւններ, որոնցմէ յստակ կ'ըլլայ, թէ ան եղած է ապերախտ զաւակ մը: Ան իր զօրագունդով կը շրջէր Հայաստանի մէջ, կը զբաղուէր գիւղերը կողոպտելով ու ժողովուրդին սարսափի մէջ պահելով: Ջաքարիա Քանաքեռցի յիշած է, որ երբ Ջահանշահ Թավրիզ էր, իր մօտ կը կանչէ Հասան Ալիի զաւակ՝ Յաղուբին եւ կը յայտնէ իր

¹⁴³. ՄԱՏԹԷՈՍ 12:25:

¹⁴⁴. Յայտնի երգիծաբան Յակոբ Պարոնեան (1843-1891):

¹⁴⁵. Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 542:

¹⁴⁶. Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 106. քաղուած Մանր Ժամանակագրութիւններ, 2, էջ 153:

¹⁴⁷. Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 106:

խոհեմ որոշումը, որ շատ հետաքրքիր ու տարօրինակ խօսք մըն է, որ հայր մը իր զաւակին մասին իր թոռանը կ'ըսէ, «Որդեա՛կ, քո հայրը իր ամբարտաւանութեան պատճառով զրկուեց թագաւորութիւնից (թագաւորութիւնը կառավարելու իրաւունքից): Բայց դու արժանի՛ եղար, դրա համար արի ու քա՛ջ եղիր իշխանութեան եւ մարդաշահութեան մէջ, պատրաստ եղիր չզրկելու հնազանդուածներին, իսկ քո հօրը թոյլ չտաս արեւ տեսնի, այլ կը բանտարկես նրան, մինչեւ մեռնի, եւ դու քո կեանքը անցկացրու երկրի վրայ թագաւորելով...»:¹⁴⁸ Ջահանշահ կը հրահանգէ իր թոռան, իր ապերախտ զաւակ՝ Հասան Ալիին բանտարկել մինչեւ որ մեռնի. հայրը լաւ հասկցած էր իր զաւակի չարութեան ու նենգութեան աստիճանը: Ահա հօր մը խոստաւանութեամբ, այսպիսի հոգեկան հիւանդ անձնաւորութիւն մըն էր Հասան Ալին, որուն իշխանութեան ներքեւ տառապեցաւ հայութեան մեծ զանգուածը:

Հասան Ալիի իշխած կարճատեւ ժամանակը շատ ծանր էր Վասպուրականի հայութեան եւ Աղթամարի կաթողիկոսութեան համար. 1468թ. Խիզան քաղաքին մէջ՝ ձեռագիր արտագրող գրիչը նշած է, «բազում աւերք եղեն յամենայն տեղիս... բազում եկեղեցիք աւերեցան, եւ բազում քրիստոնէայք սրով եւ սովով մեռան... եւ թանկութիւն եղեւ յամենայն տեղիս... ի կաթողիկոսութեան Տեառն Ստեփաննոսի Աղթամարեցոյ եւ ի դանութեան այլասեռից Հասան Ալուն՝ որդոյ Ջահանշահին»:¹⁴⁹ Նոյն գրիչը Աստուծմէ կը խնդրէ ամուր պահել Աղթամարի աթոռը, զայն կոչելով, «մեր ազգի հայրապետական եւ թագաւորական Աթոռը»:¹⁵⁰

Ջահանշահի որդին ու յաջորդը՝ Հասան Ալի չկարողացաւ պահպանել իր հօր պետութիւնը. կարա-կոյունլուներու բանակը 1469թ. ջախջախուեցաւ. ակ-կոյունլուներու ղեկավար Ուզուն Հասան մեծ յաղթանակ ունեցաւ եւ յաջողութեամբ վերջ տուաւ իր պատմական պայքարին, կարա-կոյունլուներու պետութիւնը կործանուեցաւ. եւ անոր բոլոր նուաճած երկիրները հպատակեցան

թուրքմէն ակ-կոյունլուներու պետութեան: Այս յաղթանակէն ետք՝ Ուզուն Հասան իր տիրապետութիւնը տարածեց Հայաստանի, Պարսկաստանի, Ատրպատականի եւ Իրաքի վրայ:

27. Վերջին Յիշատակութիւնները Սմբատ Արծրունի Սեֆեդինեան Թագաւորի Մասին

1471թ., համաձայն մեզի հասած՝ երկու տարբեր առիթներով տեղեկութիւններէն կարելի է եզրակացնել, որ այդ տարին եղած է Սմբատ Արծրունիի գահակալութեան վերջին տարին: Այդ եզրակացութեան մասին մեջբերենք հետեւեալը, «Սմբատի թեկուզ եւ ձեւական թագաւորութիւնը Ջահանշահի մահով վերջ չգտաւ: Յիշատակարաններից մէկում, որը վերաբերում է 1471 թ., նշում է, որ այն գրուել է «...ի հայրապետութեան սորին տեառն Ստեփաննոսի, եւ ի նոր թագաւորիս մեր պարոն Սմբատի»:¹⁵¹ Նոյն տարին երկրորդ աղբիւրէ մը կը համոզուինք, որ 1471թ. դադրած է թագաւորութիւնը, «Ելնելով այն իրողութիւնից, որ նոյն՝ 1471 թ. Աղթամարում գրուած Մաշտոցի յիշատակարանում գրիչ Հայրապետը, որն, ի դէպ, Սմբատ Սեֆեդինեանի զարմիկն էր (մօրաքրոջ որդին), ժամանակը նշելիս յիշատակում է միայն «ի հայրապետութեան տեառն Ստեփաննոսի» եւ լռութեան մատնում թագաւորի անունը, ենթադրել է տալիս, որ հենց այդ թուականին էլ Սմբատը մահացել է եւ կամ զրկուել գահից»:¹⁵²

Այսպէս կարելի է վստահ ըսել, որ մեզ հետաքրքրող հայկական թագաւորութիւնը, շարունակած է գոյատեւել Ջահանշահի սպանութենէն ետք 1467թ., եւս նուազագոյնը 4 տարի:

Վասպուրականագէտ Վրէժ Վարդանեան, թագաւորութեան անկման մասին յիշած է, «Սմբատ Սեֆեդինեանի թագաւոր

¹⁴⁸ Ջաքարիա Քանաքեռցի, Պատմագրութիւն, էջ 10, 11:

¹⁴⁹ ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, 2, էջ 271:

¹⁵⁰ Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 106:

¹⁵¹ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 595, 596. քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակար., 2, էջ 309:

¹⁵² Նոյնը, էջ 595, 596. քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակ., 2, էջ 312:

բութիւնը Արծրունիների արքայական տան քաղաքական վերջին ճիգն էր, որն այնպէս էլ մնաց անկատար»¹⁵³

Տեղեկութիւն չ'ունինք, թէ ինչպէս տեղի ունեցած է թագաւորութեան անկումը: Պատմութեան մէջ ընդհանրապէս այդ տեղի կ'ունենար արտաքին ռազմական արշաւանքներու հետեւանքով: Ինչպէս անդրադարձանք անցեալ բաժինին մէջ 1469թ. ակ-կոյունլուններու դեկավար՝ Ուզուն Հասան կործանեց կարա-կոյունլուններու պետութիւնը: Այսպէս, Հայաստանն ալ ենթարկուեցաւ թուրք-մէնական այս պետութեան, բայց այդ թուականէն ետք երկու տարի եւս Սմբատ թագաւորը յիշուած է, որպէս թագաւոր, ինչպէս յիշեցինք. տես Գծացուցակ թիւ 4: Այսինքն, հայկական վերջին թագաւորութիւնը՝ Ջահանշահի սպանութենէն (1467թ.) եւ կարա-կոյունլուններու պետութեան անկումէն (1469թ.) ետք, անմիջապէս անկում չէ ապրած:

Այս հարցը կ'առաջացնէ մէկէ աւելի արդեօքներ:

Արդեօք Ուզուն Հասանի զօրագունդերը 1471թ. ռազմական արշաւանքով՝ Աղթամարը գրաւելէ ետք կործանած են հայկական այդ մատղաշ թագաւորութիւնը: Եթէ այդպիսի բան մը պատահած ըլլար, ապա շատ հաւանական էր, որ Ստեփանոս Դ. կաթողիկոսը հեռացուէր իր պաշտօնէն, քանի որ ան կատարած էր թագաւորական օծումը. բայց ան շարունակեց մնալ կաթողիկոսական աթոռին եւս 18 տարի, մինչեւ իր բնական մահը 1489թ.: Ուրեմն այդպիսի վարկածի, ռազմական ներխուժման հաւանականութիւնը բացառուած է:

Արդեօք Աղթամարի հայկական ղեկավարութիւնը որոշումով մը վերջ տուած էր թագաւորութեան 1471թ., ի հարկէ այդ զգուշաւոր որոշումը հետեւանք էր թուրքմէն նոր տիրակալներու ակ-կոյունլուններու հայոց նկատմամբ աւելի թշնամական դիրքորոշման: Հայոց ղեկավարութիւնը Աղթամարի մէջ յանգած էր այն եզրակացութեան, թէ դէպքերու զարգացումները կը թելադրեն, որ բաւարարուին Աղթամարի կաթողիկոսական աթոռը պահպանելով, որպէս կրօնական հաստատութիւն, որուն դէմ

թշնամական կեցուածքը աւելի մեղմ էր մանաւանդ, որ ան գոյութիւն ունեցած էր դարերէ ի վեր. իսկ Աղթամարի թագաւորութիւնը, որ իր գոյութեամբ քաղաքական կառոյց էր, եւ հաւանաբար թշնամական ռազմական արշաւանքի պատճառ ըլլար: Այս քայլի խոհեմութիւնը կը թարգմանուի այն իրականութեամբ, որ թուրքմէն ակ-կոյունլուններու (1469-1508) մօտաւորապէս քառասունամեայ տիրապետութեան ժամանակ Աղթամարը չ'ենթարկուեցաւ, որեւէ ռազմական արշաւանքի:

Կարելի է ենթադրել, թէ այդ տարին Սմբատ թագաւորը բնական մահով, կամ հիւանդութեան հետեւանքով մահացած է, կամ թէ առողջական պատճառներով այլեւս չէ կրցած թագաւորել. եւ նկատի ունենալով քաղաքական ոչ նպաստաւոր իրավիճակը, նոր թագաւոր մը ձեռնադրուած չէ...:

Բազմաթիւ ենթադրութիւններ կարելի է ընել, սակայն էականը այն է, որ Աղթամար կղզիին մէջ հիմնուած հայկական թագաւորութիւնը եղած է շատ կարճատեւ եւ վերջ ունեցած է 1471թ.:

Վասպուրականի հայութիւնը կորսնցուց իր թագաւորութիւնը, սակայն ամուր պահեց Աղթամարի կաթողիկոսական աթոռը, որ շարունակեց իր գոյութիւնը եւս 4 դարէ աւելի, մինչեւ օսմանեան թուրքերու արիւնարբոյ Համիդ Բ. սուլթանի կազմակերպած ջարդերը 1895թ.:

Յիշատակութիւններու պակասը փաստ է, որ Սմբատի թագաւորութիւնը սահմանափակուեցաւ Աղթամարի կղզիին մէջ եւ Վանայ լիճի առափնեայ քանի մը գիւղերով միայն, եւ չկարողացաւ աւելի ընդարձակուիլ ու դառնալ, եթէ ոչ համահայկական թագաւորութիւն՝ ապա առնուազն Վասպուրականի հայկական թագաւորութիւն:

Սմբատի թագաւորութիւնը տեւեց առաւելագոյնը՝ եօթ տարի. ճիշդ է այդ շատ կարճ ժամանակաշրջան էր թագաւորութեան մը համար իր գործերով յիշուելու. բայց թագաւորի մը համար եօթ տարին շատ ալ կարճ ժամանակ չէր: Մեր պատմութիւնը մեզի կը յուշէ, որ Պապ Արշակունի թագաւորած է միայն 4 տարի (370-374թ.). Վարազդատ Արշակունի թագաւորած է 4 տարի (374-378), Արտաշէս Գ. Արշակունի թագաւորած է 6 տարի (422-428թ.): Ի

¹⁵³. Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 258:

հարկէ Արշակունեաց թագաւորութիւնը կայացած թագաւորութիւն էր, եւ հայկական ընդհանրական թագաւորութիւն, ու կարելի չէ Աղթամարի թագաւորը բաղդատել անոր թագաւորներուն հետ. բայց եւ այնպէս 7 տարիները շատ ալ կարճ ժամանակաշրջան չէր, եթէ կար ներուժը կարելոր գործեր կատարելու: Կարելի է ենթադրել, որ Սմբատի օրով կարելոր շինարարական գործեր եղած են Աղթամարի փոքրիկ Արմէնիկ քաղաքին մէջ:

Այսպէս, շատերուն կողմէ Աղթամարի Սմբատ թագաւորը կոչուած է, Հայոց վերջին թագաւոր, «Հայոց այս վերջին թագաւորը»:¹⁵⁴

28. Հիմնուած Թագաւորութեան Արժէքը

Ճիշդ է, նորաստեղծ Աղթամարի Արծրունեաց թագաւորութիւնը կարճատեւ կեանք ունեցաւ. սակայն ան մէկէ աւելին արժէքներով հարստացուց մեր պատմութիւնը: Այս խորագիրին տակ կարելի է եզրակացնել հետեւեալները –

ա- Ազգային Ինքնագիտակցութեան Արտայայտութիւն

1465 թուականի պատմական զարգացումը, որ տեղի ունեցաւ Աղթամար կղզիին մէջ աւելի շատ ազգային ինքնագիտակցութեան արժէք ունեցող քաղաքական շարժում մըն էր: Ըստ Պետրոս Յովհաննէսեանի «1465թ. իրադարձութիւնը աւելի շատ հոգեբանական ու ազգային ինքնագիտակցութեան արժէք ունէր, քան պետական որեւէ իմաստ»:¹⁵⁵

Պետական իմաստ պէտք էր, որ ներկայացնէր, որովհետեւ հիմնադիրները, երբ որոշեցին այդ քայլին երթալ լաւատեղեակ էին ներքին եւ արտաքին բոլոր մանրամասնութիւններուն, մանաւանդ այս շարժման ճարտարապետ Զաքարիա Գ-ը: Ի հեճուկս այդ բոլոր բացասական տուեալներուն, անոնք հայու բնագոյային յամառութեամբ, Վասպուրականցիի յատուկ պնդագլուխութեամբ, որոշեցին

առաջ երթալ, մի գուցէ պատմական զարգացումները պետական իմաստ ու արժէք հաղորդէին:

Շարժումը տեղական հայութեան հոգեբանական աշխարհը բարձրացուց, թէ հայ ազգը իրաւունք ունի պետութիւն, թագաւորութիւն ունենալու. այսպէս յիշուած է, «Այսպիսով՝ Սմբատ Մեֆեղինեանի թագաւոր հռչակուելը մի կարճ պահ յիշեցրեց Վասպուրականի, ինչու չէ նաեւ բովանդակ Հայաստանի անցեալի փառքերը»:¹⁵⁶

բ- Հայ Ազատագրական Մտքի Հաստատումը

Անկախ այս քաղաքական փորձի արդիւնքէն, Սմբատի օծումով 1465թ. հայ ազատագրական միտքի պատմութեան մէջ կարելոր հանգրուան մը արձանագրուեցաւ, որով ոգեւորուեցան իրեն յաջորդող բոլոր հայ ազատագրական շարժումներն ու փորձերը: Այն շատ յստակ փաստ էր, որ հայկական պետութիւն հիմնելու գաղափարը մարած չէր, ներկայ էր, կը սպասէր յարմար պահին, ու երբ առիթը ընծայուեցաւ, ան երեւան եկաւ...: Այսպէս, այս շարժումը արժէք կը ներկայացնէ Հայ Ազատագրական մտքի զարգացման մէջ, «Եւ որքան էլ քիչ իրական էին Աղթամարի կաթողիկոսների երազները թագաւորական գայիտնի մասին, այնուամենայնիւ, դրանք եւս որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում հայ ազատագրական մտքի պատմութեան տեսակետից եւ ցուցանիշ են այն բանի, որ հայկական պետականութեան վերականգնման գաղափարը Հայաստանում երբեք չի մոռացուել»:¹⁵⁷

գ- Պետականութեան Վերականգնման Գաղափարը

Փորձ մըն էր վերականգնելու Հայոց թագաւորութիւնը. Կիլիկիոյ հայկական թագաւորութեան կորուստէն համարեայ մէկ դար ետք, որ թէեւ կը գտնուէր պատմական Հայաստանէն դուրս, բայց կը յուսադրէր համայն հայութիւնը, որպէս հայկական կայուն պետութիւն, եւ որուն շուրջին տակ, ապահով կը պահուէր Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը Կիլիկիոյ մէջ, ու կը զարգանար հայ միտքն ու մշակոյթը: Ուստի, անոր կորուստէն ետք 1375թ., ծայրաստիճան զգացուեցաւ պետականութեան կա-

¹⁵⁴ Ն. Ակինեան, Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 42:

¹⁵⁵ Պետրոս Յովհաննէսեան, նոյնը, էջ 13:

¹⁵⁶ Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 596:

¹⁵⁷ Հայոց Պատմութիւն, նոյնը, էջ 596:

րիքը, մանաւանդ Հայաստանի մէջ, որ կը տառապէր թուրքմէն եւ քիւրտ ցեղերու հարստահարութիւններէն:

Պետականութեան վերականգնման գաղափարը խիստ կարեւոր էր: Այդ կարեւոր փորձ էր կորսուած անկախութիւնը վերականգնելու համար. եւ կատարողները տեղեակ էին, թէ այդ լոկ փորձ մըն էր:¹⁵⁸

դ- Ղեկավար Դէմքերու Ներկայութիւնը

Պատմական կարեւոր դէպքերը կը կերտուին յիշեալ պատմաշրջանի ղեկավար դէմքերու նուիրեալ աշխատանքներով. այսպէս հայութիւնը փաստեց, որ հակառակ տիրող շատ դժուար վիճակին Վասպուրականի հայութիւնը ծնունդ տուած էր ղեկավար դէմքերու, որոնք մասնակցեցան ստեղծելու այս նոր պատմական գաղգացումը. անոնցմէ կարելի է յիշել Զաքարիա Գ., Ստեփանոս Դ., Սմբատ Արծրունի եւ ուրիշներ, որոնց անունները անյայտ կը մնան:

Մեր ուսումնասիրութեան ընթացքին մեզի զարմացուց Ն. Ակիմեանի հետեւեալ արժէքաւորումը Աղթամարի մէջ հիմնադրուած թագաւորութեան, «Մեծ արձագանգ չգտաւ Սմբատի օծութիւնը: Ոչ ոք լսեց անոր թագաւորելն՝ խարխուլ գահին վրայ, ոչ ոք խրախուսուեցաւ դիմել անոր դրօշին տակ: Սմբատ գործնականին «խաղոյ թագաւոր» եղաւ աւելի, ամփոփ շրջանակի մէջ միայն յիշեցուց վաղանցուկ՝ Վասպուրականի հին փառքն եւ ընտանեկան պարծանք համարուեցաւ»:¹⁵⁹ Բ. գլուխի էջերուն մէջ աշխատեցանք ցոյց տալ, թէ ինչու Սմբատի օծումը արձագանգ չգտաւ. ինչպէս եւ բացատրեցինք այս մէջբերման մէջ յիշուած բոլոր բացասական խօսքերուն դրդապատճառները:

Պատմութեան դասագիրքի մը մէջ հանդիպեցանք հետեւեալին, «Սմբատ թագաւորի օծուելը գործնական ոչ մի նշանակութիւն չունէր: Այդուհանդերձ, այս երեւոյթն ինքնին վկայութիւնն էր այն բանի, որ խիստ կենսունակ էր հայրենի պետակա-

¹⁵⁸ Հայոց Պատմութիւն, նոյնը, էջ 597:

¹⁵⁹ Ն. Ակիմեան, Ազատութեան շարժումը ԺԵ-ԺԶ դարերուն Հայոց մէջ («Հանդէս Ամսօրեայ», 1917/1918, էջ 144):

նութեան վերականգնման գաղափարը»:¹⁶⁰ Յաջորդ էջերուն մէջ պիտի լուսաբանենք, թէ պատմական այս մեծ մասամբ մոռցուած գարգացումը գործնական նշանակութիւն ունեցած է: Մեր կարծիքով Սմբատի թագաւոր օծելու նպատակներէն մէկն էր, գործնականօրէն զարկ տալ հայ ազգի ազատագրական գաղափարախօսութեան. եւ եթէ այդպէս չէր իր պահին, ապա այդ ազդեցութիւնը ձգեց:

29. Վասպուրականը Հայ Ազատագրական Գաղափարախօսութեան Հնոց

Այս պատմական, հիմնականօրէն քաղաքական բնոյթ ունեցող փորձը կու գար շեշտելու, թէ քաղաքական գաղափարախօսութիւնը Վասպուրականի հայութեան մօտ իր գագաթնակէտին կը հասներ 15-րդ դարուն: Այդ գաղափարախօսութիւնը առասպելական Փիւնիկ¹⁶¹ թոչունի նման մահացած չէր Վասպուրականի հայութեան մօտ. մոխիրներու մէջ էր. կը ծնիր ամէն անգամ, երբ կարիքը զգացուէր: Այդ գաղափարախօսութիւնը Աղթամարի յիշեալ թագաւորութեան անկումէն 4 դար ետք՝ Վան քաղաքին մէջ 1885թ., ծնունդ տուաւ հայկական պատմութեան մէջ առաջին քաղաքական կուսակցութեան՝ Արմենական կուսակցութեան. եւ 1915թ. Վասպուրականի մէջ էր, որ հիմնուեցաւ Հայկական իշխանութիւնը Արամ Մանուկեանի ղեկավարութեամբ...: Այդպէս, Վասպուրականը հայ ազատագրական գաղափարախօսութիւններու կարեւոր հնոցներէն մէկն էր:

15-րդ դարուն Վասպուրականի վերնախաւը Վանի մէջ խեղդուած էր, որովհետեւ Վանի տիրակալն էր Զահանշահի եղ-

¹⁶⁰ Պատմութիւն, Դասագիրք Հանրակրթական Դպրոցի 9-րդ Դասարանի համար, ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութիւն, Երեւան 2001, էջ 273:

¹⁶¹ Փիւնիկը՝ Հին դիցաբանության մէջ առասպելական թոչուն է, որ կ'ապրի հարիւրաւոր տարիներ: Ունի արծիւի կերպարանք, ոսկիագոյն եւ կարմիր կրակագոյններու խառնուրդ: Փիւնիկը նախազգալով իր վախճանը՝ ինքզինքը կ'ալքէ, իր բոյնին մէջ. ուր իր մոխիրէն կը վերածնուի, երիտասարդ եւ զօրաւոր փիւնիկ մը:

բայրը. կարա-կոյունությունները Վանը, որպես շատ կարեւոր քաղաք, շատ պինդ առած էին իրենց հսկողութեան տակ. ուստի Վանի կամ Վասպուրականի ղեկավարությունը քաշուած էր Աղթամար, աւելի անհասանելի վայր, ու հաւաքուած կաթողիկոսական աթոռին շուրջ:

Ինչպէս անդրադառնանք, Աղթամարի թագաւորութիւնը ծնաւ առանց իր ճարտարապետին. հակառակ անոր բացակայութեան շարժման ղեկավարները Վասպուրականցիի յամառութեամբ, որոշեցին առաջ երթալ եւ տարիներէ ի վեր որոշուած ծրագիրը հասցնել իր աւարտին, ու այս քաղաքական փորձը գործադրել. համոզուելով, որ փորձը փորձանք կարելի չէ որ ըլլայ: Վասպուրականի հայութիւնը դարեր ի վեր ստեղծած էր, եւ ամուր կը պահէր իր Կաթողիկոսական աթոռը, ան կայուն էր եւ հարուստ, հետեւաբար կարողացաւ երթալ այդ քաղաքական քալին:

Եթէ թագաւորութիւն հիմնելու փորձը չյաջողեր, որ վստահաբար այդ մտահոգութիւնը կար օրուայ ղեկավարութեան մօտ. ապա այդ մեծ կորուստ պիտի չ'ըլլար, քանի որ ամուր հաստատուած էր կաթողիկոսական աթոռը. եւ այդպէս ալ եղաւ, թագաւորութիւնը գնաց՝ կաթողիկոսութիւնը մնաց:

Աղթամարը ունէր մէկէ աւելի առաւելութիւն նման քաղաքական փորձի մը կեդրոնը դառնալու, ինչպէս անդրադարձանք. առանձնացած բնականօրէն պաշտպանուած շատ կարեւոր եւ յարմար վայր էր թագաւորութիւն հիմնելու, ուրիշ որեւէ այլ տեղ Արեւմտեան Հայաստանի մէջ այդ իրավիճակը եւ առաւելութիւնը չ'ունէր այդ պատմահանգրուանին: Այդ բոլորին կողքին կար նաեւ Արծրունիներու կամքը, որոնք մեր պատմութեան մէջ կարեւոր դեր ունեցած են Արշակունիներու, Բագրատունիներու եւ Մամիկոնեաններու նման:

Մեր պատմաբաններուն կողմէ, բացատրուած է, թէ «թագաւոր հայոց» կոչումը 15-րդ դարուն պարզապէս ձեւական էր, «Անշուշտ, խիստ կարեւորելով հայկական պետականութեան վերականգնման ուղղութեամբ կատարուած այս փորձը եւ բարձր գնահատելով նրա հիմնական դերակարաններին՝ պէտք է նաեւ նշել, որ XV դարում «թագաւորական տուն», «թագաւոր հայոց»

հասկացութիւններն այլեւս չ'ունէին այն նշանակութիւնը ինչ առաջներում»:¹⁶² Այո, այդպէս էր. բայց մեր կարծիքով, եթէ գործածուէին «Իշխան» կամ «Իշխանաց իշխան» կոչումները, ապա այդ բաւարար պիտի չ'ըլլար. որովհետեւ այս շարժման ընթացքին հիմնականօրէն առաջ կը մղուէր այն պատմական թեզը, թէ Աղթամարի կաթողիկոսները Արծրունեաց թագաւորներու շառաւիղներն էին, ուրեմն «թագաւոր» կոչումը լաւագոյնս կը ներկայանար այդ արմատական կապը հաստատելու, առանց որուն այս քաղաքական քայլը կը դառնար վարկաբեկուած:

Թագաւորութեան հիմնադիրները այս քաղաքական փորձը չէին նկատեր, որպէս Աղթամարի թագաւորութիւն, այլ անցեալին հետ կապելով, այդ կը նկատէին յաջորդողը՝ չորս դար առաջ ունեցած Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան: Շատ ճիշդ ըսուած է, «Մմբատի թագաւորութիւնը չ'ունէր եւ չէր էլ կարող ունենալ որեւէ համահայկական բովանդակութիւն»:¹⁶³ Մեր կարծիքով, լաւագոյն պարագային տեղական Վասպուրականի մէջ սահմանաբակուած թագաւորութիւն ունենալն էր:

Տրամաբանականօրէն, որեւէ պատմական զարգացում, նախ պիտի խօսի տեղական դերակատարներու շահերէն, ապա եթէ յաջողեցաւ ու զարգացաւ պիտի ընդգրկէ աւելի լայն իմաստ: Այսպէս, քաղաքական այս փորձը ինչպէս յիշուած է, «Թագաւոր անուանումը կը պահպանէր շահագրգիռ խաւերու եւ ժողովրդի մէջ՝ հայերու անկախութեան երազանքներուն բաւարարութիւն տալու համար»:¹⁶⁴

Անգամ մը եւս մէջբերենք հետեւեալ շատ իմաստալի տողերը Ռուբէն Տէր-Մինասեանէն, որ ան գրած է 1906թ. Վասպուրականի մասին «Վան-Տոսպը՝ անկիւնաքար Հայաստանի վանքին»: Ան գրած է, «Հայաստանը ինծի կը պատկերանար իբրեւ հսկայ վանք մը, որուն զմբէթը Արարատեան երկիրն է, իր Մասիսներով...»:

162. Պետրոս Յովհաննէսեան, Հայ Ազատագրական Շարժումները, էջ 13:

163. Պետրոս Յովհաննէսեան, նոյնը, էջ 13:

164. Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 594, 595:

Առանց խարխսի նաւը անկայուն կը լինի, առանց ամուր հիմքերու վանքի ոչ գմբէթը կը լինի, ոչ պատերը կը բարձրացուին, ոչ խորանը կը շինուի, ոչ դուռ, ոչ պատուհան կը բացուի: Առանց հիմքերու՝ այդ բոլորը քամին պիտի փլցնէ: Ու մտածեցի, որ Վան-Տոսպը որքան ալ ինքնամփոփ լինի, որքան ալ հակաթոռներով իր մէջ ամփոփուի, որքան ալ անտարբեր լինի ընդհանուր մեր կեանքին, այնուամենայնիւ այդ թերութիւն համարուածները անոր առաւելութիւններն են, քանի որ ան խարխսին է, անկիւնային չորս հիմքերէն մէկն է հայոց աշխարհի, առանց որուն վանքը կանգուն չի մնար»¹⁶⁵

Այսպէս, Աղթամարի թագաւորութիւնը հիմնուեցաւ Հայոց աշխարհի անկիւնային չորս հիմքերէն մէկուն վրայ, եւ մէկէ աւելի ազդակներու հետեւանքով չ'ընդլայնուեցաւ միւս երեք անկիւններուն ուղղութեամբ...

¹⁶⁵. Ռուբէն, Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները, Բ. հատոր, էջ 211, 212:

Գ. ԳԼՈՒԽ


ԱՂԹԱՄԱՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԶԱԳԱՆԳՆԵՐԸ

30. Սմբատ Արծրունի Մեֆեդիւնեան Թագաւորի Սերունդը

Սմբատ թագաւորը ամուսնացած էր Բէկի խաթունի հետ, եւ բախտաւորուած էին երկու զաւակներով, Իսկէնդեր եւ Զաքարիա. տես Յուցակ թիւ 3: Իսկէնդերի սերունդը կարելի է տեսնել ցուցակին մէջ: Սմբատ թագաւորը ունէր նաեւ մէկ քոյր մը Խանում խաթուն անունով:¹⁶⁶

Յուցակ թիւ 3

Սմբատ Թագաւորի Ընտանիքը ¹⁶⁷



Զաքարիա, որ Սմբատ թագաւորի որդին էր դարձաւ Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Դ. (1489-1496), «Ստեփանոս Դին յաջորդում է Զաքարիա Դ-ը, որը վերոնշեալ Սմբատ «թագաւորի» (Ստեփանոս Դ-ի եղբոր) որդին էր եւ XVI դ. բանաստեղծ Գրիգոր

¹⁶⁶. Ն. Ակիւնեան, Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 108:

¹⁶⁷. Նոյնը, էջ 108:

րիս Աղթամարցու հորեղբայրը»¹⁶⁸ Զաքարիա Դ. իր հօր նման (Սմբատ թագաւոր) պաշտօնավարեց կարճ ժամանակ, բնական մահով վախճանեցաւ 1495թ., եւ իրեն յաջորդեց Ատոմ կաթողիկոսը (1496-1510թ.):

Նկատելի է, որ Սմբատ Արծրունի թագաւորի որդին, կոչուած է «Զաքարիա», ի յիշատակ Զաքարիա Գ-ի, որ Աղթամարի թագաւորութեան հիմնադրութեան կեդրոնական դէմքն էր, ինչպէս անդրադարձանք:

Սմբատ թագաւորի միւս որդին Իսկէնդեր ամուսնացած էր Շահում խաթունի հետ. ունեցած են երեք զաւակ, Գրիգորիս, Ամիր Գուրջիբէկ եւ Սմբատ: Իսկէնդեր իր զաւակներէն մէկուն եւս կ'անուանէ Սմբատ ի յիշատակ իր հօր՝ Սմբատ թագաւորին:

Սմբատ թագաւորի ժառանգորդներէն յայտնի եղաւ իր թոռը՝ Իսկէնդերի որդին Գրիգորիսը, որ եղաւ Աղթամարի 16-րդ կաթողիկոսը Գրիգորիս Ա. (1512-1544), եւ հռչակաւոր բանաստեղծ:¹⁶⁹

Այսպէս Սմբատ թագաւորի սերունդէն յառաջացան Աղթամարի երկու կաթողիկոսներ-

ա-Սմբատի որդին՝ Զաքարիա Դ. (1489-1496), Աղթամարի 13-րդ կաթողիկոսը:

բ-Սմբատի թոռը՝ Գրիգորիս Ա. (1512-1544), Աղթամարի 16-րդ կաթողիկոսը:

Աղթամարի կաթողիկոսութեան աթոռին բազմեցան իրարայաջորդ երեք կաթողիկոսներ Գրիգորիս անունով: Անոնցմէ առաջինն էր, Սմբատ թագաւորի թոռը՝ Գրիգորիս Ա.: Ան ժամանակի մը համար ապրած էր Վարազավանքի մէջ, ուր ընդօրինակած եւ նկարագարդած է ձեռագիրներ. որովհետեւ Աղթամարի կղզիին մէջ չկար կրթարան, հետեւաբար Աղթամարի վանականները իրենց կրթութիւնը կը ստանային Աղթամարի կաթողիկոսութեան ենթակայ վանքերուն մէջ, ինչպէս Լիմ եւ Կտուց կղզիներու

Անապատ վանքերուն, եւ Վարազավանքի մէջ, որոնք կը ներկայանային այդ պատմաժամանակի կարեւոր կրթական կեդրոնները:

Սմբատ թագաւորի որդի՝ Զաքարիա Դ-ի գահակալութիւնը Աղթամարի աթոռին՝ ունի իր պատմաքաղաքական իմաստը, «Եւ պատահեցաւ անխուսափելին եւ Արծրունեաց թագաւորութեան շարունակութիւնը կամ ժառանգները ըլլալու յաւկնոդ այս իշխան-կաթողիկոսներու աշխարհիկ իշխանութիւնը այլ եւս չյիշուեցաւ, թէեւ դիտելի է որ Սմբատ «թագաւոր»ի որդին Զաքարիա Դ. (1489-1496) իբր կաթողիկոս գահակալելով Աղթամարի աթոռին վրայ բաժնուած հոգեւոր եւ մարմնաւոր իշխանութիւնները վերստին կը միանային, եւ ասոր համար էր անշուշտ որ տակաւին 1478 եւ 1480 թուականներով յիշատակարաններու մէջ (տես Ցուցակ Ձեռագրաց Վասպուրականի, էջ 484 եւ 514) կը հանդիպինք սա տեսակ բացատրութեան մը, «պահեսցէ անաստուն գաթոռ հայրապետական եւ թագաւորական մերոյ ազգին»:¹⁷⁰ Ուրեմն, Աղթամարի թագաւորութեան անկումէն ետք Աղթամարի Աթոռը տակաւին կը շարունակուէր, որպէս կրօնական եւ աշխարհիկ իշխանութեանց կեդրոն:

31. Ներսէս Եպիսկոպոսի 1472 թ. Գրուած Ձեռագիրը

Աղթամարի թագաւորութեան անկումէն մէկ տարի ետք, եւ Սմբատ Արծրունիի թագաւոր օծուելէն ութ տարի ետք, Ստեփանոս Դ. Տղայ կաթողիկոսի եղբայրը՝ Ներսէս Եպիսկոպոս 1472թ. ձեռագիր մը գրած է, որ կը գտնուի Հ. Հ. Մաշտոցեան Մատենադարանին մէջ, պահուող ձեռագիրներու՝ թիւ 5702 համարով: Գրողը, Ներսէս Եպիսկոպոս՝ եղբայրն էր Սմբատ թագաւորին. տես Ցուցակ թիւ 1:

Մէջբերենք այս նիւթի մասին հետեւեալը, «Ձեռագրի 212բ էջում պատկերուած է թագաւորի օծման արարողութիւնը:


¹⁶⁸ Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 117:

¹⁶⁹ Ներսէս Վ. Ակինեան, Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 125:

¹⁷⁰ Արշակ Ալպոյաճեան, Արծրունեաց Թագաւորութեան Շարունակութիւնը Վասպուրականի Մէջ, էջ 116:

Կենտրոնում Ստեփանոս կաթողիկոսի եւ Սմբատ թագաւորի պատկերներն են: Կաթողիկոսը թագադրում է ծնրադրած եւ գլուխը թեթեւ խոնարհած Սմբատին: Թագաւորից աջ պատկերուած են երեք սրբեր, իսկ ձախից՝ կաթողիկոսին ընկերացող մի խումբ հոգեւորականներ: Եթէ վստահենք ձեռագրի նկարիչ Կարապետ Ծաղկողի դիտողականութեանը եւ մի պահ ենթադրենք, որ նա հարազատօրէն է վերարտադրել թագաւորի պատկերը, ապա կարող ենք ընդհանուր գծերով ներկայացնել Սմբատ թագաւորին: Նա ոչ շատ երիտասարդ. գեղեցկատեսիլ մէկն է, որ կրում է թանկարժէք քարերով զարդարուած հագուստ եւ աղամանդակուտ թագ:¹⁷¹

Պատկեր Թիւ 1



Այս ձեռագիրին գրուած ըլլալը թագաւորութեան անկման յաջորդ տարին՝ մեզ կը թելադրէ, որ թէկուզ մեզի անյայտ զարգա-

ցումներով հիմնուած թագաւորութիւնը իր աւարտին հասած է, սակայն անոր յիշատակը տակաւին վառ կը մնար:

Մէկ այլ պատկերագարդ մը, որ գետեղուած է 1471թ., Աղթամարի մէջ ընդօրինակուած Մաշտոցի մը մէջ, նկարիչը Սմբատ թագաւորի օծումը կը նմանցնէ Տրդատ Արշակունի թագաւորի օծման, «Մէկ այլ Կարապետ, որն Աղթամարից էր, 1471թ. ընդօրինակած Մաշտոցում նկարել է թագաւորի օծման տեսարանը: Գործողութիւնը կատարում է եկեղեցում: Բարձրաստիճան հոգեւորականը, որի շքեղագարդ խոյրը եւ խաչերով ծածկուած թիկնոցը յուշում են, որ նա Գրիգոր Լուսաւորիչն է, օծում է իր առջեւ ծնկի եկած Տրդատ թագաւորին: Վերջինիս թիկունքում կանգնած են նրա ընտանիքի անդամները՝ կինը՝ Աշխենը, եւ քոյրը՝ Խոսրովադուխտը: Գրիգոր Լուսաւորիչի մօտ եկեղեցու հայրերն են ու վարդապետները: Այս նկարը XVIII դ. արուեստում լայնօրէն ընդունուած նոյն թեմայի առաջին մեկնաբանութիւններից է»:¹⁷²

Մեզ համար անյայտ կը մնայ Սմբատ թագաւորի թագի մանրամասնութիւնները. միայն նկարիչէն գիտենք, որ ան իր գլխուն ունէր աղամանդակուտ թագ մը: Սովորաբար թագաւորներու թագերը կ'ուղարկուէին այլ թագաւորներէ, բայց այս պարագային որեւէ տեղեկութիւն չունինք. լաւագոյն ենթադրութիւնը կարելի է ընել, թէ Սմբատի թագը ուղղկուած էր իր հովանաւորող Ջահանշահին կողմէ:

32. Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջի Վերադարձը Ս. Էջմիածին 1476թ.

Թագաւորութեան անկումէն քանի մը տարի ետք, Սմբատ թագաւորի եղբոր՝ Աղթամարի կաթողիկոս Ստեփանոս Դ-ի (1465-1489թ.) օրով, 1476թ. տեղի ունեցաւ կարեւոր պատմական դէպք մը, երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչի աջը, որ կը գտնուէր Աղթամարի Աթոռին մէջ, եւ որուն օրհնութեամբ տեղի ունեցաւ Սմբատ թագաւորի օծումը 1465թ. ինչպէս անդրադարձանք. այդ շատ կա-

¹⁷¹. Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 594:

¹⁷². Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 670:

րեւոր սրբութիւնը Աղթամարէն վերցուեցաւ, «Տարիներ անց Էջմիածնի հոգեւորականների համաձայնութեամբ Աղթամար եկաւ Վրթանէս եպիսկոպոսը եւ Լուսաւորչի աջը 1476 թուականին փախցրեց բերեց Ջուղա, ապա Յովհաննէս կաթողիկոսը եկաւ Նախիջեւան եւ մեծ ցնծութեամբ ընդունեց այն: Նախիջեւանից մեծ պատիւներով սրբազան մասունքը տեղափոխեց Էջմիածին՝ Մայր Աթոռ»:¹⁷³

Առաքել Դավրիժեցին շատ մանրամասնօրէն գրած է, թէ ինչպէս Ս. Աջը Աղթամարի կաթողիկոսական աթոռէն գաղտնաբար վերցուեցաւ եւ տարուեցաւ Ս. Էջմիածին: Ան յիշած է, թէ Նախիջեւանի Շահբունց գաւառի Օծոպի գիւղի սուրբ Աստուածածին վանքի վանականներէն Վրթանէս եպիսկոպոսի նախաձեռնութեամբ այդ տեղի ունեցաւ, «...սա իր գործում խորագէտ ու խելամիտ էր, իսկ խօսքի մէջ ճարտարաբան էր: Մա գնաց Աղթամար սուրբ Լուսաւորչի աջը գողացաւ դարձեալ բերեց Սուրբ Էջմիածին: Վրթանէս եպիսկոպոսը այս բանը արեց Էջմիածնի Սարգիս եւ Յովհաննէս կաթողիկոսների խորհրդով ու կամքով»:¹⁷⁴ Ըստ Առաքել Դավրիժեցիի Ս. Աջի վերադաձը տեղի ունեցաւ Ս. Էջմիածինի կաթողիկոսներու նախապէս գաղտնի ծրագիրին, որ գործադրուեցաւ Վրթանէս եպիսկոպոսի կողմէ:

Վրթանէս եպիսկոպոսը կը փոխէ իր անունը եւ կերպարանքը, ի ծնէ կաղ ներկայանալով՝ գնաց Աղթամար կղզի եւ հոն բնակեցաւ, ապա Ս. Խաչի ծառայութեան մէջ մտաւ, լաւ աշխատելուն պատճառով մտաւ եկեղեցւոյ լուսաւորութեան գործին մէջ. այդպէս ապրեցաւ եւ շարունակեց իր ծառայութիւնը մինչեւ եօթ տարի:¹⁷⁵

Առաքել Դավրիժեցիի յիշատակութիւններէն կարելի է եզրակացնել, թէ Աղթամարը փոքրիկ, սակայն հարուստ քաղաք էր, ինչպէս Վենետիկցի անանուն վաճառականը յիշած էր այդ փոքրիկ քաղաքին մասին 1510-ական թուականներուն, հետեւաբար

¹⁷³ Հայոց եկեղեցւոյ Սրբերը եւ Սրբակենցաղ Անձինք, էջ 215:

¹⁷⁴ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 334:

¹⁷⁵ Նոյնը, էջ 335:

վաճառականներու խումբեր կը դիմէին Աղթամար կղզի որպէս աշխոյժ շուկայ: Առաքել Դավրիժեցին յիշած է, որ Աղթամար այցելող վաճառականներէն օգտուելով՝ Վրթանէս եպիսկոպոսը Ս. Աջը Աղթամարէն կը դրկէ Ջուղա, «Մի օր շատ վաճառական մարդիկ եկան, որոնց հայերն փերեզակ, իսկ այլազգիների բառով չարչին են ասում: Այս չարչիները գրաստներով, էշերով շրջում էին գիւղէ գիւղ. եկան, հասան մինչեւ Աղթամարի նաւահանգիստը եւ այդպէս իրենց էշերով, գրաստներով մտան Աղթամար կղզին կտաւ, աստառ, չիթ, ալաջա (գոյնզգոյն կտոր) եւ այլ ինչ վաճառելու համար»:¹⁷⁶

Աղթամարէն գաղտնաբար դուրս հանուած Գրիգոր Լուսաւորիչի աջը, խաչվառը¹⁷⁷ եւ ուրարը¹⁷⁸ Ջուղայէն հասան Նախիջեւան, ապա Ս. Էջմիածին 1476թ., հետեւաբար Յովհաննէս Է. կաթողիկոսը (1474-1484) կոչուեցաւ Յովհաննէս Է. Աջակիր:

Այստեղ հարց կը ծագի, թէ ինչու Ստեփանոս Դ. (1465-1489թ.) կաթողիկոսը Ս. Աջը կը պահէր Աղթամարի մէջ, հակառակ այն իրականութեան, որ քանի մը տարիներէ ի վեր Ս. Էջմիածինը ունէր Ամենայն Հայոց կաթողիկոս: Այս, մէկ իմաստ ունէր. Ստեփանոս Դ. տակաւին ունէր այն յոյսը, թէ ապագային կարելի էր տիրանալ նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսի կոչումին, քանի որ Ս. Աջը իր մօտն էր: Ուրեմն, Աղթամարի թագաւորութեան անկումէն ետք, տակաւին կը շարունակուէր հին պայքարը Աղթամարի եւ Ս. Էջմիածինի միջեւ:

¹⁷⁶ Նոյնը, էջ 335:

¹⁷⁷ Խաչվառ – Ձողի վրայ բարձրացած մեծ խաչ է, որ երկու կողմերուն երկու կերտներով կը տարածուի թափորներուն առջեւէն: Քաղուած Մ. Օրմանաէն, Ծիսական Բառարան, էջ 86:

¹⁷⁸ Ուրար – Ուսէն կամ ուսերէն ներքեւ իջնող, երկար ձեւով հագուստի մէկ մասն է: Քաղուած Մ. Օրմանաէն, Ծիսական Բառարան, էջ 86:

33. Վասպուրականը Եւ Աղթամարը Ստեփանոս Դ-ի Տարիներուն՝ Աղթամարի Թագաւորութեան Անկումէն Ետք

Աղթամարի թագաւորութեան անկումէն ետք 1471թ. Սմբատ թագաւորի մասին տեղեկութիւններ չեն հասած մեզի: Իր եղբայրը՝ Ստեփանոս Դ. մնաց կաթողիկոսական գահին մինչեւ իր բնական մահը 1489թ.: Այդ գրուած է իր եղբոր՝ Ներսէս արքեպիսկոպոսի օրինակած Յայսմավուրքի յիշատակարանին մէջ, ուր շատ հետաքրքրական է, որ Ստեփանոս Դ-ը յիշուած է որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս:¹⁷⁹

Ստեփանոս Դ-ի ժամանակ գրիչները իրենց ընդօրինակած ձեռագիրներուն մէջ, շարունակած են Աղթամարի արծողը կոչել «թագաւորական» այսպէս, անոցմէ մէկն էր, Մոկաց Խիզան քաղաքի մէջ Մկրտիչ գրիչը, որ գրած է, «*Ի մերոյ կաթողիկոսութեան Աղթամարայ Տէր Ստեփանոսին, զոր Տէր Աստուածն... պահեսցէ անսասան զԱթոռ հայրապետական եւ զթագաւորական մերոյ ազգին*»: Այդպիսով Աղթամարի Աթոռը դեռ մնում էր զօրաւոր ուժը, որի վրայ շարունակում էր խարսխել իր յոյսերը պետականութիւնը կորցրած Վասպուրականի, Մոկքի եւ միւս շրջանների հայութիւնը»:¹⁸⁰

Հարաւային Հայաստանի հայութեան կեանքի վիճակը աւելի դժուարացաւ, երբ 1478թ. Յաղուբ բէկ եղաւ ակ-կոյունլուներու սուլթանը: Ստեփանոս Դ-ի կարգադրութեամբ 1481թ. Աղթամարի կաթողիկոսութեան թեմերու խնդրանքով եւ մօտակայ Ոստան քաղաքի հարկահաններու համաձայնութեամբ, Լալա Միրանշահը մեկնեցաւ Յաղուբ բէկի մօտ, եւ կաշառքով յաջողեցաւ ձեռք բերել սուլթանի համաձայնութիւնը, որ այսուհետեւ Աղթամարի եւ անոր թեմերու եկեղեցիներու ձիթադացներէն զանձուղ հարկերը տրուի այդ եկեղեցիներուն իբրեւ ձիթագին:¹⁸¹

^{179.} Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 116. քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակ., 3, էջ 133:

^{180.} Նոյնը, էջ 116. քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակ., 3, էջ 140:

^{181.} ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակ., 3, էջ 11:

Այս տարիներուն՝ Աղթամարի եւ իր թեմերու գրիչները իրենց յիշատակարաններուն մէջ, Վասպուրականի ժողովուրդի դժուարին վիճակի մասին սկսած են հետեւեալ խօսքերով, «*ի դառն եւ ի նեղ ժամանակիս*», «*ի դառն եւ ի վշտալից ժամանակիս*», «*ի դառն եւ ի վշտաբեր ժամանակիս*»...: Այս բոլորէն կը հասկնանք, որ հարաւային Հայաստանի հայութեան վիճակը շատ աւելի անտանելի եղաւ ակ-կոյունլուներու իշխանութեան տարիներուն 1469-1508թ., որոնք բարեբախտաբար չտեսցին չորս տասնեակ տարիներէ աւելի. մանաւանդ, եթէ բաղդատելու ըլլանք իրեն նախորդած կարա-կոյունլուներու իշխանութեան տարիներուն 1411-1469թ. հետ: Գրիչներու մօտ շարունակուեցաւ Աղթամարի Աթոռը յիշուիլ «*հայրապետական եւ թագաւորական Աթոռ*». որովհետեւ Աղթամարի հայրապետները կը նկատուէին Արծրունիներու թագաւորական տոհմի շառաւիղներէն:

34. Աղթամարը՝ Թուրքմէն

(Կարա Եւ Ակ)-Կոյունլուներու Պատմաշրջաններուն

Թուրքմէն կարա-կոյունլուներու եւ ապա ակ-կոյունլուներու տիրապետութեան տարիներուն, հայ ժողովուրդին համար հիմնականօրէն շատ բան չփոխուեցաւ: Երկու տիրակալներն ալ կը վարէին քոչւորական՝ ոչ նստակեաց կենցաղ եւ չստեղծեցին սեփական տնտեսութիւն: Անոնք տիրացան Հայաստանի հողերուն, արտօնեցին որ հայերը մշակեն այդ հողերը, եւ ստիպեցին անոնց վճարել բերքի կէսէն մինչեւ հինգէն երեք մասը:¹⁸²

Կարա-կոյունլուներու (սեւ խոյաւոր) իշխանութիւնը տեսց 58 տարի (1411-1469), իսկ ակ-կոյունլուներու (ձերմակ խոյաւոր) իշխանութիւնը 39 տարի (1469-1508). տես Գծացուցակ թիւ 1:

Մեր ուսումնասիրութեան կապակցութեամբ բաւական լայն խօսեցանք առաջինին մասին, որովհետեւ մեր հետապնդած հիմնական նիւթը՝ Աղթամարի թագաւորութիւնը հիմնուեցաւ անոնց օրով 1465թ., ի հետեւանք անոնց յարաբերաբար աւելի

^{182.} Յակոբ Մանանդեան, Երկեր, Գ. հ., էջ 399:

մեղմ վարած քաղաքականության հայոց հանդեպ, նաեւ 1441թ., Հայոց Հայրապետական Աթոռի հաստատումը Ս. Էջմիածինի մէջ:

Հայաստանի արեւելեան շրջանները համեմատաբար խաղաղ պատմաշրջան ապրեցան Ջահանշահի իշխանութեան ժամանակ, եւ պատերազմական արշաւանքներէ հեռու մնացին, որեւէ յարձակում տեղի չունեցաւ Աղթամար կղզիին եւ կաթողիկոսական աթոռին վրայ:

Բայց պատկերը լրիւ փոխուեցաւ ակ-կոյունլուներու պատմաշրջանին, որուն ընթացքին 1471թ. մարեցաւ Աղթամարի մէջ հիմնուած թագաւորութիւնը:

1491թ. Աղթամար կղզին վտանգուեցաւ, երբ տեղի ունեցան մարտեր ակ-կոյունլու զօրքի եւ ապստամբ քիւրտ ցեղերու միջեւ, որոնց ընթացքին Վան եւ Ոստան քաղաքները ենթարկուեցան կողոպուտի եւ աւերումի. հրաշքով մը մօտակայ Աղթամար կղզին փրկուեցաւ դառն ճակատագիրէն:¹⁸³

1498թ. Ուզուն-Հասանի թոռը՝ Ալվանդը դարձաւ ակ-կոյունլուներու սուլթանը. ան զօրքի գլուխ անցած ասպատակեց Վասպուրականը: Այս խառնակ վիճակէն օգտուեցան շրջանի քիւրտերը եւ նոյն տարուայ Նաւասարդ ամսու սկիզբին լաստերով յարձակեցան Աղթամար կղզիին վրայ եւ թալանեցին Ս. Խաչը:¹⁸⁴

1499թ. Ս. Էջմիածինը ենթարկուեցաւ յարձակման եւ թալանի. Սարգիս Գ. Մյուսա կաթողիկոսը (1484-1515) ստիպուեցաւ փախչիլ քաղաքէն: Նոյն տարին գրաւումի եւ թալանի ենթարկուեցաւ նաեւ Աղթամարի կղզին եւ կաթողիկոսութիւնը:¹⁸⁵

^{183.} Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն, էջ 119. քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակ., 3, էջ 177:

^{184.} Նոյնը, էջ 119. քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակ., 3, էջ 257-258:

^{185.} Նոյնը, էջ 119. քաղուած ԺԵ դարի հայերէն ձեռագր. յիշատակ., 3, էջ 277:

35. Աղթամար Կղզին Ապաստարան

Իսմայիլ Սեֆեան Շահին

Աղթամարի Արծրունեաց թագաւորութեան անկումէն ետք 1471թ. Աղթամար կղզին շարունակեց մնալ, որպէս կարելոր ապաստարան: Կղզին միայն կաթողիկոսութեան նստատեղին եւ գրչութեան կեդրոնը չէր. 15-րդ դարուն բազմամարդ բնակեցուած էր. եւ անգամ մը եւս յիշեցնենք, թէ Աղթամարի տարածութիւնը այդ ժամանակ ներկայ տարածութենէն աւելի խոշոր էր, որովհետեւ Վանայ լիճի ջուրի մակարդակը այդ ժամանակ աւելի ցած էր, ու հետեւաբար Աղթամարի տարածութիւնը աւելի մեծ էր բաղդատմամբ ներկայի հետ: Արշաւանքներէ փրկուելու համար հայ ընտանիքներ, որպէս ապաստարան եւ բնակելու ապահով վայր հաստատուած էին Աղթամար կղզին. յիշատակագիրներէն մէկը Աղթամարը կոչած է, «*զանմատչելիս եւ զանկոյսս ոտից թշնամեաց եւ զտեղիս ապաստանի բոլոր աշխարհացս*»:¹⁸⁶

Պարսկաստանի Սեֆեանները, կամ Սաֆաւիները շիիա դաւանանքի հետեւող՝ իմամ Մուսա Քազիմի սերունդէն կը նկատուէին, եւ ունէին կրօնական եւ քաղաքական կարելոր ներկայութիւն. անոնց ղեկավար՝ շէյխ Հայդարը զօրք հաւաքելով պատերազմ մղեց ակ-կոյունլուներու գահակալ՝ Ռուստամի (1493-1496) դէմ: Պատերազմին սպաննուեցաւ շէյխ Հայդարը (Իսմայիլի հայրը). իսկ իր կինն ու երեք որդիները դիմեցին փախուստի եւ յաջողեցան հասնիլ Աղթամար կղզի:

Սեֆեան պետութեան հիմնադիր՝ շահ Իսմայիլը, այդ ժամանակ 13 տարեկան պատանի էր. իր Աղթամար ապաստանած ըլլալու մասին, մեզի հասած են տեղեկութիւններ Վենետիկի հանրապետութեան կողմէ ակ-կոյունլուներու տիրակալի մօտ դրկուած դեսպաններէն՝ որոնց դեսպանութեան նպատակն էր Վենետիկի եւ թուրքմէն տիրակալի դաշնակցութիւնը ընդդէմ Օսմանեան պետութեան, որ այդ ժամանակ սկսած էր վտանգել Եւրոպայի անդորրութիւնը:

^{186.} Գոռ Երանեան, Հարաւային Հայաստանի Էթնոժողովրդագրական Խճանակարը (XV դ. - XVI դ. կէսեր), էջ 234. քաղուած ԺԵ դար, Մաս Ա, էջ 374:

Վենետիկի դեսպան Ջիովան Մարիա Անջիոլելլոն յիշած է, թէ Աղթամար կղզիին մէջ կը բնակին 600 տունէ աւելի հայ քրիստոնէաներ:¹⁸⁷ Ան յիշած է, թէ այդ ժամանակ կղզիին մէջ կային, «աւելի քան վեց հարիւր տուն եւ Սուրբ Խաչ անուն մի եկեղեցի... աւելի քան հարիւր վանականներ, որոնք կառավարում են մի պատրիարքով»:¹⁸⁸ Յիշուած 600 տունը, բաւական զգալի թիւ էր, եթէ նկատի ունենանք մէկ ընտանիքը 5 անդամէ բաղկացած, ապա մօտաւորապէս 3000ի հասնող հայ բնակչութիւն կար: Արմենիկ քաղաքի տարածութիւնը կղզիին չափ էր, փոքրիկ քաղաք մը, որ ունի այնքան տարածություն, որքան կղզին:¹⁸⁹

Վենետիկցի մէկ այլ դեսպան Կատերինո Ջենոն, նաեւ անդրադարձած է Աղթամարի փոքրիկ քաղաքին, եւ պատանի՝ շահ Իսմայիլի Աղթամար ապաստանած ըլլալուն, «բնակեցուած է հայ քրիստոնէաներից եւ կոչուած Աստուածամօր անունով, ուր նա մնաց չորս տարի, թաքնուած մի հայ քահանայի տան»:¹⁹⁰

Պատանի Իսմայիլը, թաքնուեցաւ հայ քահանաներուն մօտ. ապա տարիներ ետք, Աղթամարէն անցաւ Արցախ: Անոր ընտրութիւնը Աղթամար կղզիին կը նշանակէ, որ Աղթամարը հետոյ էր ակ-կոյունլուներու աչքերէն. եւ կաթողիկոսական աթոռը ապահով ապաստարան էր ապագայ շահին:

Իսմայիլ իր հօր բարեկամներու մասնակցութեամբ, զօրք հաւաքեց եւ շարունակեց պայքարը ակ-կոյունլուներու դէմ. քանի մը յաղթանակներէ ետք, գրաւեց Թավրիզ մայրաքաղաքը եւ հռչակուեցաւ շահ Իսմայիլ Ա. (1502-1524), եւ հիմնեց Սեֆեան պետութիւնը, որ շարունակուեցաւ (1502-1736), եւ շիզմը յայտարարեց պետական կրօնը:

^{187.} Գոռ Երանեան, նոյնը, էջ 234. քաղուած Ուղեգրություններ, հ. Ա, էջ 271:

^{188.} Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 126:

^{189.} Գոռ Երանեան, նոյնը, էջ 234. քաղուած Ուղեգրություններ, Ա., էջ 300:

^{190.} Գոռ Երանեան, նոյնը, քաղուած Յ. Յակոբեան, Ուղեգրություններ, Ա., էջ 271-272:

36. Աղթամարի Թագաւորութեան Արձագանգները

Աղթամարի թագաւորութեան անկումով 1471թ., եւ հայկական պետականութիւնը կորսնցնելէ ետք՝ վերջ գտաւ միջին դարերուն հայ ազգի յիշեալ առաջին ազատագրական քայլը: Այս անյաջող փորձը ունեցաւ իր արձագանգները իրարայաջորդ հայ ազատագրական շարժումներուն վրայ:

Հայ ազատագրական շարժման գործիչները համոզուելով, թէ միայն սեփական ուժերով կարելի չէ իրականացնել Հայաստանի ազատագրումը օտար տիրապետներէն, որոշեցին գաղտնի ժողովներով քննարկել այդ հարցը: Այդ ժողովներուն ամենայարմար վայրն էր Հայոց Եկեղեցին, ուր կարելի էր բոլոր տարակարծիք ուժերուն հրաւիրել եւ հիմնական հարցը քննարկել: Այսպիսով, իրար յաջորդեցին մէկէ աւելի խորհրդածողովներ. թուենք անոնցմէ մի քանին:

ա-1547թ. առաջին խորհրդածողովը, որ տեղի ունեցաւ Ս. Էջմիածինի մէջ Ամենայն Հայոց կաթողիկոս Ստեփանոս Ե. Սալմաստեցիի (1545-1567) հրաւերով. ուր մասնակցեցան Արեւելեան Հայաստանի գործիչներն ու մելիքները, եւ պատուիրակութիւն ղրկեցին Եւրոպա...:

բ-1562թ. խորհրդածողովը, որուն կազմակերպիչն էր Ամենայն Հայոց կաթողիկոս Միքայէլ Մեքաստացի (1567-1576), տեղի ունեցաւ Մեքաստիոյ Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ. ուր մասնակցեցան նաեւ Արեւմտեան Հայաստանի գործիչները, եւ պատուիրակութիւն ղրկեցին Եւրոպա...:

գ-1575թ., Միսի Խաչատուր Բ. Ջէթունցի (1560-1584) կաթողիկոսի ղիմումը Գրիգոր 13-րդ պապի օգնութեան...:

դ-1584թ. Կիլիկիոյ կաթողիկոս Ագաբիա Ա. Ջուղայեցի (1584-1601) ղիմումը Վատիկանին...:

Այս չորս շարժումներն ալ եղան Եւրոպայի ուղղութեամբ, եւ մէկէ աւելի պատճառներով՝ գործնականօրէն յաջողութեամբ չպսակուեցան:

Եթէ բաղդատելու ըլլանք վերոյիշեալ փորձերը եւ ինչ որ տեղի ունեցաւ Աղթամարի մէջ 1465թ., ուր փորձը պսակուեցաւ գործով եւ հիմնուեցաւ թագաւորութիւնը. հոն պետականութեան

հիմնադրութեան յոյսը դրուած չէր հեռաւոր քրիստոնէայ Եւրոպայի վրայ, որ առաջ կը մղէր իր պայմանը՝ կաթողիկոսին ընդունելը հայոց կողմէ. Վասպուրականի շարժումը աշխատեցաւ լեզու գտնել մահմետական տիրապետներուն հետ, որ աւելի իրատեսական էր. եւ կարելի է ըսել, որ մասամբ յաջողեցաւ...: Այդ ուղղութեամբ, մահմետական ուժերուն հետ լեզու գտնելու այս քաղաքական մօտեցումը, որոշ չափով կարելի է նմանցնել դարեր առաջ Կիլիկիոյ մէջ Սլէի իշխանի (1170-1175), յաջողակ քաղաքականութեան:

Այս ազատագրական շարժումներու ընթացքին Վասպուրականի մէջ վառ մնաց պետականութեան հիմնադրութեան երազանքը. գրիչներուն մօտ կը հանդիպինք յիշատակութիւններու Սմբատ Արծրունի Սեֆեդիներեանի մասին: Այսպէս, գրիչ Մարգարէ Արճիշեցին 1643թ. գրած Սաղմոսարանի¹⁹¹ մէջ խօսելով Աղթամարի կաթողիկոս Գրիգոր Ա-ի (1512-1544) մասին, գրած է, «*եւ հաւուն (այսինքն՝ պապին-խմբ.) իւրոյ Սմբատ թագաւորին*»:¹⁹² Ինչպէս անդրադարձանք 30-րդ բաժինին մէջ, Սմբատ թագաւորը յիշեալ Գրիգոր Ա. կաթողիկոսի պապն էր: Ուրեմն Սմբատի թագադրութենէն 178 տարի ետք՝ տակաւին իր անունը չէր մոռցուած, եւ կը յիշուէր Վասպուրականի մէջ, որպէս անոր կարեւոր դէմքերէն մէկը:

Ազատագրական շարժումները շարունակուեցան աւելի ուժեղ թափով, եւ տեղի ունեցաւ Ս. Էջմիածինի գաղտնի ժողովը 1678թ. Յակոբ Դ. Ջուղայեցի (1655-1680) կաթողիկոսի նախաձեռնութեամբ. ուր յառաջ եկաւ հանրաձանօթ Իսրայէլ Օրին, որ շարունակեց իր առաքելութիւնը:

¹⁹¹. Սաղմոսարան կամ Սաղմոս Գիրք - Եկեղեցւոյ մէջ գործածուող գիրքերէն, Դաւիթի 150 սաղմոսները՝ առանձին տպուած մարգարէական օրհնութիւններով, կանոնի քարոզներով ու աղօթքներով. քաղուած Մ. Օրմանեան, Օրհնական Բառարան, էջ 116:

¹⁹². Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, էջ 596. քաղուած Ակիմեան Ն., Գրիգորիս Աղթամարցի, սունեակ 33:

Աղթամարի թագաւորութեան հիմնադրման փորձը որուն ղեկավարը Աղթամարի կաթողիկոսական աթոռն էր, ճամբայ բացաւ, որ իրմէ ետք տեղի ունեցած ազատագրական փորձերը իրենց ուսին վերցնէին Ս. Էջմիածինի Մայր Աթոռը եւ Միսի կաթողիկոսական աթոռը:

1722թ. տեղի ունեցան ճակատագրական նորութիւններ, Պարսկական Սեֆեան կայսրութիւնը արձանագրեց իր փլուզումը, Ռուսական բանակը Մեծն Պետրոսի ղեկավարութեամբ նուաճեց հիւսիսային Կովկասը. Սիւնիքի եւ Արցախի մէջ սկսաւ հայկական ազատագրական շարժումը. բնականաբար այս բոլորը ունեցան իրենց արձագանգը Արեւմտեան Հայաստանի հայութեան մօտ, որ կը տառապէր Օսմանեան կայսրութեան տիրապետութենէն:

Այս անգամին Վասպուրականի Վանայ լիճի մէկ այլ կողմի մը, Լիմ կղզին շնորհիւ իր մեկուսացած վիճակին եղաւ ամենայարմար վայրը եւ կեդրոնը արեւմտահայութեան ազատագրական շարժման յատկացուած կարեւոր գաղտնի խորհրդածողովին: Խորհրդածողովը Լիմ Անապատի պատմական Ս. Գեորգ վանքին մէջ տեւած է եօթ օր:

Լիմի մէջ 1722թ. գարնանը տեղի ունեցած գաղտնի խորհրդածողովի նպատակն էր արեւմտահայութեան պատրաստել, զէնքի ուժով ապստամբելու եւ միանալու Արեւելեան Հայաստանի մէջ բռնկուած զինուած ապստամբութեանը: Խորհրդածողովին մասնակցեցան Վասպուրականի աշխարհիկ ու հոգեւոր առաջնորդները:

Լիմի ժողովականները պատուիրակութիւն դրկեցին Աղթամարի կաթողիկոս Յովհաննէս Չորեցիին (1720-1725). վերջինս անոնց ընդունեց խանդավառութեամբ, եւ օրհնեց ժողովականներու որոշումները:

Այսպէս, կը տեսնենք, որ գաղտնի խորհրդածողովին համար ընտրուած էր Վասպուրականը, որովհետեւ հայ ազատագրական գաղափարներով ներշնչուած հայութիւնը ներկայ էր. տակաւին հայութեան մօտ վառ կը մնար 1465թ. Աղթամարի մէջ թագաւորութեան հիմնադրութեան փորձը, ինչպէս եւ Վասպուրականը սահմանակից էր Արեւելեան Հայաստանին, իսկ ժողովին գաղտ-

նապահութեան իմաստով, ընտրուած էր մեկուսացուած Լիմ կղզին, ուր կը գործէր Ս. Գէորգի վանքը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Կիլիկիոյ հայկական թագաւորութեան անկումէն ետք 1375թ., հայ ազգի իրականութեան մէջ յառաջացաւ զգալի մեծ բաց մը՝ պետականութեան բացակայութիւնը: Հայութեան գոյավիճակին մէջ, միակ հաստատութիւնը, որ կարողացաւ մասամբ գոցել այդ բացը Հայոց Եկեղեցին էր, որ ի հետեւանք պատմաքաղաքական զարգացումներուն՝ մեկէ աւելի վայրերու մէջ մեծ դժուարութեամբ կը պահպանէր իր կաթողիկոսական աթոռները, որոնք հաւատքի հարցով միակամ էին եւ ոչ թէ հակաթոռներ, իսկ վարչական եւ քաղաքական դիրքորոշումներով տարբեր:

Հայոց թագաւորութեան վերականգնման գաղափարը հանդիսացաւ Հայոց Եկեղեցւոյ գաղափարախօսութենէն կարեւոր մաս մը. եւ այդ շատ յստակ տեղի ունեցաւ Վասպուրականի մէջ հաստատուած Աղթամարի Կաթողիկոսական Աթոռին մէջ: Այս գաղափարի արձագանքները շեշտուած են 14-15-րդ դարերու Աղթամարի Աթոռին հետեւող գրիչներու ձեռագիրներուն մէջ. ուր կը շեշտուէր թագաւորութիւն ունենալու անհրաժեշտութիւնը, որպէսզի հայութիւնը փրկուէր իր տառապեալ վիճակէն, որ հիմնականօրէն հետեւանքն էր պետականութեան բացակայութեան:

Անկախ բոլոր հանգամանքներէն, եթէ հարցին մօտենանք նկատի ունենալով հայ ազգը որպէս մէկ էակ՝ ամբողջութիւն, ինչ որ իրականութիւն է, ապա կը տեսնենք հետեւեալը:

Կիլիկիոյ մէջ հայութեան պետականութիւնը կորսնցնելէ ետք, Հայ Եկեղեցւոյ մէջ սքեմաւորուած աշխարհիկ ղեկավարութիւնը՝ համագործակցելով կրօնական ղեկավարութեան հետ, իր ձեռքին առաւ պարտականութիւնը՝ ազգը դուրս բերելու այդ անորոշ վիճակէն:

Նախ անհրաժեշտ էր, Հայաստանէն հեռու գտնուող Կիլիկիայէն Ամենայն Հայոց Աթոռը ետ դառնար իր բնական վայրը՝ Հայաստան, որ տեղի ունեցաւ 1441թ., ապա այդ պատմական յաջող քայլէն ետք անհրաժեշտ էր ունենալ նաեւ աշխարհիկ կեդրոնական ղեկավարութիւն մը՝ թագաւորութիւն, եւ այդ փշոտ ու կնճռոտ ճամբուն վրայ առաջին փորձն ալ տեղի ունեցաւ 1465թ. Աղթամարի Արմենիկ փոքրիկ քաղաքին մէջ:

Այս գիրքին հիմնական պատմաշրջանը Օսմանեան թուրքերէն առաջ անոնց ազգակից թուրքմէնական ցեղերն են, թուրքմէն կարա-կոյունլուներու եւ ապա ակ-կոյունլուներու տիրապետութեան տարիները: Հայութեան համար հիմնականօրէն շատ բան չփոխուեցաւ. երկու տիրակալներն ալ կը վարէին քոչուորական կենցաղ եւ չստեղծեցին սեփական տնտեսութիւն: Անոնք տիրացան Հայաստանի հողերուն, արտօնեցին որ հայերը մշակեն այդ հողերը եւ ստիպեցին, որ իրենց վճարեն բերքին կէսը, մինչեւ հինգէն երեք մասը: Հայաստանը դարձած էր մեղուափերակներու հաւաքածոյ. հայ ազգը իր պապենական հողին վրայ տքնաջան կը գործէր, մեղր կը պատրաստէր, եւ օտար տիրակալները կը վայելէին...: Ահա այս տխուր պատմաշրջանին էր, որ տեղի ունեցաւ հայկական թագաւորութիւն հիմնելու փորձը Աղթամար կղզիին մէջ, որուն մանրամասնութիւններուն փորձեցինք անդրադառնալ այս գիրքին էջերուն մէջ:

Եւ վերջապէս Աղթամարի թագաւորութեան պատմութիւնը շատ յարմար պատմութիւն մը կարելի է նկատել մեր գրականութեան մէջ այդ վերնագիրով, դաստիարակչական նպատակներով շատ հետաքրքիր պատմավէպ մը ունենալու...: Այս թագաւորութեան պատմութեան մէջ հանդիպեցանք նաեւ կին դէմքերու, Սմբատ թագաւորի մայրը՝ Դունիա խաթուն, եւ կինը՝ Բէկի խաթուն (թագուհին), որոնց մասին շատ քիչ տեղեկութիւններ ունինք: Նաեւ նշեցինք, որ նշանաւոր պատմիչ՝ Չաքարիա Քանաքեռցի Չահանշահ սուլթանի կողքին կը յիշէ նաեւ անոր կնոջ Բէկում խաթունի անունը, որուն հետ Չաքարիա Գ. բարեկամական սերտ յարաբերութիւններ ունէր, ինչպէս անդրադարձանք: Ու թէեւ պատմավէպերու մեծ վարպետ Բաֆֆի ըսած է, «Պատմութեան մէջ մոռացուած է եւ մեր ժողովրդի մի նշանաւոր տարրը՝ կինը: Իսկ առանց կնոջ վէպ կարող չէ լինել. կինն է նրա ոգին ու կենդանութիւնը»: Սակայն յիշեալ երեք կին դէմքերը հնարաւոր է, որ ապագային գրուելիք պատմավէպի մը կարեւոր հերոսուհիները դառնան...: Չաքարիա Գ. կաթողիկոսը, որ այս ապագայ պատմավէպի կարեւոր հերոսներէն մէկն էր ունեցաւ տխուր եւ անորոշ վախճան մը. յանկարծամահութիւն, թունաւորութիւն եւ

կամ բնական մահ խոր ծերութեան պատճառով. այդ բոլորը կը ճոխացնէ մեր առաջարկած պատմավէպը:

Եթէ պատահի, որ կլիմայի փոփոխութիւններ տեղի ունենան եւ Վանայ լիճի ջուրի մակարդակը ցածրանայ, ապա այդ մեծ բարիք մը պիտի ըլլայ հայութեան համար որովհետեւ Աղթամարի կղզիին տարածքը պիտի մեծանայ, եւ ի յայտ պիտի գայ Գագիկ Արծրունիի օրով կառուցուած պարիսպները եւ այլ կառուցուածքները, որոնց մասին անդրադարձանք, եւ որոնք ներկայիս ընկղմած են Վանայ լիճի ջուրերով: Եթէ այդ տեղի ունենայ, ապա զբօսաշրջիկները Աղթամար այցելելով հնարաւորութիւն կ'ունենան տեսնելու ոչ միայն Ս. Խաչ եկեղեցին, այլ Արմէնիկ քաղաքէն այլ շինութիւններու մնացորդացը:

Աղթամարի թագաւորութիւնը երկար չ'ապրեցաւ մէկէ աւելին պատճառներով, որոնցմէ էր նաեւ մեր ազգին մէջ «մենք»-ի բացակայութիւնը եւ «ես»-ի տիրապետութիւնը...:

**ՅԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՄԿԶԲՆԱՂԲԻՒՆԵՐՈՒ,
ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ, ԵՒ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ**

Ա. ՄԿԶԲՆԱՂԲԻՒՆԵՐ

Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Սովետական Գրող
Երեւան 1988:

Աստուածաշունչ, Երրայական եւ Յունական Բնագիրներէն
Թարգմանուած, Աստուածաշունչի Միացեալ Ընկերութիւն, Պէյ-
րութ, 1981:

Զաքարիա Քանաքեոցի, Պատմագրութիւն, «Հայաստան»,
Երեւան, 2013:

Թովմա Արծրունի Եւ Անանուն, Պատմութիւն Արծրունեաց
Տան, «Սովետական գրող», Երեւան 1978:

Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Հայ Մատե-
նագիրներ, «Հայաստան», Երեւան 1973:

Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Հայ Մատենա-
գիրներ, «Հայաստան», Երեւան 1968:

Բ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արամ Ղանալանեան, Աւանդապատում, ՀՍՍՀ ԳԱ,
Երեւան, 1969:

Արամ Յովհաննէսեան, Հայոց Եկեղեցին Կիլիկեան Շրջա-
նում, ԵՊՀ, Երեւան, 2020:

Արտակ Մովսիսեան, Հայոց Պետականութիւնը, ԵՊՀ,
Երեւան, 2011:

Բաբկէն Յարութիւնեան, Հայաստանի Պատմութեան Ատ-
լաս, Ա. մաս, Երեւան, 2004:

Գ. Ե. Կիրակոսեան, Հայաստանը Լանկ-Թամուրի Եւ
Թուրքմէն Ցեղերի Արշաւանքների Շրջանում, ՀՀ ԳԱԱ, Երեւան,
1997:

Գեղամ Բաղալեան, Վան-Վասպուրական Ատլաս, Մեծն
Տիգրան, Երեւան, 2015:

Գոռ Երանեան, Հարաւային Հայաստանի Էթնոժո-
ղովրդագրական Խճանակարը (XV դ. - XVI դ. կէսեր), Երեւան:

Գրիգոր Գ. Միքայէլեան, Կիլիկիայի Հայկական Պետու-
թեան Պատմութիւն, ԵՊՀ, Երեւան, 2007:

Եզնիկ Քինյ. Պետրոսեան, Հայ Եկեղեցու Պատմութիւն,
Մաս Ա., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1990:

Թ. Խ. Յակոբեան, Հայաստանի Պատմական Աշխար-
հագրութիւն, Խ. Բ., ԵՊՀ, «Միտք» Երեւան, 1968:

Թ. Խ. Յակոբեան, Պատմական Հայաստանի Քաղաքները,
«Հայաստան», Երեւան, 1987:

Լէօ, Երկերի Ժողովածու, Գ. Հատոր, «Հայաստան», Երե-
ւան, 1969:

Հ. Գ. Ժամկոչեան, Ա. Գ. Աբրահամեան, Ս. Տ. Մելիք-
Բախշեան, Ս. Պ. Պողոսեան, Հայ Ժողովրդի Պատմութիւն, ԵՊՀ,
Երեւան, 1975:

Համազասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի Վանքերը,
Միսիթարեան տպարան, 1942:

Հայոց Եկեղեցու Սրբերը Եւ Սրբակենցաղ Անձինք, կազմեց
Ռ. Մաթեոսեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1999:

Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, ՀՀԳԱԱ
Պատմ. Ինստ., «Զանգակ», Երեւան, 2014

Հայոց Պատմութիւն-Հիմնահարցեր, խմբ. Հր. Ռ. Միմո-
նեան, ԵՊՀ, «Զանգակ», Երեւան, 2000:

Հայ Ժողովրդի Պատմութիւն, հատոր 3, «Լոյս», Երեւան,
1967:

Մարտիրոս Գալուքճեան, Ուսումնասիրութիւններ Հայոց
Հնագոյն Պատմութեան, Երեւան, 2010:

Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Ա. հա-
տոր, Գ. Գիրք, «Սեւան», Պէյրութ, 1959:

Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Բ. հա-
տոր, «Սեւան», Պէյրութ, 1959:

Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Ծիսական Բառարան,
«Հայաստան», Երեւան, 1992:

Յակոբ Մանանդեան, Երկեր, Գ. հատոր, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1977:

Յակոբեան Թ. Խ., Մելիք-Բախշեան Ստ. Տ., Բարսեղեան Հ. Խ., Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1 [Ա-Գ] (խմբ. Մանուկեան Լ. Գ.), «ԵՊՀ», Երևան, 1986:

Ներսէս Վ. Ակինեան, Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1920:

Ուխտանէս Եպիսկոպոս, Հայոց Պատմութիւն, «Հայաստան», Երևան, 2006:

Պատմութիւն, Դասագիրք Հանրակրթական Դպրոցի 9-րդ Դասարանի համար, ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութիւն, Երևան 2001:

Պետրոս Մ. Թովմասեան, Աբբասեան Խալիֆայութեան Վերջին Պատմաշրջանը եւ Հայութիւնը, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2016:

Պետրոս Մ. Թովմասեան, Հայկական Լեոնաշխարհը Եւ Միջագետքը, «Զանգակ», Երևան, 2006:

Պետրոս Յովհաննէսեան, Հայ Ազատագրական Շարժումները (V դարի կէս – XVIII դարի վերջ), ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետ, Երևան, 2010:

Ռուբէն, Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները, Բ. հատոր, «Աղանա», Երևան, 1990:

Մերգեյ Վարդանեան, Հայաստանի Մայրաքաղաքները, «Ապոլոն», Երևան, 1995:

Ստ. Մելիք-Բախշեան, Հայոց Պատմութիւն (Հնագոյն ժամականերից մինչեւ 18րդ դարի վերջը), «ԵՊՀ», Երևան, 1993:

Ստ. Մելիք-Բախշեան, Մերգեյ Վարդանեան, Հայաստանի Մայրաքաղաքները, «Ապոլոն», Երևան, 1995:

Ստեփան Մնացականեան, Աղթամար, ՀՍՍՀ ԳԱԱ, Երևան, 1983:

Վահան Վ. Ինզլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի Մէջ, Վիեննա, 1947:

Վրէժ Վարդանեան, Վասպուրականի Արծրունեաց Թագաւորութիւնը, «ԵՊՀ», Երևան, 1969:

Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն, Ս. Էջմիածին, 2017:

Դ. ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Աղանի Ա. Ութուջեան, Հայկական Պետականութեան Վերականգնման Փորձ ԺԵ. Դարի Կէսերին, ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, Պէյրութ 1999:

Արշակ Ալպոյաճեան, Արծրունեաց Թագաւորութեան Շարունակութիւնը Վասպուրականի Մէջ, ԲԱԶՄԱՎԷՊ, Մայիս-Յունիս 1950:

Ն. Ակինեան, Ազատութեան շարժումը ԺԵ-ԺԶ դարերուն Հայոց մէջ-Յօդուած, ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, 1917/1918:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ԵՒ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

- Ա.
Աբաս Ա. (թագաւոր), 22
Աբղլմսէի (իշխան), 26-29, 70
Ագարիա Ա. Զուղայեցի (կաթողիկոս), 119
Աղթամարի Աթոռ, 27, 35, 40-41, 51, 69, 78, 96, 109, 111, 114-115, 123
Ալի փաշա Նոյին, 41
Ալվանդ (սուլթան), 116
Ամենայ Հայոց Աթոռ, 23, 50, 55-56, 58, 62, 77, 90, 123
Ամիր Գուրջիբէկ, 107-108
Աշոտ Երկաթ (թագաւոր), 22-23
Առաքել Դավրիժեցի, 2, 45, 47-48, 53, 55, 57-58, 81, 89, 93, 112-113, 126
Ասպարէզ, 21
Աստուած, 39-40, 65, 87, 114
Ատոմ գրիչ, 62
Ատոմ կաթողիկոս, 108
Արամ Մանուկեան, 103
Արգիշտի (թագաւոր), 10
Արեւելք, 74
Արեւմուտք, 74, 79
Արիստակէս Բ. (կաթողիկոս), 47, 78, 90
Արծրունեաց թագաւորութիւն, 7, 17, 22, 24-25, 28-29, 51, 58, 66, 77, 100, 128
Արմենական կուսակցութիւն, 103
Արշակունեաց թագաւորութիւն, 73, 100
Արտակ Մովսիսեան, 68, 126
Արտաշէս Գ. Արշակունի թագաւոր, 99
Արփա իլխան, 41
Աւետարան, 76
Բ.
Բագրատունեաց թագաւորութիւն, 16-18, 23-25, 33, 77, 79
Բարգաւորան (Ռշտունեաց նահապետ), 13
Բարսեղ Ա. Անեցի, 26
Բեգում թագուհի, Բեկում խաթուն, 45-46, 53, 124
Բէկի խաթուն, 64-65, 107, 124
Բիւզանդական կայսրութիւն, 79
Գ.
Գ. Ե. Կիրակոսեան, 32, 61, 91, 126
Գրիգոր Լուսաւորիչ, 5, 47, 58, 67, 78, 111, 113
Գագիկ Արծրունի (թագաւոր), 11, 17-24, 40, 66, 70, 82-87, 125
Գագիկ Աբբասեան, 27
Գուրջիբէկ, 61, 64, 107-108

- Գրիգոր Ա. (կաթողիկոս), 120
Գրիգոր Բ. Վկայասէր (կաթողիկոս), 27, 72
Գրիգոր Գ. Պահլաւունի, 26, 28
Գրիգոր Թ. Մուսաբէկեան, 34
Գրիգոր Ժ. Մակվեցի, 44
Գրիգոր Ժ. Ջալալբէկեան, 36, 44, 56-57, 90
Դ.
Դաւիթ Գ. (կաթողիկոս), 34, 42, 49
Դաւիթ Եպիսկոպոս, 26-28, 70
Դունիա խաթուն, 124
Ե.
Եղիշէ Ա. Ռշտունի, 23
Զ.
Զաքարիա Ա., 41
Զաքարիա Բ., 41-42
Զաքարիա Գ., 4, 7, 34-35, 40, 42-50, 52-54, 56-65, 71, 75, 78, 81, 92, 102, 124
Զաքարիա Քանաքեղի, 46, 53-54, 56, 89, 93, 95, 124, 126
Զորա Ռշտունի, 13
Է.
Էմիր Շարաֆ, 53, 81
Թ.
Թ. Խ. Յակոբեան, 12, 70, 127
Թեոդորոս Ռշտունի, 20
Թեոդորոս Ա. Ռշտունի, 23
Թորոս Թորամանեան, 84-85
Թովմա Արծրունի, 18-20, 85-86, 89, 126
Թովմա Մեծփեցի, 34-35
Թումա գրիչ, 65

- Թումա Թավրիզեցի, 30
Ի.
Իսկէնդեր, 107-108
Իսմայիլ Ա. (շահ), 118
Իսրայէլ Օրի, 7, 62, 120
Լ.
Լալա Միրանշահ, 114
Լեւոն Բ. (թագաւոր), 72
Լէօ, 35
Լուսիբբի (թագաւոր), 10-11
Խ.
Խանում խաթուն, 107
Խաչատուր Բ. Զէյթունցի, 119
Խեղենիկ Ա. (իշխան), 26
Խեղենիկ Բ. (իշխան), 29, 67
Խեղենիկեան իշխանութիւն, 4, 25, 28-29, 71
Խոսրովադուխտ, 111
Կ.
Կարապետ Ծաղկող, 66, 110
Կատերինո Զենոն, 118
Կիրակոս Վիրապեցի (կաթողիկոս), 34-35
Հ.
Հ. Հ. Մաշտոցեան
Մատենադարան, 3, 66, 109
Հ. Ա. Օրբելի, 85
Համիդ Բ., 99
Հայոց Հայրապետական Աթոռ, 4, 32-33, 46, 56, 67, 116
Հասան Ալի, 54-56, 95-96
Հասան Բէկ, 90
Հայրապետ գրիչ, 76
Հուլավեաններու պետութիւն, 41
Հոփսիմէ (սուրբ), 18, 55

Ղ.
 Ղարա-Մահմադ, 31
 Ղարա-Յուսրֆ, 32
 Ղլիճ Ասլան, 42-43
 Ղուրան, 38
Ճ.
 Ճառընտիր, 65, 87
Մ.
 Մահմուդ բէկ, 81
 Մաղաքիա Օրմանեան, 35
 Մայր Աթոռ, 34-36, 39, 46, 48, 77-78, 112, 121
 Մանազկերտի ճակատամարտ, 71
 Մանուէլ ճարտարապետ, 86
 Մաշտոց, 66, 88, 97, 111
 Մարգարէ Արճիշեցի, 120
 Մարտիրոս Գալուրճեան, 10-11, 15, 127
 Մեծն Պետրոս, 121
 Մեծն Տիգրան, 13
 Մենուա (թագաւոր), 10
 Մլեհ (իշխան), 120
 Մովսէս Խորենացի, 13
 Մուսա Քազիմ (իմամ), 117
Յ.
 Յայամավորք, 62, 114
 Յաղութ բէկ, 56, 114
 Յակոբ Դ. Ջուղայեցի (կաթողիկոս), 120
 Յիսուս Քրիստոս, 3, 40, 62, 65-67, 87-88, 94
 Յովհաննէս Ե.
 Դրասխանակերտցի, 23
 Յովհաննէս Է., 113
 Յովհաննէս Չորեցի, 121

Յովհաննէս Թումանեան, 10
 Յովհաննէս Էպիս. (Մշոյ Ս. Կարապետի վանահայր), 59
 Յովսէփ Էմին, 7, 62
 Յովսէփ Ա. Վայոցձորեցի, 73
Ն.
 Ն. Ակինեան, 60, 102
 Նաւասարդ, 116
 Ներսէս Ակինեան, 47
 Ներսէս Եպիսկոպոս, 66, 109
Շ.
 Շահապիվանի եկեղեցական ժողով, 73
 Շահում խաթուն, 108
 Շարաֆ բէկ, 59
Ո.
 Ուզուն Հասան, 93-98
Չ.
 Չինգիզխան, 30
Պ.
 Պապ Արշակունի (թագաւոր), 99
 Պետրոս Յովհաննէսեան, 100, 128
Ջ.
 Ջահանշահ (Սուլթան), 4-5, 33, 35, 42-44, 46-54, 56, 59-64, 74-76, 80-82, 90, 95-98, 103, 111, 116, 124
 Ջիովան Մարիա Անջիոլելլո, 118
Ռ.
 Ռուբէն Տէր-Մինասեան, 51, 105
 Ռումանոս Դիոգենէս (կայսր), 71

Ռուսա, Ռուսաս (թագաւոր), 10, 13, 121
Ս.
 Ս. Գեորգ վանք (Լիմ կղզի)
 Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը
 Ս. Խաչ եկեղեցի
 Ս. Հոփսիմէ եկեղեցի,
 Սամուէլ Անեցի,
 Սասանեան կայսրութիւն, 73
 Սարգիս Գ. Մյուսա, 116
 Սարդուր (թագաւոր), 10
 Սենեքերիմ Արծրունի, 26
 Սեֆեան պետութիւն, 117-118
 Սեֆեդին իշխան, 29-30
 Սինխարիք (թագաւոր), 11
 Սմբատ Արծրունի, Սմբատ Արծրուն Սեֆեդինեան, 2, 4-7, 15, 22, 30, 36, 40, 60, 63-69, 74, 84-87, 91, 97, 102, 107, 109, 120
 Ստեփանոս Դ. Տղայ, 4, 61-64, 68, 70, 78, 90, 98, 102, 109, 113-114
 Ստեփանոս Ե. Սալմաստեցի, 119
 Ստեփան Մնացականեան, 20
 Ստեփանոս Ալուզ, 29
 Սփիւրք, 19
Վ.
 Վասակ Միւնի (մարզպան), 73
 Վարազդատ Արշակունի (թագաւոր), 99
 Վրէժ Վարդանեան, 3, 38, 62, 74, 97, 108, 114, 116, 118
 Վրթանէս (եպիսկոպոս), 112, 113

Տ.
 Տրդատ (թագաւոր), 55, 111
 Տիրան Արշակունի, 13
Դ.
 Դաֆֆի, 24, 94, 124
Փ.
 Փիլարտոս Վարաժնունի, 71, 72
 Փիլիպոս Ա. (կաթողիկոս), 89
 Փիրի Բէկ, 49
 Փիր-Բուդաղ, 54
 Փինիկ, 103
 Փրկիչը, 38, 66-67, 88
Օ.
 Օսմանեան Կայսրութիւն, 80, 117, 121

Ա.

Ալեքսանդրիա, 32
Ախվանց, Ախավանք (գիւղ), 43, 84
Աղբակ (գաւառ), 15, 18
Աղթամար, 10-14, 18-23, 26-30, 34-51, 54-58, 61-63, 66-93, 96-121, 123-125
Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, 12, 18-19, 23
Աղձնիք, 19, 31, 76
Ամիդ, 32, 99
Ամյուկ, Ամիւկ (բերդ), 26
Այիդուս (կղզի), 11
Անթիաս, 50
Անիի կաթողիկէ եկեղեցի, 19
Անտիոք, 71
Ասորեստան, 18
Ասորիք, 13
Ատրպատական, 32, 48, 94, 97
Արագածոտն, 37
Արարատեան դաշտ, 34, 54, 76-77, 105
Արգիշտիխինիլի, 10
Արեւելեան Հայաստան, 119, 121
Արեւմտեան Հայաստան, 2, 8, 80, 104, 119, 121
Արճակ, 15
Արճակ լիճ, 15
Արմենիկ (քաղաք), 8, 69, 83-84, 87, 92, 100, 118, 123, 125
Արցախ, 17, 51-52, 80, 118, 121
Աֆղանստան, 30

Բ.

Բագվան, 55
Բաղէշ (Բիթլիս), 52-53, 59, 81
Բաղդադ, 30, 32, 41
Բայազետ, 55
Բոնաշէն (գիւղ), 88
Գ.
Գանձասարի վանք, 19
Գառնիի տաճար, 19
Գավաշ, 43
Գեղարդի վանք, 19
Դ.
Դիարբեքիր, 32
Դուին, 14, 23
Ե.
Եդեսիա (Ուրֆա), 71
Երեւան, 34, 36, 48, 56, 76-77, 93, 101, 127
Երզնկայ, 32
Երուսաղէմ, 80
Եւրոպա, 92, 117, 119-120
Զ.
Զէյթուն, 37
Զուարթնոց եկեղեցի, 19
Զօրադիր եկեղեցի, 18
Է.
Ս. Էջմիածին, Էջմիածին, 4-5, 33-35, 46, 48, 50, 54, 56, 67, 77-78, 89-90, 112-113, 116, 119-121
Թ.
Թավրիզ, 30, 45-47, 93, 95, 118
Թիմար (գաւառ), 15, 26

Ի.

Իրան, 30
Իրաք, 32, 97
Լ.
Լիւմ, 7, 9, 82, 108, 121-122

Խ.

Խաչէն, 37
Խիզան, 96, 114
Խլաթ, 41, 52, 82
Խոյ, 42-43
Խուրթ, 37, 52

Օ.

Օաղկոտն գաւառ, 73
Օամնդավ, 1, 27, 72
Օոփք, 31

Վ.

Վ. Պոլիս, 79
Վախէթ, 80
Վահիրէ, 32
Վարս, 12, 18, 27
Վիլիկիա, 27, 33-34, 46, 123, 128
Վոտում (գիւղ), 19
Վովկաս, 121

Հ.

Հաղամակերտ, 15
Հաղբատի վանք, 19
Հայկական լեռնաշխարհ, 64, 80, 129
Հայկական Տաւրոս, 12
Հարաւային Հայաստան, 17, 30, 114-115, 117
Հիւսիսային Հայաստան, 22
Հոռն, 33-34

Ձ.

Ձորավանք, 27

Մ.

Մարաշ, 71
Մասիս, 105
Մենուախինիլի, 10
Միջագետք, 22, 30, 129
Միջին Ասիա, 31
Միջին Արեւելք, 46
Մշոյ դաշտ, 95
Մշոյ Սուրբ Կարապետ, 59
Մոկս, Մոկք, 31, 114
Մոնաքօ, 83
Մուշ, 52, 59
Յ.
Յովհաննավանք (գիւղ), 89
Ն.
Նախիջեւան, 93, 112-113
Նարեկ (գիւղ), 13
Նարեկայ վանք, 13
Նեմրութ, 11
Շ.
Շահապիվան, 73
Շահբունոց, 112
Շատախ, 37
Շատվան (գիւղ), 62
Շիրազ, 54
Ո.
Ոստան, 18, 41, 57, 80, 95, 114, 116
Ուրարտու, Ուրաշտու, 10, 11-13
Պ.
Պաղեստին, 13
Պարսկաստան, 1, 22, 42, 54, 73, 97, 117
Պուրսա, 80
Ջ.

Ջուղա, 112-113

Ռ.

Ռշտունիք (գաւառ), 12-13

Ռուսախինիլի, 10

Ս.

Սամցխի, 80

Սանջախ, 95

Սասուն, 31, 37, 52

Սարդուրիխուդան, 10

Սեբաստիա, 25

Սիոն, 39

Սինիք, 18, 37, 76, 80, 121

Սիս, 34, 36

Սուրիա, 14

Վ.

Վաթիքան, 83

Վաղարշապատ, 34

Վայոց Ձոր, 37

Վան, 12, 18, 56, 76-77, 80, 93, 105-106

Վանայ լիճ, 2, 7, 9, 14, 18-22, 25-26, 32, 44, 82, 99, 117, 121, 125

Վասպուրական, 7, 12, 15-18, 22, 24-26, 29-30, 35-39, 42-44, 49-51, 57, 61-63, 66-72, 77-79, 87, 94, 97, 99

Վարազայ լեռ, 18

Վենետիկ, 65, 83, 86-88, 112, 117-118

Վրաստան, 48

Տ.

Տաթոն, 31

Տուրուբերան, 31

Տոսպ, 12, 105-106

Փ.

Փասավանք (գիւղ), 88

Ք.

Քարթլի, 40

Քաջբերունք, 31

Քերման, 54

Քիւրտիստան, 32

Օ.

Օծոպ (գիւղ), 112

ՑԵՂԵՐ, ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ

Ա.

Ակ-Կոյունլուներ, 31, 76, 80, 91, 93-99, 115-118, 124

Արաբներ, 14, 20

Արծրունիներ, 12, 14-17, 22-26, 28, 38, 98, 104, 115

Արշակունիներ, 24, 46, 104

Բ.

Բագրատունիներ

Բիզանդացիներ

Զ.

Զուարիկ (արաբական ցեղ), 19

Թ.

Թուրքմեններ, 31-32, 43, 127

Կ.

Կարա-Կոյունլուներ, 5, 30-33, 36, 42, 46, 53, 60, 69, 74-76, 80-81, 91, 93-94, 96, 98, 104, 115, 124

Հ.

Հայեր, 32, 45, 51, 74-75, 105, 113, 115, 124

Հասան-Ջալալեաններ, 38, 80

Մ.

Մամիկոնեաններ, 16

Ն.

Նայիրեան, 15

Պ.

Պոռշեաններ, 38, 90, 93

Ջ.

Ջելաիրեաններ, 32

Ռ.

Ռշտունիներ, 4, 12-14

Ռոմակի, 43

Ս.

Սասանեաններ, 14

Սելջուկներ, 25-26, 28-29, 45, 72

Սելջուկ-թուրքեր, 27

Սեֆեաններ (Սաֆաուիներ), 117

Սեֆեդիեաններ, 39-40

Վ.

Վրացիներ, 32

Ք.


Քիւրտեր, քրդեր, 43, 116

Օ.

Օսմանցի թուրքեր, 79, 93, 99, 124


Օրբելեաններ, 38, 80

ԳՐԱՑՈՒՑԱԿ ԹԻՒ 1




Գծացուցակ Թիւ 1-ի մէջ կարելի է տեսնել կապույտ գոյնով մեզ հետաքրքրող պատմաշրջանի իսկական երեք թագավորութիւնները: Կարմիր գոյնով թուրքմենական իրարայաջորդ երկու պետութիւններու ժամանակաշրջանները: Ու վերջապէս Աղթամարի Արծրունեաց թագավորութեան պատմաշրջանը:

ԳԾԱՅՈՒՑԱԿ ԹԻՒ 2




Գծացուցակ Թիւ 2-ի մէջ կարելի է տեսնել կապոյտ գոյնով Աղթամարի Արծրունեաց թագաւոր Սմբատ Արծրունիի տարիները եւ իրեն ժամանակակիցները: Կանաչ գոյնով կարելի է տեսնել մեր ուսումնասիրած նիւթի մասին կարելորդ հայ պատմիչներուն ապրած տարիները եւ անոնց հռչակաւոր պատմական գործերը:

ԳԾԱՑՈՒՑԱԿ ԹԻՒ 3



Գծացուցակ Թիւ 3-ի մէջ կարելի է տեսնել կապոյտ գոյնով հայկական թագաւորութիւններուն արնչուած կարեւոր թուականները. եւ նարնջագոյնով կաթողիկոսական աթոռներու հետ արնչուած կարեւոր թուականները:

ԳԾԱՑՈՒՑԱԿ ԹԻՒ 4



Գծացուցակ Թիւ 4-ի մէջ կարելի է տեսնել կապոյտ գոյնով Սմբատ Արծրունիի թագաւորած 7 տարիները, որոնք կը բաժանուին երեք մասի, եւ նշուած՝ կապոյտ գոյնի երանքներով: Նաեւ կարելի է տեսնել Զահանշահ սուլթանի թագաւորած տարիները. եւ Զաքարիա Գ. եւ Ստեփանոս Դ. կաթողիկոսներու գահակալած տարիները:

Պետրոս Մոսվսէս Թովմասեան

ԱՂԹԱՄԱՐԻ ԹԱԳԱԻՈՐԸ՝
ՍՄԲԱՏ ԱՐԾՐՈՒՆԻ – ՍԵՖԵՂԻՆԵԱՆ
(1465-1471)
ՀԱՅՈՑ ՎԵՐՋԻՆ ԱՐՔԱՅ

Գիտական խմբագրութիւն՝	Վ. Վարդանեան
Լեզուական սրբագրութիւն՝	Ս. Աւագեան
Հրատարակչութեան տնօրէն՝	Լ. Մուրադեան
Ցուցակներու համակարգչային մշակում՝	Պ. Թովմասեան
Քարտէզների հեղինակ՝	Գ. Բաղալեան
Քարտէզագիր՝	Ս. Մարտիրոսեան
Համակարգչային շարուածքն ու ձեւաւորում	Ա. Ղազարեան

Կողքի օծման պատկերը նկարիչ Կարապետ Ծաղկողի աշխատանքն է- Հ.Հ. Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագիր թիւ 5702, էջ 212բ.

Հեղինակի Ի-հասցէն mhbt2010@gmail.com
Տպաքանակը՝ 400 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երեւան, Մարշալ Բաղրամեան պող. 24/4
RA, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>

9(47.925)
 77-79
 42

